



Ա. ՏԱՐԻ 1962

Յ Ո Ի Լ Ի Ս

7

# پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
مدير المسؤول  
السيد ارتين كارتيك قزانجيان

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

# Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐԳՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՁ ԽՄԱԳԻՐ

Վ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԱԳԻՐՆԵՐ

ԵԳ. ՊՅՅԱՅԵԱՆ, Պ. ՄՆԱՊԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԳԱՄՆԵՐ

Յ. ԳԵՂԱՐԳ

Յ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Վ. ՅԵԱԿԱՆ

## ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Պ. ՄՆԱՊԵԱՆ

ՀՐԱԶ ԳԱԶԱՐԵՆՑ

ԳՈՒՏՑԻ Պ. ՄԻՔԱՑԵԼԵԱՆ

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Ռ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՐՇԻ

ԱՆԱՅԻՍ ՀԵՐԱՆ

ՎԱՐԻԱՆ ԳԵՈՐԳԵԱՆ (Վ. Գ.)

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԵԻ. ՊՈՅԱՅԵԱՆ

Վ. ՀԵՐԵԱՆ

Մ. Զ.

Յ. ԳԵՂԱՐԳ

Բ. ԹԱՇԵԱՆ

# Բազմ

## ԱՆՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ա. ՅԱՐԻ, ԹԻՒՂ

Ե. Ա. Ի. Ի. Ս 1963

ՊԵՏՐՈՒԹ

### ԶՐՈՅՑ՝ ՆԱԻՈՒՆ ՎՐԱՅ

ԳՐԵՑ՝ Պ. ԱՆԱՊԵԱՆ

Կանգնած էր մօտս, երբորդ կարգի ճամբորդներուն կամրջակին վրայ, ու կը դիտէր հրաժեշտ առնողներու ու հըրածեշտ տուողներու թատերական շարժումները: Բարձրահասակ, ամուր կազմըւած քով ու մարդու հետ շխտելու ուրուում տուած անձ մը, որ կարծես քարաի խոնուած բազմութեան մէջ մտերիմ ու ծանօթ բնաւ չունէր: Իր առանձնութիւնը համակրանք մը ստեղծեց մէջս ու սկիսայ մօտէն քննել զինք:

Ուռովք մը կը թաւալէր աչքերուն խորքը, ու դէմքին գիծերը գիմացիկին վստահութիւն ներշնչելու նախասահմանումով մը դժուած ըլլային կարծես: Հետաքրքրական անձեր չէին պակսեր նաւուն մէջ, բայց ակնարկս, ի վերջոյ, իր վրայ կանգ առաւ: Հայ է, կ'ըսէի իւրովի, հայ է կամ իմ հոգիիս շատ մօտիկ օտար մը, հպարտ, կուշտ, ինքնալստահ

երեւոյթով, հայ է կամ օտար մը, զոր կրնամ սիրել:

Ժամանակ մը կորսնցուցի հետքը: Ու երբ լուսայորդ ու չքնաղ մեր քաղաքը հեռոյճեան կը լուծուէր մեր նայուածքին դիմաց՝ կրկին երեւցաւ կամրջակին վրայ: Կռթնեցաւ բազրիքին, նայեցաւ անհետացող քաղաքին, ծովուն, հեռուններուն ու քաշուեցաւ ետ, նոր ուցնցող մտածումէ այցուած եւ անոր ձեւաւորման համար տաղնապող մէկու մը տպաւորութիւնը ձգելով հտին:

Ամերիկացի երիտասարդի մը եւ իրեն ընկերացող երեք աղջիկներու հետ՝ իրմէ քիչ մը անդին կեցած, մեր կարգին կը դիտէինք քաղաքը ու կը խօսէինք լիբանանի մասին: Գիրքս լաւ էր ու միջնորդողը զուարթ: Հետք խօսելու ցանկութիւնը զօրաւոր չէր մէջս այդ պահուն: Զհետապնդեցի զինք: Սպասեցի

յետոյ, որ մէջտեղ ելլէ: Ի դուր: Կոր-  
սընցուցի հետքը: Տխրեցայ ատոր հա-  
մար:

Գիշերը յուսալանալէ ետք, ճամ-  
բորդները կամաց կամաց շաշուեցան ի-  
րենց զապրիները: Կամբջակին վրայ մը-  
նացած էին քանի մը նաւաստիներ, ու  
Պառիմ մէջ ես եւ սպասակները: Զո՞ս  
ալ, ըսի ինքնիրենս, ու խնդուք մը եկաւ  
վրաս: Պէյրութի մէջ կիրարկած կեն-  
ցազու կը շարունակուէր նաւուն վրայ:  
Ինչ գիտնամ: Մինչև առջեւ մարդ չընա-  
նայ, իմ քունս չի գար, մինչև որ ըս-  
պասակներուն հետ առանձին շմամ,  
տունս չեմ յիշեր: Մտաբերեցի նախորդ  
գիշերուան, առջի գիշերուան, տարիներ  
ու կեանքս ու ելայ տղի: Քանի մը  
քայլ՝ ու դարձանքով նկատեցի, որ քա-  
ռակուսի ու լայնածաւալ սիւնին միւս  
կողմը, նոյն մարդը, ինքզինք թիկնա-  
թոռի մը վրայ նստած, ձեռն ի ծնօս՝  
կը մտածէր: Մտեցայ իրեն ու սիրտս  
ուրախութենէն վեր ցատկեց, երբ իր  
սեղանին նետուած գոց գիրքին վրայ  
կարդացի «Շիրակ» խորագիրը: Բարե-  
ւեցի գինք: Օտար վայրերու մէջ արե-  
նակիրներու հանդիպումէն առաջացած  
յանկարծական խանդավառութիւնը շտե-  
ւայ մէջը: Կարծես քաղաքավարութեան  
համար փորձեց ժպտիլ: Կարծես քաղա-  
քավարութեան համար աթոռ ցոյց տը-  
ւաւ: Պատիկ յուսախարութիւն մը կրեցի  
իրմէ: Օտարութեան մէջ հայ գիրքը ի-  
րեն հետ պտտեցնելու անհրաժեշտութիւ-  
նը զգացող մարդէն քիչ մը աւելի ջեր-  
մութիւն կը սպասէի:

- Կը թուի, թէ Հայաստանի գրա-  
կանութեան կը հետեւիք, ըսի խօսակ-  
ցութիւն մը սկսելու ցանկութեամբ:
- Մովսէ վրայ, ըսաւ կարուկ:
- Մովսէ վրայ:
- Կամ օդին մէջ:
- Ժպիտով մը հասկցուցի թէ բացատ-  
րութեան պէտք ունիմ:
- Ճամբորդութիւններու ընթացքին,  
աւելցուց յօնքերը վեր վերցնելով:
- Կը նշանակէ, թէ սոցիալիստական

մշակիցով գրուած գիրքերուն համար  
օղային ու շարժական ընթերցարաններ  
կազմած էք, ըսի խնդալով:

- Ճիշդ գտար բառերը:
- Բայց...
- Բայց ի՞նչ, ըսաւ յարձակողական  
ոճով մը, ու ձեռքերը կուրծքին խաշա-  
ձեւելով ու սեկարէթ մը ծամելով շա-  
րունակեց, - եթէ կարծիքներս կը վի-  
րաւորեն դիրազգածութիւնդ, իմացուր:  
Ես չեմ սիրեր փխրուն խանուածքով  
մարդոց հետ գործ ունենալ:


Շփոթահար՝ դէմքին նայեցայ:  
- Այո՛, կը սպասեմ ճշդումիդ, յա-  
րեց հեղանակով:  
- Կարծուածին շփ փխրուն չեմ,  
ըսի:

- Հա՛ւ: Ո՛ւր կ'ուզես ուրեմն, որ  
կարդանք այս գիրքերը, վերջին քառաս-  
նամեակի անցուդարձերէն իրենց նիւթե-  
րը վերցուցած այս թշուառամիտ կու-  
տակումները: Մանրուք բաներու վրայ  
բանելու ի՞նչ ժամավանառութիւն է ա-  
սիկա, ժամանակաւոր տրամադրութիւն-  
ներ ջնարակելու ի՞նչ ապարդիւն հեշ-  
տանք:

-Շատ խիստ չե՞ն ձեր դատումները,  
հարցուցի մեզմ:

Չպատասխանեց: Նայեցաւ աչքե-  
րուս, ու դժգոհութեամբ գլուխը միւս  
կողմ դարձուց: Պահ մը ետք, չոր շեշ-  
տով մը հրամայեց.

- Խօսէ՛ քիչ մը դուն քու մասիդ:
- Ի՞նչ խօսիմ:
- Պատիկ ծանօթութիւն մը տուր  
անձիդ, պաշտօնիդ, կեցուածքներուդ  
մասին:
- Հարցումիս պատասխանելու հա-  
մար շատ կարեւոր են ատենք:
- Հարցումիդ պատասխանելու սիրտ  
չունիմ: Ձիս հետաքրքրողը ուրիշ բան  
է: Հայերէն լաւ կը խօսիք: Գրող կամ  
ուսուցիչ էք:
- «Ինչ գիշերում» ըսի մտքէս ու պա-  
տասխան մը կը պատրաստէի, երբ կըրկ-  
նեց.
- Գրող կամ ուսուցիչ էք:



145-2000

- Ո՛ւլ, ո՛ւլ, ըսի արագ, պարզապէս  
ուպագրական գործով կը դրադիմ եւ յ  
պաշտօնէ գործ ունիմ մեր գրողներուն,  
խմբագիրներուն եւ անհասարակ հայե-  
րէն խօսողներուն հետ: Յետոյ՝ կը սի-  
րեմ ընթերցումը:

- Անո՞նք:  
- Պետրոս, ըսի մեքենարար, Պեա-  
րոս Պարթևեան:

Ակաւ յիշողութիւնը պրպակել:  
- Իսկ ձեր մասին, ըսի արագ, նոր  
հարցում մը ընելու առիթէն զրկելու  
համար զի՞նք:

- Հը՛, իմ մասի՛ս: Լա՛ւ: Կը կոչ-  
ուիմ ներսէս Խաննան:

- Պաշտօ՞նք:  
- Վազբ մը արկածախնդրութենէ  
արկածախնդրութիւն:

- Այսի՞նքն:  
- Հասած եմ մինչեւ ամերիկեան  
համալսարանը: Մէկ տարի ետք՝ չոր-  
րորդ կէտին մէջ պաշտօնեայ: Յետոյ  
Պահրէյն: Յետոյ Քուէյթ: Յետոյ ամուս-  
նութիւն: Ապա ամուսնալուծում: Յե-  
տայ Գերմանիա: Կրկին Պէյրութ: Ու  
հիմա Ափրիկէ կ'երթամ նոր բարտ  
փնտռելու:

- Այս բոլոր վերիվայրումներուն  
մէջ, կը զարմանամ, թէ ինչպէս կրցած  
էք ընթերցումներուն ժամանակ յատկա-  
ցընել:

- Կ'ուզեմ գիտնալ, թէ ի՞նչ կը մը-  
տածեն եւ ինչպէս կը մտածեն մերիկե-  
ները: Հօրս կողմէ փոխանցուած մուլու-  
թիւն:

- Քու կարգիդ գրական փորձեր կամ  
գրականութեան հաշտոյն բան մը ըրա՞ծ  
ես ընաւ:

- Այո՛:  
- Ի՞նչ:  
- Տաշուած եմ:  
- Ինչպէ՞ս:

- Գիտակցութեան ամբողջ շրջանին  
մտածած եմ, թէ ի՞նչ պիտի չգրեմ ու  
մագերս ճերմկեցան, բայց չեմ յաջողած  
տակաւին ճշդել չգրելիքս:

- Ուրիշներ իրենց գրելիքին...

- Մի՛ շարունակեր: Սկզբունքի հարց  
է: Ես հակառակ ուղղութենէն կը սի-  
րեմ մեկնել: Ես կը սարսափիմ մակա-  
բայտ տարրերէն ու կ'ատեմ միամիտ գե-  
ղամները:

- Ի՞նչ կը մտածես Սփիւռքի գրա-  
կանութեան մասին:

- Այն՛ ինչ որ կը մտածեմ Սփիւռ-  
քի ժողովուրդին մասին:

- Աւելի՞ պարզ:

- Մասնատուած ժողովուրդ մը, որ  
ունի մասնատուած գրականութիւն մը,  
տարբեր ոգիի, կեցուածքի, աշխարհա-  
հայեացքի բացայայտ կնիքներով:

- Ըսել կ'ուզես տարբեր նկարագիր-  
ներով սփռուած չորս հինգ տարբեր գը-  
ականութիւննե՞ր ունինք:

- Այո:

- Ի՞նչ կարծիք կազմած ես անոնց  
մասին:

- Մասնաւոր սչինչ: Միայն թէ կը  
բաժնեմ անոնց մասին ընդհանրացած  
տեսակէտները:

- Թե՞:

- Ռամկավարներու գրականութեան  
կը պակսի ստեղծագործ կերքը: Հնչակ-  
եաններուն՝ լրջութիւնը, Իսախանյան-  
ներուն՝ հաւաքական աշխատանքը: Հա-  
մայնաբաններուն՝ համոզումին երաշխի-  
քը, իսկ չէզոքներու գրականութենէն կը  
յորդի իմացական որձեւէզութիւնը:

- Վերջացա՞ւ:

- Եթէ կ'ուզես:


- Օրինակներ ու մանրամասնու-  
թիւններ ունի՞ս:

- Օրինակներն ու մանրամասնու-  
թիւնները վարժապետներէն կրնաս պա-  
հանջել: Ես կը սիրեմ կերակացութիւն-  
ներս հաղորդել: Կ'ընդունի՞ս: Լա՛ւ:  
Ձե՞ս ընդունիր: Դարձեալ լաւ:

Վասնց նոր սիկարէթ մը ու լոկց:  
Անհանգիստ շարժում մը ըրաւ: Երկար  
չնշտութեամբ մը լեցուց իր լախ թո-  
քը: Հառաչելով պարպեց թռեքը: Աչ-  
քերուն մէջ լեցուած խոտիքը աւելի տե-  
սանելի դարձաւ:

Սիրեցի այդ մարդը: Համոզումով

298-64



կ'արտասանէր իր բառերը: Իր տեսա-  
 կէտներուն համար կոռուիլ գիտէր: Սի-  
 րեցի աչք մարդը: Կարգացած էր ու  
 կարգացածին մասին մտածած: Մեր գը-  
 րականութեան մասին իր ունեցած լայն  
 տեղեկութիւնը զուարթութեամբ կը լե-  
 ցընէր զիս ու իր մտածումներուն խըս-  
 տութիւնը հաճոյք կը պատճառէր ինծի:

- Եթէ, ըսի պահ մը ետք, քու թը-  
 ւած պահանջերը հրաշքով մը դարձան-  
 ուի՞ն, այն ատեն, կը խորհիս թէ Սփիւռ-  
 չի գրականութիւնը ծագկեալ չըջանի՞  
 մը կը թեւակոխէ:

- Թեքեա: Վստահ չեմ: Յետոյ՝ ես  
 չաւարտեցի թերութիւններուն թուումը  
 եւ երկրորդ՝ մէկ խումբին առաւելու-  
 թիւնը ճակատագրականօրէն կը պահպի  
 միւսին:

- Մանրամասնելով:

- Մէկ հատուածը ամուր ոգի մը  
 ունի, միւսը համալուստան, երրորդ  
 խումբը, օ՛, երրորդ խումբը, կը տես-  
 նես որ նորէն հասանք պակասներուն,  
 երրորդ խումբը գրական ոչ մէկ ենթա-  
 հող ունի: Համայնաժամանակը՝ տարբեր  
 կլիմաներու տակ բարձրացած ձայնե-  
 րուն արձագանգ դառնալու յուսահա-  
 տական ենթակայութիւն մը ունին  
 միայն, իսկ չէզոքները ներքին երկընտ-  
 րանք մը, որ բնաւ ձեռնառու չէ գրակա-  
 կանութեան:

- Անթերի յաջողութեամբ բնա՞ւ  
 չունի Սփիւռքը:

- Քանի մը վէպ: Մէկ երկու տաս-  
 նեակ պատմութեան, շարք մը անկործա-  
 նելի արձակ էջեր ու տասնեակ մը բա-  
 նաստեղծներու գործերէն կազմուած հա-  
 տոր մը այլազան բանաստեղծութիւն:  
 Բայց ես շահուածին մասին չեմ խօսիր:  
 Մեր կարելիութիւնները խորտակող  
 պատճառները կը վերաւորեն գիս: Անո-  
 ղոք քննարկումի մը պէտք ունի Սփիւռ-  
 չի գրականութիւնը, կազմակերպուած  
 արշաւանք մը պէտք է սարքել մակա-  
 բոյժ տրամադրութիւններու ու մակա-  
 բոյժներուն դէմ ու նոր ցնցումի մը են-  
 թարկել տաղանդաւորները:

- Ո՞ւր, ըսի, երբ զիրքը առած կը  
 պատրաստուէր մեկնելու:

- Հարցումներդ չվերջացան:

- Մէկ հատ մնաց:

- Ի՞նչ:

- Մեր մամուլը:

- Հա՛, մեր մամուլը, ըսաւ ձայ-  
 նը երկարելով: Գերմանիա երթալէս  
 ասդին, շուրջ երկու տարի լուր չունիմ  
 մեր մամուլէն:

- Առա՞ջ:

- Օրաթերթիւն՝ ժամանակին հա-  
 ճոյքով կը կարդայի «Յուսարհր»ը:  
 Միւսներէն ոմանք ես չէի կարդար, ո-  
 մանք կարդացուելու արժանի ոչինչ կը  
 հայթայթէին:

- Շարաթաթերթի՞րը:

- Շարաթաթերթի՞ր ալ ունինք:

- Անշուշտ թէ ունինք: Մանօթ չե՞ս:  
 Պէյրութի մէջ միայն երեք չորս հատ  
 ունինք, «Մասիս»ը, «Նախըրն», «ԸՄ-  
 փիւռք»ը:

- Ո՞րն էր առաջինը, հարցուց դէմ-  
 քը աւելի մտեցնելով ինծի:

- «Մասիս»ը:

- Օ՛, «Մասիս»ը, մոռցեր եմ, ինչ-  
 պէս մոռցեր եմ բոլոր աղօթքներս, «Մա-  
 սիս»ը, սրբուհի Մարիամ մայր Աստու-  
 ծոյ...:

Ձեռքերը վեր բարձրացուցած ինք կը  
 շարունակէր աղօթքը, ես՝ կը խնդայի:

- «Նախըրն», շարունակեցի, ինք-  
 զինքս զսպելով:

- Գացի, տեսայ, խոնարհեցայ:

- Այդքա՞ն:

- Մեր կրօնական պաշտօնաթերթե-  
 րէն ամէնէն աշխուժ, հակառակ որ  
 խմբագիրը համեստ հակումներով աշ-  
 խարհիկ մարդ մը կը հաշուելուի:

- «Սփիւռք»ը:

- Լաւ ընտրած է իր անունը:

- Ի՞նչ կը մտածես «Հայրենիք» ամ-  
 սազրի մասին:

- Գործ մը տեսաւ:

- «Ակօ»սը:

- Հին տունկեր եւ օտար ծաղիկներ

տեսանք, բայց նոր ծիւրեր չբուսան հոն:

- «Շիրա՞կ»ը:
- Գրական գաղտնի ցանցի մը անշահ ու անվնաս մէկ գործունէութիւնը:
- «Անդաստան»ը կը կարգա՞ս:

- Լաւ Հանդէս է: Բայց պալատական մեկուսի ձեռնարկի մը տպաւորութիւնը կը մսկ: Պնդողներ կան, որ դըրականութիւնը ժողովուրդով կ'ապրի: Ես կը հաւատամ այդ տեսակէտին:

- Իսկ «Չուարթնո՞ց»ը:
- Կը փնտռեմ իր Հին Հմայքը:
- Պէյրութի մէջ «Բազին» անունով նոր ամսաթերթ մը սկսաւ լոյս տեսնել: Ատի՛թ ունեցա՞ր աչքէ անցընելու:

- Ոչ տակաւին: Եթէ Ափրիկէի մէջ Հասցէ մը յաջողիմ ունենալ, բարեկամիս միջոցաւ պիտի ունենամ բոլոր նոր Հրատարակութիւնները:

- Լռեցի:
- Աւարտեցա՞ւ Հաւատաքննիչի պաշտօնդ, Հարցուց Տպագրիչը:

Խնդացի:

Ելանք դուրս: Պահ մը դանդաղեցանք ծովուն անպարագիծ զեղեցիութեան դիմաց: Ամենուրեք ծով, նաւը՝ ծովուն վրայ թաւալուն քաղաք մը, ու քաղաքին վրայ մենք երկուքս միայն արթուն: Ես՝ տպարանատէրի ծպտուած Հանդամանդով, ինք՝ պաշտօնեայ մը, որ ծովէն աւելի մեծ տարածութեան մը վրայ փտուած Հայ գրականութեան մասին կը պոռար իր յանդուգն մտածումները:

Նոր Հարցում չունէի: Չունէի խոսելու ախորժակ, բայց չէի ուզեր բաժնուիլ իրմէ: Քուն չունէի: Կը թուէր, թէ քուն չունէր նաեւ ինք: Լուռ էի, լուռ էր, կ'աղմկէր միայն ծովը եւ արիւթներուն մէջէն ուրիշ աղմուկ մը կ'ելլէր կարծես ու չփոթ գրացումներ կը յուզէր ներսս:

- Երիտասարդ, ըսաւ յանկարծ, ուշադրութիւն կ'ընէ՞ս, թէ նաւը ի՞նչ

հեշտութեամբ կը սահի ծովուն վրայ:

- Կ'ընեմ, ըսի տխուր:
- Այս նաւը մեր նաւուն մասին բան մը չ'ըսե՞ր քեզի:
- Ո՞ր նաւուն:
- Այն նաւուն, որ «Լէբան վրայ» կը գտնուի:

Այիքներուն մէջէն ուրիշ աղմուկ մը կ'ելլէր, ու աղմուկին ստեղծած յուզումը սիրտ չէր ձգած մտածելու, խօսելու:

- Մեր նաւը, ըսաւ, մեր սիրալի, անխորտակելի նաւը, որ ապաստաններուն դէմ կը կռուի ու լեռները ճեղքելով կ'ընթանայ, առանձինն, վիրաւոր, յամառ, յուսալատ:

Երկար լուռութիւն:

- Հո՞ս ես, ըսի, երբ լուռութիւնը ըստու նեղացուցիչ դառնալ:
- Այո՛, նաւուն վրայ:
- Անշուշտ մեր նաւուն:
- Մի՞շտ:
- Ի՞նչ բանի մասին կը մտածէիր:
- Մեր նաւաստիներուն ընծայելիք յարգանքիս:

- Նաւաստիներո՞ւն:

- Բանաստեղծներուն, գրագէտներուն, խմբագիրներուն: Որքան ալ քիչ սիրենք զիրենք ու շատ բամբասենք, չհաւանք, արհամարհենք, դորձեալ անոնք են, որ կը պահեն նաւը, ընթացք կու տան անոր: Այլ Հիմա ժայռերը աւելի կարծրացած են, ալիքները աւելի կատաղի ու նաւաստիները յոգնած: Թարմ շունչի պէտք ունինք, երիտասարդ մկաններու: Պէտք չէ կանգ առնէ մեր նաւը, ու պէտք է շարժի արագ, երիտասարդ, պէտք է շարժի:

Ըսաւ ու արագ բաժնուեցաւ ինձմէ: Յաջորդ օր Աղեքսանդրիոյ քարափը, նաւուն աստիճաններէն վար իջած աստիճանի պէտքայ իրեն: Պոռացի ետեւէն: Նայեցաւ ինձի ու ձեռքը օդին մէջ երերցնելէն մտաւ բազմութեան մէջ:

ՄԱՏԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ

## Կ Ա Ր Օ Տ

Կարօքսս մեծ է,  
 Մեծ է առեկի՝  
 Քան Ռոպերդ Պրոնսի կարօ՛քը այրող.  
 Քերթողն անուանի, Բրիսանացի,  
 Մընընդավայրէն հեռացեր էր, ո՛հ,  
 Պահի՛կ մը միայն.  
 Եւ մէկ նահանգէն՝ ան գացած էր գո՛հ՝  
 Նահանգ մը ուրիշ.  
 Ան Սկովսիայէն եկած էր Անգլիա,  
 Լեռնէն դէպի ծով,  
 Եւ արձակած էր Ե՛րզը նըծդենի՝  
 Եզրէ՛ն ջուրերուն  
 Մինչեւ լեռներուն կասա՛րն ամենի.  
 Հայրենիքն ամբո՛ղջ  
 Զգացած էր լուռ՝  
 Յուզո՛ւմ մը խորունկ,  
 Անսով ո՛ր սարսուռ:

\* \* \*

Մընընդավայրէս  
 Հեռացեր եմ ես՝  
 Դարերէ՛ ի վեր.  
 Տարօնէն իջած՝ մինչեւ Մարմարա.  
 Երկրէ՛ մը գացած երկի՛ր մը ուրիշ,  
 Դըծգո՛հ, ակամայ.  
 Ո՛հ, Արեւելէն մինչեւ Արեւմուտ,  
 Ծովերէն անդին, լեռներէն անդին.  
 Նահասակներս իմ՝ թողե՛ր եմ անթաղ,  
 Կու լամ պըզընձէ՛ գրուներուն ետեւ.  
 Երզրս կը հերկէ ալի՛քը կապոյտ  
 Հո՛ղը կը պատէ.  
 Լացը աստղերուն կը կաթի վըրաս,  
 Եւ աշխա՛րհն ամբողջ,  
 Կը զգայ յուզում մեծ,  
 Դո՛ղ արսասովօր:

ՀՐԱԶ ՔԱԶԱՐԵՆՑ



# ԵՒ ԲԵԿԵԿԱՅ...

ԳՈՒՏՑԻ Պ. ՄԻՔԱՑԵԼԵԱՆ

Հիւանդապահուհին ներս մտաւ փոքր ծրար մը ձեռքին:

— Հրամմեցէք, — ըսաւ Մատլէն, — հազիւ լսելի ձայնով մը, եւ անզգայարար գլուխը դարձուց ետեւ:

Հիւանդապահուհին ուղղուեցաւ հիւանդին սենեակը:

Սուրէն կը հեւար ու երբեմն կը հազար: Ինչքան դեղնած էր ու աչքերը փոքր ինկած էին:

● Մամա՛, ո՞վ է այս կինը, — ըսաւ փոքր հազէ մը ետք:

Հիւանդապահուհին չուզանք մօր պատասխանին, առաւ մանուկին ձեռքը արհարուն մէջ ու փախեցաւ:

— Ի՞նչ է սա դուռ, — հարցուց Սուրէն կրկին:

— Անունս Մարկօ է. ես ալ փոքրիկ աղջիկ մը ունիմ, քեզի պէս անուշիկ է. երբեք չի լար երբ ասեղ ընեմ: Հիւանդապահուհին հանեց դռնը արտփին մէջէն, եւ ներարկեց դեղը:

— Ենորհակալ եմ, — թոթովեց Սուրէն, սրբելով արցունքները. — տեսա՞ր թէ որքան քաջ եմ:

Տիկ. Մատլէն սրբեց փոքրիկին այտերը, ապա գլուխը դարձուց պատուհանին կողմը: Կուրծքը կը ճնշուէր զըսուած արցունքներէն: Կը փափաքէր լալ այդ վայրկեանին, թօթափելու համար քանի մը օրուան յոգնութիւնն ու անքնութիւնը:

— Ժամը վեցին կը վերադառնամ, — ըսաւ հիւանդապահուհին ու հեռացաւ մեղմիւ փակելով դուռը:

Մատլէն քալեց սենեակին երկայնքնի վար, քանի մը անգամ ակնարկը ձգելով մանուկին վրայ: Մութ մասծումներ կը կուտակուէին գլխուն մէջ, ու

մահուան դազափարը կը հալածէր զինք:

Սուրէն կը քնանար քառորդ ժամ ևտքը: Մատլէն չէր հաւատար աչքերուն. հիմա քրտինքը կը հոսէր մանուկին ճակտէն:

«Աստուած իմ, պիտի չմեռնի», խօսեցաւ ինքնիրեն: Վազեց ննջարան, խրեց գլուխը բարձին տակ ու հեկեկաց:

Մղձաւանջէ արթնցողի մը նման, ոտքի կանգնեցաւ եւ նայեցաւ մատենարուն: Զեռքը տարաւ շրջազգեստին զըրպանը, ապա խելակորոյս վազեց մանուկին մօտ: Վերմակը բացաւ ու աչքերը պտտեցուց անկողնին վրայ: «Հոս չէ» մտածեց, ու քայլերը ուղղեց խոհանոց: «Անկարելի բան է, հո՛ս ըլլալու է անպայման»: Պրպտեց շորս կողմը, բայց անօգուտ: Աղամանդէ ակոյժ մատանին կորսուած էր: Մտաւ ննջարան ու բացաւ գոհարեղէնի տուփը: Ափսոսանքով դիտեց կեղծ քարերով մատանիներն ու մանեակները, որոնց փայլը նուազ չէր կորսնցուցածէն: Պահ մը նստաւ թիկնաթոռի մը վրայ ու ջանաց միտքը ամփոփել: Երկու օր առաջ այցելութիւն տուած էր քրոջը. մատանին կը կրէր այդ օրը: Քոյրը սքանչացած էր իր նոր ստացած այդ նուէրին: Այո՛, ուզած էր իրմէ եւ մատին անցուցած: «Հրաշալի է, ըսած էր, սրբա՛ն թանկարժէք բան է սա փոքրիկ քարը»: Քոյրը երկար ատեն դիտած էր մատին անցուցած մատանին ու փայփայած աղամանդէ ակը:

Արդեօք վերադարձո՞ւց ինծի, մտածեց:

Չուզանք իր հարցումին պատասխանին. վազեց գէպի հեռաձայնը ու տրազ արագ դարձուց թիւերը:

- Սօնան է, խօսեցաւ քոյրը:  
Անակնկալի եկած, պահ մը ուզեց  
փակել Հեռաձայնին դիօը:  
- Սօնան է, - կրկնեց քոյրը:  
- Մատլէնն է, - կակազեց:  
- Ի՞նչ ունիս, Մատլէն, անհանդիմտ  
ես, ինչպէ՞ս է Սուրէնը... Բժիշկը ի՞նչ  
ըսաւ, - լսեց քոյր Հարցումները:  
- Սօնա՛, յուսամ լաւ եմ, ամէն ինչ  
լաւ է. դուն ինչպէ՞ս ես. - Հագիւ կըր-  
ցաւ պատասխանել ու սկսաւ հեկեկալ:  
- Մատլէ՛ն, Մատլէ՛ն, ի՞նչ ունիս,  
խօսէ՛, քեզի կ'ըսեմ, - լսեց քոյր ձայ-  
նը:  
- Սօնա՛, աչք մը պտտցուր, նայ՛  
թէ մատանիս ձեր տունը ձգած եմ:  
- Մատլէ՛ն, խելքդ գլուխդ հաւաքէ,  
չե՞ս յիշեր թէ քեզի վերադարձուցի-  
մատիդ անցուցիր եւ ըսիր, թէ Սեդրա-  
կին առաջին թանկարժէք նուէրն էր ա-  
մուսնութենէն ի վեր:  
- Կարծեմ թէ ըսի այդ խօսքերը.  
բայց վստահ ես որ առի քեզմէ:  
- Վստահ, ի՞նչ ըսել կ'ուզես,  
Մատլէն. այսինքն չվերադարձուցի՞ մա-  
տանիդ. այսինքն քո՞վս պահած եմ. խօ-  
սէ՛, ի՞նչ ըսել կ'ուզես:  
Մատլէն չկրցաւ պատասխանել. լե-  
զի համ մը բերնին մէջ շրջեցաւ. կոկոր-  
դը սկսաւ շորնալ ու չկրցաւ պատասխա-  
նել քոյրը:  
Սուրէնին հազը որ խեղդուկ հազ  
մըն էր, Հիմա յստակ կերպով կը լըս-  
ուէր: Մօտեցաւ զակին ու ձեռքը եր-  
կարեց: Սուրէն նստաւ անկողնին մէջ  
ու վերմակը քաշեց վրան: Մատլէն  
հրճուանքով լեցուեցաւ: Սուրէն կրնար  
շարժիլ այլևս անկողնին մէջ: Մատլէն  
նստեցաւ զակին մօտ, ապա անարկը  
նետեց պատուհանէն դուրս: Քիչ առաջ-  
ուան մոթ ամպերը կը վերածուէին անձ-  
րևի: Գաղափար մը յղացածի նման,  
մօտեցաւ պատուհանին: Կեցաւ քանի մը  
վայրկեան ու ետեւ դարձաւ: «Այո՛, ան-  
պայման ինքն է առնողը», խօսեցաւ  
ինքնիրեն:  
- Մայրի՛կ, ի՞նչ ունիս, Հարցուց

Սուրէն:  
- Տղա՛ս, վայրկեան մը երկնցիկը ան-  
կողնիդ մէջ:  
- Մայրի՛կ, ի՞նչ կ'ուզես ինձմէ.  
այսպէս, շատ հանդիստ եմ:  
- Քեզի՛ կ'ըսեմ, վայրկեան մը եր-  
կնցիկը:  
Սուրէն դրաւ գլուխը բարձին վը-  
բայ: Մատլէն մօտեցաւ, բացաւ վերմա-  
կը, գոցեց, ոտքի կանկնեցաւ, ապա՝  
«ժամը վեցին կը վերադառնամ» ըսաւ:  
- Մայրի՛կ, ո՞ւր կ'երթաս, Հարցուց  
Սուրէն, ջանալով ոտքի ելլել:  
- Ձագուկս, ո՛չ մէկ տեղ կ'երթամ.  
Հանդիմտ ըրէ:  
Ձղալին քայլերով ճեմեց ընդունա-  
բանին մէջ ու շանդրադարձաւ որ Սու-  
րէնին փոքրիկ քոթոթը կը հետեւէր քայ-  
լերուն:  
Մատները տարաւ բերնին, ապա  
ճակին, ու վազեց կրկին խոհանոց: Ա-  
րագ արագ վերցուց օշարակի սրուակ-  
ներն ու աչքը պտտցուց դարակին վրայ՝  
մատանին գտնելու յոյսով: Օշարակի  
սրուակներէն մէկը ինկաւ գետին: Քո-  
թոթը գլուխը շարժեց, դիտեց Հոսող  
հեղուկը, ապա մօտեցաւ տան տիրու-  
հին ու ջանաց լիզել ոտքերը:  
- Կորսուէ՛, - ճչաց Մատլէն. - քե-  
զի կ'ըսեմ, շա՛ն ձագ, կորսուէ՛, թէ ոչ  
գլուխդ կը ճզմեմ:  
Շունը հեկեկաց, քանի մը անգամ  
դարձաւ օշարակին շուրջը, ապա վազեց  
Սուրէնին մօտ:  
«Անկարելի է, ան ըլլալու է», մտա-  
ծեց Մատլէն:  
Վաղեց Հեռաձայնին տղիւ ու ա՛-  
ճապարանքով դարձուց Հիւանդապահու-  
հին Հեռաձայնին թիւերը:  
- Մարկօն է, - լսեց Հանդարտ ձայն  
մը:  
- Մարկօ՛, Մատլէ՛նն է. Սուրէնին  
մաման. կէսօրին մեր տունն էիք. այն-  
պէս չէ՞:  
- Ձարմանալի Հարցում է այդ, տիկ.  
Մատլէն. անշո՛ւշտ թէ ձեզի էի:  
- Լա՛ւ մտիկ ըրէք. ես գլուխս դար-

ձուցած էի պատուհանին կողմը երբ դուք փոքրիկին դեղը ներարկեցիք:

- Չեմ յիշեր մանրամասնութիւնները. ես միայն լաւ դիտեմ թէ բնիսիւնին տուի դաւակիւ. ի՞նչ ունի զաւակդ. աւելի՞ անհանդիստ է. կարմիր բշտիկներ էլ լլան մորթին վրայ: Եթէ այդպէ՛ս է, անմիջապէս բժիշկին հետաձայնէ, քանի ուշ չէ:

- Հը՛ւ, բժիշկի՞ն. ուստիկաններո՛ւն պիտի հետաձայնեմ:

- Տիկին Մատլէն, ուստիկանները ի՞նչ դործ ունին հիւանդ մանուկին հետ:

- Հիմա ինծի մի՛ կեղծէք. ճշմարտութիւնը ըսէք թէ մատանիս վերցուցի՞ք Մուրէնին անկողնին մէջէն:

- Մատանի՞... տիկ. Մատլէն, ուշքի՛ եկէք. մատանի մը ի՞նչ դործ ունի հիւանդի մը անկողնին մէջ:

- Այո՛, ճիշդ ատոր համար է որ վերցուցիք:

- Ներողամիտ գտնուեցէք տիկին, որ ամէնէն չնչին բանն իսկ գտնի մահամերձի մը մօտէն, անմիջապէս կը վերադարձնէի: Յոգնած կը թուիք, հանդարտեցէք, եւ անպայման կը գտնէք:

- Պարեա՛ւ, անպատկառ, խրատ ալ կու տաս ինծի, - պողաց Մատլէն ու ուժգնօրէն փակեց հետաձայնին գիծը:

- Մայրիկ, - լսեց Մուրէնին ձայնը:

Մօտեցաւ մանուկին: Բայց ձեռքերը կը դողային, ու արցունքները անըզպալարբար կը հոսէին աչքերէն:

- Մայրիկ, ջովս նստէ. հիւանդ ես, - հարցուց Մուրէն, ձեռքը երկարելով ձեռքին:

Քոթոթը ապշահար կը դիտէր երկուքը ու չէր համարձակեր մօտենալ:

Յանկարծ գանգը հնչեց: Մատլէն դողաց ամբողջ մարմնով: «Մարկօն ըլլալու է», մտածեց: Երկու երեք վայրկեան հազիւ կ'առնէր անոր տունէն իր տունը հասնիլը: «Ինչպէ՞ս դուռը պիտի բանամ, ի՞նչ պիտի պատասխանեմ, ի՞նչ ըսեմ», մտածեց: Մատնիքը պաղեցան եւ ծունկերը թուլցան: «Պիտի չբա-

նամ», խրախուսեց ինքզինք:

Ձանգը կրկնուեցաւ:

- Մայրիկ, չե՞ս լսեր, - դարձաւ Մուրէն ձեռքը շարժելով:

- Այո՛... կարծեմ թէ... - կակապեց:

Մօտեցաւ դրան ու պահ մը վարանումէ հետք, բացաւ դուռը ու զէժ դիմաց գտաւ ինքզինք ամուսնոյն հետ:

- Բանալիս տունը մոռցած ըլլալու եմ, - խօսեցաւ ամուսինը. - ի՞նչ ունիս,

- հարցուց դիտելով զէժը:

- Ոչի՞նչ... ոչի՞նչ... կակապեց. - յոգնած եմ քիչ մը... հիմա լաւ կ'ըլլամ:

Քոթոթը հետեւեցաւ տիրոջ, մինչեւ ջուրին ծորակը, ցատկեց վրան քանի մը անգամ ու լացաւ:

- Մատլէ՛ն, - լսեց ամուսնոյն ձայնը:

Մօտեցաւ Սեդրակին, որուն զէժը դեռ թաղուած էր անձեռոցին մէջ:

- Մատլէն, - ըսաւ՝ սրբելով զէժը. այս մատանին օր մը կը կորսնցնես. աւելի ապահով տեղ դիւր երբ ձեռքերդ լուսաւ:

- Ա՛խ, - հռուսեց Մատլէն, յափշտակելով մատանին եւ ամուր մը սեղմելով կոշտքին:

Քոթոթը ցատկեց վրան, եւ Մատլէնը շարկացաւ անասունին...:

և

Ժամը վեցին գանգը հնչեց: Հիւանդատանուհին ներս մտաւ եւ քայլերը ուղեց հիւանդին սենեակը:

Մուրէն կը ժպտէր:

- Նորէն քաջ պիտի ըլլա՞ս, - հարցուց Մարկօն, սեղմելով մանուկին ձեռքը:

Մատլէն դարձաւ պատուհանին կողմը: Ամպերը ցրուած էին, ու անձրեւը դադարած:

- Վազը առտուն նորէն կու գամ, - լսեց քիչ ետք հիւանդատանուհիին մեղմ ձայնը, ապա դրան մեղմօրէն փակուիլը: Մատլէն մտաւ սենեակ, դուրսը խրեց բարձին տակ ու հեկեկաց...:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ**Ո Ի Ղ Ե Ի Ո Ր**

••

Երբքայ հեռու՛ն հսկայ նառվ մ'անդրատլանտեան,  
Թողուվ այս սուսնն, երջանկութիւնն իսկ երազուած .  
Աշխարհը փոքր է, աւագի հատիկ միայն,  
Նւ անծանօթ՝ իմ հոգիիս իրքեւ աստուած :

Փախչի՛ւ, փախչի՛ւ, եւ հասնիլ տեղը միեւնոյն,  
Լոկ ժպիտին համար նրագին՝ որ կը շաղայ  
Վերադարձի կարօտագեղ ճամբուն վըրայ,  
Եւ միշտ լեցնել կապոյտ ուռկանն երազներուն :

Ա՛հ, ճանճոյթն այս ոստանին՝ ուր յիսուն տարի  
Բանտարկուած եմ մելամաղձոս եւ տրտմագին .  
Նիցցա՛, Լէյզէն, ուր մահաչերմ հիւանդ էի,  
Կը կանչէք սիրտս հեռուներու կախարդանքին :

Կոնտուներու քաղաքն հոգիս դեռ կ'օրօրէ  
Տակուրջիով՝ ուր բռներւեր է լուսնկանն,  
Երբ կը յածի յուշերուս մէջ իր մարմարէ  
Պալատներուն կապոյտ ստուերը դիւքաւկանն :

Գոյարատօ, պիտ' ուզէի նուազիլ ինչպէս  
Վերջին երանգը լեռներուդ մանիշակի,  
Երբ իրիկունը կ'օրօրէ՝ բուրվառ ոսկի,  
Տարաշխարհիկ իր ծագիկները բոցակէզ :

Հասնիլ առտու մ'անտառին մէջ ինչ նուերուդ,  
Բիօ շանէրօ, ցնորքներս՝ վ հասնիլ քեզի,  
Եւ երբ խորունկ իմ աչքերէս արցունքն հոսի,  
Լեցնէ սիրտըս կարօտովն աղջիկներուդ :

Հասնիլ հեռու՛ն, սեւ յակիմօթի պարտէզներուն,  
Հայտարապատ ու Պենարէս, ուր կը հսկեն  
Մեծ Պուտտաներ, ճուլած ոսկին արեւներուն  
Իրենց Ձեւին մէջ երազուած լուռ Ազօքէէն :

Եւ օրօրուի Անտալուզի գիշերներէն,  
 Կիթաններու, սըրինգներու մեղեդիով -  
 Սպանացի կիները սոսկ պարել գիտնն  
 Մարմինն իրենց երգի ծովին մէջ նետելով:

Ա՛հ, դեռ երթալ, հասնիլ ուրիշ ճար երկիրներ,  
 Արեւադարձը ողջունել, եւ հիւսիսի  
 Սառույցներուն մէջ կապոյտի վառ ծաղիկներ  
 Բազել, ովկեանն իր գոյներուն հետ երազի:

Թովի գաւազն ըլլալ, աշխարհը պարփակել,  
 Եւ գետերու հոսանքն ի վար անվախօրէն,  
 Վայրագօրէն տանիլ անյագ սիրտս անարգել,  
 Իբրեւ ծաղիկ մը փրցըւած արեւներէն:

Ու մեհեանները սսկիին եւ կնդրուկին՝  
 Որոնց հոգիս ազօթքն է միշտ լուս ու վայրի,  
 Բընակեցնել խորհարդներով արսրաւզին,  
 Ջերգ լուսնկան անդունդներուն մէջ խաւարի:

Ու փոսփօրէն կռակներուն ովկեանին  
 Ջահել գիշերն ուղեւորի ցնորքներուս,  
 Ունկնդրելով մրմունջներուն՝ որ կը հային  
 Հովին, ջուրին եւ եզէզին մէջ տրտմայայգ:

Այլեւրս խոնջ՝ արեւներէն որ ցաթեցան  
 Համբուս վըրայ, կարօտներէն ալ պարտատուն՝  
 Հասնիլ երկիրն՝ որուն անունն է Հայաստան,  
 Մեմի մառցեւ գտնել տեսիլքն հին օրերուն...:

Հրագ մը, դողդոջ, սեւեռարիբ կին մը գառամ՝  
 Որուն ձայնն է անլուս սիրոյ բերկրանք անհուն,  
 Որուն սիրտն է ոսկի շուշան միշտ ամթառամ,  
 Պարտէզին մէջ յաւերժազեղ տատաւածներուն...:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՌ

# Ինքնուրուշ Ինքնուրուշ ԾԱՄԲԱՆ

## ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Պ.

Ոչ ոք տեսած էր մեր հանդիպումը:  
 - Օրիորդ Քլարա, ըսի, եթէ կ'ուզէք մեր երեկոն չանցնենք սենեակի մը շորս պատերուն միջև: Մեկինք բացօթեայ եւ հանգարտ վայր մը:  
 - Բաւական զիս հալածեցիք, բաւ շարանճի ժպիտով մը: Ո՛րք կ'ուզէք տանիլ զիս:  
 - Տեղ մը ուր առանձին ըլլան ձայնիդ քաղցրութիւնը եւ աչքերուդ փայլը: Մեր խօսակցութիւնը տեղի կ'ունենար Փրանսերէնով: Անահիտ կը ջանար թաքնել իր հայկական շեշտը, եւ խօսածը սահուն եւ մաքուր Փրանսերէն մըն էր:  
 Ինքնաշարժ մը կեցուցի եւ ծովեզերեայ վայրի մը անունը տուի: Սկասնք սուրաւ լայն պողոտաներէն դէպի քաղաքին արեւելեան կողմերը: Անահիտ, որ քաջուած էր ինքնաշարժին մէկ անկիւնը, մօտեցաւ ինծի եւ տաքուկ մարմինը դրաւ աջ բազուկիս օղակին մէջ: Ձգիխիչ բոյր մը առած էր մթնոլորտը եւ կը խառնուէր պատուհաններէն ներս խուժող թաւշային օդին: Եւ բնութեան

մեղսակցութեամբ սկսաւ ողբերգութիւնը:  
 Պահ մը մոռցայ թէ ինչու կը զըտնուիմ այս ինքնաշարժին մէջ, այս աղջրկան հետ, որ շարաթ մը առաջ գոյութիւնս իսկ կ'անդիտանար: Ինքզինքս յանձնեցի երեսօթնէրու խաբկանքին:  
 Անահիտի հուսկներէն կը ցոլար այնպիսի գրաւչութիւն մը, այնպիսի հեշտանք մը, որուն հանդէպ անտարբեր մընալ անկարելի էր: Ծպարը եւ մաղերուն յարդարումը քիչ մը մեծցուցած էին տարիքը, բայց աւելցուցած էին հմայքը, իրեն տալով խորհրդաւոր կուռքի մը կերպարանքը: Պատրաստ էր գործածելու հզի մը բոլոր թաքուն զէնքերը, պատրաստ էր յանձնուելու ինծի բոլոր հուսկեամբ, ինչպէս կ'ընէին երբեմնի Եզրիպտոսի, Յունաստանի եւ Հռոմի պերճադիճները: Պիտի յանձնուէր հողուով ու մարմնով, կարծելով որ մէկ ժամուան սիրահարն եմ միայն, մինչ ես զարձած էի իր յաւիտենական սիրահարը, որ կրնայ մահով վարձատրել այն սէրը, որ միայն մէկ ժամուան համար կը զգենու անկեղծութեան պատմուհանը:  
 Սկսաւ հարցումներ ընել ինքնու-

Թեանս մասին, բնական զարգացիս մասին, այդտեղի աղջիկներուն մասին: Ձիս եւրոպացի կը կարծէր:

- Աւա՛ղ, որ չկրցայ ձեզ աւելի առաջ ճանչնալ, ըսի, դուք բոլորէն տարբեր էք:

Զպատասխանեց:

- Գիտէ՞ք քանի՞ անգամներ փորձեցի ձեզի հետ տեսակցութիւն մը ունենալ, բայց ձեր կողմէն ոչ մէկ ջանք տեսնեցի ստացայ...

Ինչպէ՞ք բարձրաձայն:

- Իսկապէս արարիւնակ էք. կարծես կու գաք ուրիշ ժամանակներէ: Այնպիսի ձեռով մը զիս կը հալածէիք որ զիս խրտչեցուցիք...

- Ուզեցի ձեզ ճանչնալ ուղղակի, ինչպէս կ'ընեն աշխարհի բոլոր սիրափորները, բայց ուրիշ կերպ չգտայ, երբ նկատեցի որ աւելի դիւրին միջոց մը կայ ձեզի ճանչնալու: Զյարգեցի՞նք սիրոյ յաւիտենական ձեւակերպութիւնները...

- Ըսել կ'ուզէք որ զիս կը սիրէ՞ք: Լուռ մնացի. շարունակեց:

- Ինձի հետ ժամադրուողները նոյն խօսքերը կ'ընեն. բայց ձեր ձայնին մէջ տարբեր շեշտ մը կայ: Յայտնի է որ դուք ոտմանքիք թիփ մըն էք: Կ'ուզէք սիրել բանաստեղծներու պէս. երգել, պաշտել այն աղջիկը զոր ձեր երեւակայութեան մէջ հրեշտակներու կը նմանցընէք: Կ'ուզէք գտնել անմատչելին. պտղատիւ, համբուրել անոր շուքը, հետը բարձրանալ դադաթներէն վեր, քայել ամպերու վրայ, եւ յետոյ... կիրքի մէկ պահուն, գիշատիչ թռչունի մը պէս խոյանալ անոր անմեղ եւ անարտո մարմնին վրայ... Միթէ նոյնը չէ՞ նպատակը բոլոր անոնց, որ կը փնտռեն կիներ այս կամ այն ձեւով: Դուք կրցաք գտնել դիւրին ճամբան. հաւնել, վճարել ու վայելել նոյն ճերմակ միւրջ: Միւրոյ եւ իդձի ճամբաները նոյնն են... բոլորն ալ կը տանին անկողին:

- Ձեր խօսքերը չեն համապատասխաներ ձեր նայուածքին մէջ թաքնուած

անմեղութեան: Միթէ չէ՞ք նախընտրեր որ անկեղծ ու հաւատարիմ սիրտ մը ձեզի կապուի եւ դուք կապուիք անոր, ըլլաք անոր միակ կուռքը...

- Անկեղծ սրտի մը կուռքը ըլլա՛ւ... Անկարելի եւ անիրականալի երազ, երկսայրի սուք. եթէ անկեղծ ու հաւատարիմ է, զո՞հ կ'երթայ շուրջիններուն բամբասանքին, զպարտմանը կը թաղուին նախանձի կոյտի մը տակ եւ զայրոյթի նոպայի մը մէջ կ'ըլլայ դահիճ... եթէ անկեղծ չէ, կիներ կը վաճառէ ուրիշներուն, կամ գայն կը նկատէ իբր տունը զարգարող կահ-կարասի մը: Ներկայ զարը հաւատարութեան, արդարութեան եւ բանականութեան դարն է: Հաւաստարութիւն ամէն գետնի վրայ. մէկ շափանիչ եւ մէկ արժէք միայն՝ Դրամը: Եթէ դրամ ունիս, ըսել է տէր ես բոլոր արժէքներուն. եթէ չունիս, կու տաս անոր փորձարէն ամէնէն թանկագին բանը. կիներ կու տայ իր մարմինը, մարդը՝ իր հոգին եւ իր պատիւը...

Լոյսերով պնտուած թերակղզին կը հեռանար դէպի մեր ձախը, հսկայ նաւու մը պէս: Միայն ալիքներուն երգը եւ ինքնաշարժներուն աղմուկը կը խռովէին գիշերուան խաղաղութիւնը:

- Ձեր ժամանակը չեմ աւելի շարաշար գործածել, ըսի: Ե՞րբ պէտք է տուն վերադարձած ըլլաք. թերեւս սպասող մը ունիք:

- Այս գիշեր խօսելու եւ զուարճալու տրամադրութիւնս մեծ է: Բարեբախտաբար ձեզի պէս համակերելի ու հասկցող մէկու մը հանդիպեցայ: Կան մարդեր, որոնք բերանին չեն բանար, կը գրադին միայն մարմնով, ուրիշներ՝ որոնք կը խօսին միայն եւ կ'ուզեն քեզ հմայել. երկու ծայրայեղութիւններ: Առաջինները մէկ ժամէն քեզ ազատ կը ձգեն. միւսները գիշերը կարճ կը գտնեն եւ կ'ուզեն ցերեկն ալ շարունակել իրենց շատախօսութիւնը...

- Իսկ ես, ո՞ր մէկ դասակարգին կը պատկանիմ:

- Դուք այդ երկու դասակարգէն ալ

տորբեր էք: Կատարեալ Հաւասարակը՝  
նութիւն մը. ոտմանթիք, վճռական,  
փաղաքշող, անտարբեր, Հմայող եւ Հը-  
մայուող...

- Կ'երեւի Հոգերանութիւն ալ սոր-  
ված էք:

- Այո՛, Հոգերանութիւն ալ սորված  
եմ: Պիտի դարձանաք թերեւս երբ ըսեմ  
թէ Փիլիսոփայութեան պաքալորիա ու-  
նիմ:

Նահր էլ Գէլպի կամուրջը անցած  
էինք:

- Կ'ուզէ՞ք որ ես ընտրեմ այս գի-  
շերուան ժամանցի վայրը...

- Ինչո՞ւ չէ, ըսի:

- Մեզ Միամի տար, ըսաւ շարժա-  
վարին:

Ուրեմն ինք կ'ընտրէր այն վայրը,  
ուր ճակատագիրը պիտի խոյանար իր  
վրայ դիշատիչ թռչունի մը պէս. այն  
վայրը, ուր պիտի Հանդէ՛ր իր տաք դիա-  
կը...

Միամի ծովեզերեայ դրօսավայր մըն  
էր: Ալիքները կու դային մեռնիլ պա-  
տըշամին գէժ, ուր շարուած էին սե-  
ղանները: Միրահար զոյգերու Համար,  
մտնուող խցիկներ կային ուրիշ կարե-  
լի էր գիտել ծովը եւ լսել փայլուն նը-  
ւազախումբը:

Շամբանիայի ազդեցութեան, տակ,  
Անահիտ դարձած էր աւելի սրամիտ եւ  
աւելի զուարթ. կը խօսէր ու կը խնդար:  
Հրաշալի թռչունի մը գեղեցիկանքն էր,  
զարնուած թռչունի մը, որ կ'երգէ՝ իր  
անպատմելի ցուերը մոռնալու Համար:

Միկարէթի նոր տուփ մը ապսպրած  
էի: Ուզեցի Հաս մը վառել: Լուցկին  
սեղանին վրայ չէր: Սկսայ գրպաննե-  
րուս մէջ փնտռել: Յանկարծ շարժումս  
սառեցաւ. մասներս Հանդիպած էին ա-  
տրճանակի մետաղին: Պաղ քրտինք մը  
երեւցաւ ճակտիս:

- Ի՞նչ ունիս, անհանգի՞ստ ես, Հար-  
ցուց Անահիտ:

Չարձացած՝ աչքերուն նայեցայ:

- Շատ երկար նստած մնացինք, ը-  
սի. եթէ կ'ուզես քիչ մը քայնք:

Պողոտան ամայի էր: Կիսալուսինը  
ծովուն վրայ կախուած մեզ կը դիտէր:  
Բաւական քայնցինք՝ լուս: Ճամբուն աջ  
կողմը կար պուրակ մը, բարձունքի մը  
վրայ: Անահիտ այդ կողմը ցոյց տուաւ.

- Այս բարձունքէն զմայլելի է տե-  
սարանը: Վարը՝ ծովը մեզի կը սպասէ  
իր թաւշային նենգութեամբ. Հեռուն՝  
թերակողմին վրայ, ուրիշ լուսաւոր կէ-  
տեր, կարծես բաժնուած վարի աստղա-  
կոյտէն:

- Կ'երեւի այս վայրը ձեզի լու ծա-  
սօթ է, ըսի փոխուած ձայնով մը: Եւ  
վստահ եմ որ նոյն յանկերդը կ'երգէ  
ձեր բոլոր յաճախորդներուն, անոնց  
յանձնուելէ առաջ, այս անհեղ ծառե-  
րուն Հովանիին տակ:

Չարձացած աչքերը իմ կողմս գար-  
ձուց: Կոթնած ծառի մը բունին, կը դի-  
տէի Հեռուոր քաղաքը եւ կը տեսնէի  
այն տնակը, ուր Հայր մը կը սպասէր իր  
մէկ Հատիկ աղջկան: Քաջ եւ անձնու-  
րաց Հերոսի մը աղջիկը, որ կուռքի մը  
պէս շարուած ինքզինքը կը վաճառէր  
սուղ սպրանքի մը պէս սեւ մէկուն:

- Այլեւս կատակերգութիւնը վերջ  
գտաւ, ըսի Հայերէնով:

- Այդ լեզուն չեմ Հասկնար, պա-  
րոն: Կ'երեւի դիս ուրիշ մէկը կարծե-  
ցիք, ըսաւ Հանդարտութեամբ:

- Եւ այսօր, այստեղ պիտի մեռ-  
նիս, ըսի, ձեռք գրպանս տանելով: Ե-  
թէ կ'ուզես Հասկցիր...

- Այս կատակին չէի սպասեր, ըսաւ  
բարձրաձայն խնդալով: Իսկապէս տա-  
րօրինակ մէկն էք եղեր... Եւ խորհըր-  
դուոր:

- Արդէն կէս գիշերը անցած է.  
կորսնցնելիք ժամանակ շուրթիմ, ըսի  
կտրուկ շեշտով մը: Առջեւէս քայլէ, որ-  
պէսզի քիչ մը հեռանանք ճամբէն: Պէտք  
չէ որ գէնքին ձայնը լսուի...

Սկսած էր արագ արագ շնչել: Տա-  
կաւին շատ լու չէր Հասկնար պատահա-  
ծը, բայց բնագոյսին վախ մը մտած էր  
արեան հիւսկէններուն մէջ: Բաւական  
հեռացանք ճամբէն: Մովուն կողմէն ոչ



մէկ ձայն կը հասնէր մեզի: Եւ ոչ ոք պիտի լսէր այստեղ պատահելիքը:

- Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել, ըսաւ, երբ իրեն հրամայեցի որ կանգ առնէ: Ինչո՞ւ... Առաջին անգամն է միասին ենք... Ձեզի որեւէ կերպով չեմ վշտացուցած... Եթէ դրամի համար է, զիտցէք որ շատ հարուստ մէկը չեմ. բայց ինչ որ ունիմ, վայրկեանիս ձեզի կը յանձնեմ եւ տեղէս չեմ շարժիր մինչեւ որ անհետանաք:

- Դրա՞մը, դրա՞մը, մի՛շտ դրամը: Ոչ, դրամը ամէն բան չէ: Եթէ այս վայրկեանիս ջու ծանրութեամբդ ոսկի առս ինձի, կրկին չես փրկուիր: Աշխարհիս հարստութիւնը չի կրնար այս վայրկեանիս կեանքդ փրկել: Օղանաւս կը մեկնի ժամը երեքէն առաջ: Եթէ Պետնի՛չ առաջ բան մը ունիս ըսելիք, շուտ ըսէ:

Ետ ետ ջալեց ու կռթնեցաւ դէմս երկու ծառի:

- Բայց ո՞վ էք դուք եւ ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել: Ո՞վ իրաւունք տուած է ձեզի: Եթէ այսպէս կը վարուիք, որովհետեւ ազատ կ'ապրիմ եւ հայ եմ, զիտցէք որ ես միակը չեմ: Ծառ մը բարձր ընտանիքի աղջիկներ, առանց ըստիպողութեան, կը հետեւին նոյն ճամբուն, եւ կը վայելեն իրենց շրջապատին հիացումը եւ ակնածանքը:

- Անուններ կան, որոնց վրայ տիրածը եւ անպատուութիւնը յայտնի չեն բլրաբ: Եթէ կ'ուզեմ այս վայրկեանիս ջեզ ջնջել երկրիս երեսէն, պատճառն այն է՝ որ դարձած ես հանրային կին մը եւ կը կոչուիս Վահանեան Անահիտ: Այդ տնունը մեր ազգին պատիւն է եւ չի կրնար ամենապզտիկ արատը կրել: Դուն պիտակցարար ընտրած ես այս ճամբան, եւ գիտակցարար հայրդ, այդ առաքինի հերոսը, կը հրահ գերեզման, անպատուութեան գերեզմանը:

- Հայրս լուր չունի այս բոլորէն եւ չեմ ուզեր որ լուր ունենայ. կը նախընտրեմ մեռնիլ ջան իրեն այդպիսի վիշտ մը պատճառել: Միակ անձն է աշխար-

հիս երեսը, որուն չեմ ուզեր ամէնէն փոքր ցաւը պատճառել:

- Կամ շատ տնօրո՞ճ մէկն ես, կամ այ զիմացինդ ապուշ կը կարծես: Միթէ ամէն գիշեր չե՞ս բացակայիր տունէն:

- Հայրս չի գիտեր... ո՛չ: Իրեն ըսած եմ որ գիշերները կ'աշխատիմ հիւանդանոցի մը մէջ, եւ աւելի լաւ կը վճարուիմ ջան ցերեկը:

- Պատրուակե՛՛ք. սուտ սուտի՛ վըրայ... Եւ ոչ մէկ մեղմացուցիչ պարագայ: Վճիռդ տրուած է օրեր առաջ եւ հիմա պիտի գործադրուի:

Իրմէ ջանի մը քայլ հեռացայ: Ձեռքիս մէջ տեսաւ զէնքին աններող պողպատին փայլը: Ճարահատ երէի մը պէս լուեց, ու սպասեց որ գործադրուի վըճիռը:

- Կրնայի ջեզ խեղդել այս ձեռքերովս որպէսզի անձայն մեռնիս. բայց ո՛չ, պէտք է որ այս անձը եւ մայրական ընտելիւնը լսէ արդարութեան ազդակը:

Լսեցի լուռ հեկեկանքը, կուրծքին մէջ պոթկացող յուսահատութեան ելուէջները: Արդեօ՞ք կը զղջար ապրած կեանքին համար:

- Լա՛ւ... մեղաւոր եմ, ըսաւ հեկեկալով: Սպաննէ՛ զիս... Նախազգացում մը ունէի թէ օր մը պիտի հանդիպիմ ջեզի պէս պատուախնդիր եւ անզուժ մէկու մը: Եւ լաւ է որ այսպէս ըլլայ: Բայց դուն որ արդարութեան անունով կու գաս, նախ մտիկ ըրէ զիս, եւ զիտցիր որ եթէ յանցանք մը գործող կայ զէմդ, միակ յանցաւորը ես չեմ: Կազարըդ արձակէ երբ որ կ'ուզես, երբ որ յարմար տեսնես լուեցնել զիս:

- Ըսելիքդ կարճ թող ըլլայ. հազիւ ժամանակ ունիմ օդակայան հասնելու:

- Ըսի որ դրամի սիրոյն ընտրեցի այդ ճամբան, մասամբ ճիշդ է. բայց բուն պատճառը վրէժն է: Ուզեցի վրէժ լուծել... Դուն ըսիր որ Վահանեան տնունը պատիւն է հայ ազգին. բայց ի՞նչ ըրած է հայ ազգը այդ պատիւին փոխարէն: Ո՞րք են հիմա անոնք որ աւրած

են իրենց արհեստով պաշտպանել այս ժողովուրդին բեկորները. դո՛ւն ըսէ՝ բոլորն ալ կամ մեռած են, կամ մոռցուած եւ կամ լքուած: Հայ ժողովուրդը կը հպարտանայ իր հերոսներով եւ հանձարներով, բայց եթէ երկար ապրին՝ կ'արհամարհէ, կ'անպատուէ ու անօթի կը մեռնէ զանոնք: Եւ հաշիւը կը փակէ փռուաւոր յուզարկաւորութեամբ մը...

- Այս բոլորը ոչինչով կը մեղմացընեն յանցանքդ: Շատ շատեր, գեղեցիկ ու հրիտասարդ, նոյն պարագաներու տակ գտնուելով, աղքատ ու պատուաւոր ապրած են...

- Զիտօնք բացառութիւններու մասին: Մայրս այն կիներէն եղած է, որոնք իրենց պատիւը եփրատ գետին յանձնեցին: Եթէ այդ կոյս եւ պատուախնդիր աղջիկները եւ կինները մեր օրերուն ապրէին, արգեօ՞ք պիտի ընէին նոյն մարտիրոսութիւնը: Ներկայ դարու միակ անպատիւները պղծատներն են. որովհետեւ չունին իրենց պատիւը պաշտպանելու միակ զբաժն՝ դրամը: Հայրս՝ այդ անվեհեր ու համեստ հերոսը, որ ամուսնութենէն ջանի մը ամիս վերջ ձգած է տունը եւ զայցած է պաշտպանել ջարդուող հայութիւնը, հայրս որ աղջին զոհած է իր արդար երջանկութեան բաժինը, կ'ապրի խցիկէ մը մէջ, ուր շատեր պիտի չուզէին իրենց շունը կապել: Եթէ կ'ուզես՝ գնա՛ ու տես. տեսակ մը գետնափոր նկուղ, տեսակ մը խոնաւ գերեզման, հերոսները պատրաստելու բուն գերեզմանին: Աղջին պատիւը, ազգին հպարտութիւնը, որուն անունին համար հիմա եկած ես իր մէկ հատիկ աղջիկը սպաննելու, անօթի օրեր անցուցած է, եւ մայթերու վրայէն սիկարէթի Ծայրեր հաւաքած է զաղտնի, մինչ անդին անոնք որ վերապրած են իր քաղութեան շնորհիւ, կը յըդփանան ազգին դրամով: Նոյնիսկ վերջին տարիներուն, անոնց համար ծիծաղի սուսարկայ դարձած է: Դանապաններ կոչուողն վնասած են զինք եւ ջոջեր սրճարաններու մէջ զինք անարգած են:

Փորձեցի բան մը ըսել, բայց ձայն չեկաւ կոկորդէս:

- Ձեմ ուզեր մանկութեանս մասին խօսիլ: Ե՛ս, ազգին հերոսին աղջիկը, հայութեան պատիւը, ընկերուհիներուս եւ ուսուցիչներուս միայն ծիծաղը եւ չեղնանքը վայելած եմ...

- Այս բոլորը... վերջապէս... ինչո՞ւ...

- Այս բոլորը տարած եմ համբերութեամբ մինչեւ այն օրը, երբ բաժակը յորդեցաւ... Երբ ուսումս աւարտեցի, յաջողեցայ իբր ուսուցչուհի մտնել անհրաժեշտ նախակրթարան մը, շնչին ամսականով: Ենթահարկներու վայր մը, անօրէնէն սկսեալ մինչեւ եւ շուն հանգիպեցայ երիտասարդ ուսուցչի մը, որ բանաստեղծի հոգի ունէր: Զիրար սիրեցինք, մեր բոլոր ուժով, մեր քաղցած սրտերու համայնակով ախորժակովը: Շատեր նախանձեցան իրեն, որովհետեւ գեղեցիկ էի: Եւ իր գէժը սկսաւ պայքար մը կատարել, անգութ, անզիջող: Բոլորը իր գէժ լարուած էին՝ աշակերտ, ուսուցիչ, տնօրէն եւ հոգաբարձու: Ինք սակայն համբերութեամբ կը տանէր այս հալածանքը, սիրով կ'ապրէր այս դժոխքին մէջ, որովհետեւ ես կայի հոն: Բայց մղձաւանջը կը կրծէր զինք: Եւ օր մըն ալ, աշակերտներուն վայրադուրեան չգիմանալով, շնաստակառ ինկած էր գրատախտակին առջեւ - կաւիճը ձեռքը: Իմացայ որ այդ օրը, ուսուցիչները եւ անօրէնը ժողով մը պումարած էին եւ աշակերտներուն նրակք խոստացած էին, որպէսզի խեղճ վաչէին - այս է սիրած տղուս անունը - կեանքը անտանիք դարձնին: Եւ յաջողեցան... Կէսօրին, վաչէն հիւանդանոց փոխադրեցին եւ յաջորդ օրը՝ Բուժարան: շուն սակայն վիճակը վասթարացած էր խնամքի պակասէն: Անտէր ու աղքատ հիւանդներու բաժնին մէջ, կան միայն շնորհազրկեալներ: Եւ օր մը, անըզգամ բժիշկէ մը իմանալով որ վիճակը յուսահատական է, վաչէ անձնասպան եղաւ, ինքզինքը պատուահանէն վար

նետևելով: Տարի մը սպրեցայ, ճգմուած յուսահատութեան եւ տուայտանքի մէջ. սպասեցի որ տեղէ մը լոյս ծագի: Մեր հայրերը մեղմէ քաջ էին, որովհետեւ հաւատք ունէին եւ նեղ պարագաներուն կը յանձնուէին Աստուծոյ բարերար կամքին: Հիմա չունինք այդ սփոփանքը. մենք մեր ձեռքերով քանդած ենք մեր ապաւէնը՝ ճշմարիտ ու անկեղծ հաւատքը: Վաշէի մասէն տարի մը ետք նայեցայ շուրջս. կը գտնուէի երկու անգուռներու միջեւ. մէկ կողմէն մահը, իսկ միւս կողմէն ներկայ կեանքս: Երկրորդը ընտրեցի հօրս սիրոյն. որովհետեւ իմ մահս իր ալ մահը պիտի ըլլար...

- Անհաւատալի՛ է, ըսի... այս դարուս, այսպիսի բան մը, անհաւատալի՛ է...

- Ուրիշ շատ անհաւատալի բաներ կան, եւ սփոփալի: Լաւ է որ քեզի հանդիպեցայ եւ պիտի մեռնիմ մէկու մը ձեռքով, որ մաքուր է ու պատուախնդիր: Ուրիմն տակաւին կան մարդիկ, որոնք պատիւը եւ խնայքը կը դերադասան կեանքին եւ դրամին:

Այս խօսքերը միտեցան ուղեղիս մէջ թունաւոր դաշտնի մը պէս, որովհետեւ արտասանուած էին անկեղծութեամբ: Հասկցայ որ ես ալ յանցաւոր մըն եմ: Արարքիս կեղծաւորութիւնը ցցուեցաւ դէմս անհետիւն հրէշի մը պէս... Տակաւին այս աղջկան հոգիին մէջ մէկէ աւելի մաքուր սվատիսներ կային: Դանդաղորէն ատրճանակը դրի գրպանս ու հետացայ առանց ետիս նայելու:

Հասած էի ճամբուն եզերքը, երբ ճիշ մը լսեցի, ժօրմէն լքուած մանուկի մը ճիչը...

- Արմա՛ն, Արմա՛ն, զիս մի՛ լքեր, զիս առանձին մի՛ ձգեր այս անպաւթ ճամբուն վրայ, այս անսիրտ մարդոց վաճառակին մէջ...

Սպասեցի որ ջոզմ հասնի եւ մեքենայարը ձեռքս իրեն երկարեցի եւ միասին զալեցինք մինչեւ ինքնաշարժ մը, որ կը սպասէր ճաշարանին առջեւ: Մանրութիւն մը իջած էր սրտիս վրայէն...

Մտայած էի Անահիտին անցեալը, ներած էի բոլոր էութեամբս, եւ քիչ մնացած էր որ ես իրմէ ներողութիւն խնդրէի...

Կիսալուսինը մօտեցած էր ծովու մակերեսին: Վերէն օդանաւ մը կը յառաջանար աստղէ աստղ: Եւ սակայն, պուրակին ծառերուն տակ մեղաւոր աղջկան մը դիակը շէր փռուած...

Գ.

Վերադարձանք դէպի քաղաքին լոյսերը, առանց բառ մը իսկ փոխանակելու: Ո՛չ մէկ նախադասութիւն կրնար պատկերացնել մեր ներքին քառսը, ուր լոյսը երթալով կը սիրտպետէր: Օդանաւը շատոնց մեկնած ըլլալու էր. անպարելու պէտք չկար: Պէտք չկար մէկ ուսպով իմելու այս վայրկեաններուն պարունակութիւնը, որոնց իւրաքանչիւրը կրնար կեանք մը լեցնել:

Հրապարակին վրայ իջանք ինքնաշարժէն: Քալիով կարելի էր այս տարօրինակ վայրկեաններուն թիւը բազմապատկել: Մայթերու որբացած լոյսերը ուրախութեամբ կ'ողողէին մեզ: Քաղաքը գրկաբաց կ'ընդունէր մեզ, դիշերային իր լուս մեղեդին տարածելով մեր առջեւ:

Վերջապէս կանգ տուա խեղճ տան առջեւ: Արդեօ՞ք հոս պիտի վերջանար մեր երջանիկ ողբերգութիւնը: Առանց այժուկի Անահիտ գուռը բացաւ ու անհետացաւ խաւարամած բակին մէջը.


- Հիմա հայրս արթնցած կ'ըլլայ, Լոյսը վատեմ որպէսզի կարենաս տեսնել քալած տեղդ: Կարծեմ գաւաթ մը սուրճ չես մերժեր այսքան յուզումներէ ետք...

Սպասեցի դրան առջեւ: Պատուհան մը լուսաւորուեցաւ եւ երկվայրկեան մը վերջ լսեցի Անահիտին ճիչը: Վազելով դուրս ելաւ...

- Հա՛յրս... Հա՛յրս... բոսա հեկեկալով:

1246

145-2000



Լուսամփոփին տակ դէմքը ստացած էր մեռելային գեղնութիւն մը...

Միասին ներս մտանք. սենեակը ամառի էր: Ներս ծնու պատիկ կասկած մը. նշոյլ մը սկսաւ լուսուորիկ ահաւոր զաղափար մը. Պ. Վահանեան դիտէր որ այս գիշեր պիտի հանգիպէի իր արկան, այս գիշեր պիտի վնասէր իր սիրելի եւ մեղաւոր զաւակին ճակատագիրը, ուստի...

Բակին մէջ ուրիշ սենեակներ ալ կային: Դռներէն մէկը բացուեցաւ եւ ծեր կին մը դուրս եկաւ, Անահիտը քովը կանչեց եւ հետը ցած ձայնով խօսեցաւ: Անահիտ մօտեցաւ ինծի եւ հաղորդեց ծեր կնոջ ըսածները. հօրը արկած մը պատահած էր եւ հիւանդանոց փոխադրած էին զինք, քանի մը ժամ առաջ...

Լոյսը սկսած էր բացուիլ երբ հասանք Օթէլ Տիէօ: Բաւական դժուարութիւններէ հող, կրցանք ներս մտնել եւ գտնուեցանք մահուան նախագաւթին մէջ. դեղի հոտեր, ճերմակ պատեր, նրբանցքներ ուրիշ կը սահէին ճերմակ կերպարանքները: Կանգ առինք դրան մը առջեւ: Հիւանդագահուհի մը ներսէն ձայն տուաւ որ կրնանք մտնել:

- Դուն այստեղ քիչ մը սպասէ՛, ըսի Անահիտին, նախ ես մտնեմ:

Պ. Վահանեան աչքերը ուղղած էր դէպի դուռը:

Մեր նայուածքները իրարու հանդիպեցան. սակայն ես դուրս չզարձուցի դէպի պատը: Աչքիս առջեւ ունէի մարդկային աւերակ մը. մահապարտ մը, որ անզունդի մը վրայ կախուած է անտեսանելի թելով մը, զոր կտրելու եկած էի:

- Ինչպէ՞ս վերջացաւ, հարցուց ալբերը յարուսով աչքերուս մէջ. ի՞նչ եղան վերջին խօսքերը...

- Վերջին խօսքերը դուն պիտի լըսես: Անահիտը ողջ եւ առողջ է: Ձինք դատեցի եւ անմեղ դատյ հակառակ իր մեղքերուն...

Դէմքը ալլափոխուեցաւ. աչքերուն

մէջէն անցաւ խորհրդաւոր հրճուանք մը, որուն բուն պատճառը հասկնալ դժուար էր ինծի այս պահուս: Արդեօք կ'ուրախանա՞ր որովհետեւ աղջիկը ողջ էր, թէ որովհետեւ անմեղ էր: Անմիջապէս յետոյ մշուշ մը պատեց բերբերը, Հասկցայ տիրութեան պատճառը:

- Անահիտ դուրսը կը սպասէ, ըսի: Կրկին աչքերը պայծառացան:

- Արմա՞ն, ըսաւ, երբեք պէտք չէ պատենք եւ վճիռ արձակենք արտաքին արարքներուն վրայ հիմնուելով: Մեղաւոր մը պատժել մեղի պէս տկար մահահանացուններուն գործը չէ: Այդ բանը միշտ Աստուծոյ ձգտե՛ք...

Չայնր հոն կտրուեցաւ, աչքերը գոցուեցան: Պ. Վահանեանին վիճակը կարծածէս աւելի վտանգաւոր էր: Անմիջապէս դուռը բացի եւ նշան մը ըրի Անահիտին, որ ներս գայ: Աղջիկը վազեց դէպի իր հայրը, ծոնկի եկաւ մահահանգիտի առջեւ, առաւ անոր կմախքած ձեռքը իր փափուկ ու մեղաւոր արիւնքուն մէջ ու շրթներուն տարաւ: Պ. Վահանեանին դէմքը առած էր անկեանք իրերու կերպարանքը, տեսակ մը ահուկի անշարժութիւն, ուր կը պատկերանար յստեփոփանութեան կնիքը:

Յանկարծ ձեռքը վեր բարձրացուց ու դրաւ աղջկան զլիւսուն վրայ:

- Ներողութի՛ւն, ըսաւ, ներողութի՛ւն ձեր երկուքին: Վատ գտնուեցայ. ուղեցի փախչիլ կեանքէն, չապրիլ այդ ահուկի վայրկեանը. չուղեցի տեսնել աղջկանս մահը, եւ ինքզինքս նետեցի ինքնաշարժի մը տակ...

- Ներէ՛, ներէ՛ հայր, ներէ՛ ինծի, պոռաց Անահիտ, ես եղայ մահուանդ պատճառը: Չկրցայ ինքզինքս կառավարել, մնացած էի ջահել ու միմակ. տարուեցայ հոսանքէն...

Պ. Վահանեան աչքերը բացաւ՝ երկու արցունքի լճակներ...

- Իսկ հիմա աղջիկու, ես ալ կը մեկնեմ, դասալիքի մը պէս, եւ պիտի մնաս միմակ... Երանի մահու օգտակարութիւն մը ունենար դունէ:

- Ես այլևս Անահիտը մինակ չեմ  
լքեր, ըսի, երբե՛ք, երբե՛ք... Միասին  
կ'ապրինք, միասին կը կատարենք մեր  
ճամբորդութիւնը մարդկային բնագոյնե-  
րու ոռնացող ուղիքանոսին մէջէն...

- Ուրեմն... կրնամ աչքերս փակել,  
այլևս... Աստուած ձեզ օրհնէ, զա-  
ւակներս...

Պ. Վահանեան ոչ եւս էր: Լեռներու  
արծիւը, որուն թռնամի գնդակները ու-  
րեւէ վնաս չէին հասցուցած, կը մեռնէր  
անհա հիւանդանոցի մը մահճակալին  
մէջ, մոռցուած ու անարգուած, կը մեռ-  
նէր ամէնէն քստմնելի մահով, անձնաս-  
պանութեամբ...

Դուրս վազելով հիւանդապահուհին  
կանչեցի եւ ըսի որ Պ. Վահանեան ան-  
շարժացած էր: Չզարմացաւ...

- Հրաշք մըն է, ըսաւ, որ մինչեւ  
հիմա կրցաւ դիմանալ: Երբ դինք բե-

րին, արդէն ջախջախուած դիակ մըն  
էր: Հողին էր որ շէր ուզեր բաժնուիլ,  
լանի մը կը սպասէր:

Քիչ յետոյ բժիշկը ներս մտաւ. կա-  
տարեց վերջին քննութիւնը.

- Ամէն բան վերջացած է, ըսաւ:  
Պէտք է թաղումի ձեւակերպութիւնները  
կատարելու սկսիք:

Անահիտ կը հեկեկար խեղդուելու  
չափ: Դրեթէ շալկելով զայն սենեակէն  
դուրս տարի: Յետոյ իջեցուցի պար-  
տէզ...

Ուզեցի զովացուցիչ մը բերել. հա-  
զիւ քայլ մը տուած էի, երբ Անահիտ  
ոտքի ելաւ ու հետեւեցաւ ինծի.

- Արմա՛ն, դիմ մի լքեր, մինակ մի  
ձգեր դիմ...

- Երբեք, ըսի, երբեք չեմ լքեր քեզ,  
անմեղ ու տառապած աղջիկ:

Ն. Զ.



## ԿԵԱՆՔԸ — ՔՈՑՐՍ



Կեանքը, երազն այս, հեֆիաթն այս գեղեցիկ եւ խորհուրդը խորհրդաւոր՝  
 Ըլլար կի՞ն մը, գինեմուլի ազդիկ, ին՞ն սլ գինով,  
 Զոր սիրէի,

Եւ անունը ըլլար Տրտմութիւն:

Իր աչքերը, գինեմուլի հիւանդագին եւ դողացող խորացումով,  
 Ինչպէս չուրերը աշնան՝ ուր կը մնան տերեւները՝ անշարժ.

Ին՞ք՝ կրակ, ին՞ք՝ վայրի, հեշտամարտին:

Ժանկայաբոյց ստիճեմերով

Կեանքը ըլլար կի՞ն մը գինով՝

Զոր սիրէի:

Սէրս ըլլար տառապագին.

Ըլլար թախծուտ, ըլլար ուժգին, այնպէս ուժգին՝

Որ միակ ցաւս ին՞ք ըլլար, չունենայի ուրիշ ոչ մէկ հառաչ ու ցու.

Կարենայի ատել, սակայն, մահը միայն:

Յաղթել մահուան կարենայի.

Սէրս այնպէս ըլլար ուժգին,

Տառապագին

Ու հեւցող

Անպարագիծ այս անձրեւին

Օրսքփացող թախծի՞ն տակ.

Եւ սիրէի կի՞նն այդ վայրի, տարօրինակ,

Կի՞նն այդ գինով,

Որ կը մնայ անա փռուած, որ կը մնայ անա լքուած ու անզգայ

Անձրեւին տակ, գիշերուան ցուրտ մայթի՞ն վրայ:

Եզբոր մը պէս, որ կը սիրէ, այնպէս քնուշ,

Եզբոր մը պէս թեւը մտած տանէի գայն,

Կի՞նն այդ, կեանքը, այնպէս անոյշ, այնպէս փափուկ ու գուարթուն,

Զոր չար մարդիկ մայթի՞ն վրայ մերկ թողուցին:

Հայեռյեցի՞ն, քրջացի՞ն ու հեռացան:

Թեւը մտած, եզբոր մը պէս, սանէի գայն

Կէս գիշերուայ զգայագուրկ իր ցաւի՞ն մէջ,

Մեծ քաղաքի լոյսերուն տակ արտասուաթոր:

Տանէի գայն, որ չմտէր այդպէս հիւանդ,

Որ չմտէր կեանքը՝ վայրագ ու բողբոջ.

Պերճաղի՞նն այդ, իր կողուցի՞ն մէջ հեւասպառ, ու լկուած,

մերկամարմին,

Կէս գիշերին մէջ՝ դողահար,

Հովուն գիմաց, անձրեւին տակ:

Տանէի գայն հեռու քաղէ՞ն, ճամբաներէն ու մարդերէ՞ն՝

Տանի գայն, եղբոր մը պէս, որ կը սիրէ, այնպէս խանդոտ  
 Քոյրն իր՝ սրուած մարդոց կրֆոտ.  
 Համբուն մէջէն զրոտ, ցեխոտ,  
 Տանի տուն, քաշկոտեղով՝  
 Քոյրս գիմով:

Եղբոր մը պէս որ կը սիրէ, այնպէս անոյշ,  
 Այնպէս խանդոտ ու վշտացած,  
 Մերկացնէի գայն շորերէն իր պատուած:  
 Թուերուս մէջ եղբայրական՝ լուսնայի  
 Յեթն իր մարմնին ու պղծութիւնը լկամֆին.  
 Այնպէս մաքուր ու կուսական  
 Պառկեցնէի մահնիս վրան.  
 Եւ հիացած ես դիտէի քոյրս, կեանքը, այնքան փոխուած,  
 Այնքան մաքուր, այնքան անմեղ ու կուսական.  
 Ու դիտէի, եղբոր մը պէս, ճտած անբան,  
 Քոյրն այդ հիւանդ, մերկութեանը մէջ գեղեցիկ եւ կուսական.  
 Եւ իր անունը՝ Տրտութիւն:

Երկնայի բովը ապա, եղբոր մը պէս գուրգուրացող,  
 Որ կը սիրէ քոյրն իր հիւանդ, քոյրը պատիկ.  
 Եւ շունչիս տակ, զգուսնֆներուս տակ մտերմիկ  
 Ան արքնաք, ժպտէր ինձի.  
 Փարէր վզիս, աչքերուս մէջ նայէր երկար  
 Իր ցանկացող, խոր աչքերով.  
 Եւ ես գիմով  
 Եւ ես սկար  
 Կախուէի իր շրթունքներէն գինեմուրի  
 Ու ծծէի հիւքը կեանքին  
 Ա՛յ դառնացած մէջն իր բերնին.  
 Ապա, կրֆոտ ու խենդացած  
 Զայն սիրէի, գայն սիրէի,  
 Մահնին վրայ փռուած այդպէս մերկ ու վայրի.  
 Հանոյանար տարփանքիս տակ, դառնար վայրի, դառնար անյագ.  
 Զայն սիրէի, գայն սիրէի  
 Ու...  
 Խեղդէի:

Իր մահէն ետք, դիտելիս դէմ այնքան փափուկ, այնքան անոյշ ու ճիւղափայլ  
 Ծունկի եկած՝ լայի երկար...:

Ռ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

# Արարազէս Հարութիւններ



# Օւանկերտը



# Զապէն Եւայեանքիս

Մայիսի 12 Օգոստոս 1906

Ազնիւ բարեկամուհիս,

Ուշացալ, բայց ապահով եղէք թէ փոխարինութիւն ընել չմտարե-  
րեցի ձեր ուշ մնացած պատասխանին: Ես միշտ քիչ պահանջկոտ ըլլալու  
իրաւունք մը ճանչցած եմ ինքզինքին՝ քեզ հանդէպ, եւ միշտ շնորհապարտ  
կը զանուիմ ձեր բարեացակամ, աննկատ, յօժարափոյթ անկեղծութեան  
նկատմամբ: Որով եւ, էթէ ձեր ուշացումները կատարուած անձկութեան մը  
մէջ սիրտս սեղմեն, մեծ իրաւունք մը չեմ զզար մէջս, զձեզ ստիպուած  
սեանելու փոյթ զնեւ թղթակցութեան մը՝ որմէ անհաւանական չէր որ  
նաև ձանձրանայիք: Ուստի, ես յօժարակամ պիտի հպատակիմ ձեր որո-



չումներուն. պիտի սպասեմ միշտ, եւ մեծ ուրախութեամբ պիտի կարգամ ձեր նամակները, ամէն անգամ որ զիս յիշէք եւ անոնցմէ ուղէք գրել ինձի: Ու, բացատրութիւն մը տալու համար ի՛մ ալ ուշանալուս, ըսեմ ձեզի որ, սպասեցի ձեր նամակին մէջ ծանուցուած էջերի բաւր Լ'արներուն, գորս տեսնելու անհամբեր էք, եւ որք, դժբախտաբար, ցարդ ձեռքս չեն հասած:

Ձեր գրական ծրագիրները շատ սիրուն են: Անհամբեր եմ զանոնք իրականացած տեսնելու: Ինձի կը հարցնէք անոնց մասին. բայց ապահովապէս դուք աւելի պատշաճօրէն կարող էք տալ ձեր որոշումները: Յետոյ, Բրնէ կիրի կարծիքը անշուշտ մեծ կարեւորութիւն ունի: Ուրիմ, խորհելով կամ պատրաստուելով հանդերձ օր մը հրատարակել անպատճառ նաեւ կեղծ հաճարները, գրեցէք ձեր արձակ բանաստեղծութեանց հատորը: Յերաւի, քնարական հոծ ու սրտազին թրթռում մը գիտցած էք դուք զնեյ ձեր արձակ բանաստեղծութիւններուն մէջ: Ասիկա ձեր ճոխ սամալի-պիրիթիւն գեղեցկագոյն երեւոյթներէն մին է: Բայց ոչ նուազ կատարեալ հանգիստացած էք դուք դէմքերու եւ բարբերու ուսումնասիրութեան մէջ. իրականութեան զգացումն ունիք դուք, ինչպէս կ'ըսէր Ջուլա. հազուադէպորէն ունիք դուք դայն, անհերքելի կերպով: Այս բոլորը այնքան անկեղծութեամբ ըսած եմ արդէն յաճախ, եւ չպիտի գաղտնի կրկնելէ, երբ առիթը ներկայանայ: - Իսկ թրջահայ արդի գրագէտները Փրանսական հրատարակին վրայ ծանօթացնելու ձեր մտադրութիւնը այլապէս շնորհատրելի է: Կրնաք թէ՛ հանդէսի մը մէջ գրել եւ թէ՛ զատ հատոր մը կազմել, ձեր ընտրած ծրագրին ընդարձակութեան համեմատ: Բայց եթէ իմ անձնական կարծիքիս ուղէիք կարեւորութիւն ընծայել, պիտի ըսէի թէ՛ հետեւեալ ծրագիրը շատ նպատակաւոր մար էր. «այսինքն՝ առանձին կ'առնէք իւր բաժանչիւր հեղինակ, իրականոր թարգմանութիւններ տալով իր գործէն, որոնց կը կցէք կենսագրական եւ քննադատական հակիրճ նոթ մը: Այս անշուշտ ուսումնասիրութիւնները յաջողաբար կը հրատարակէք հանդէսի մը մէջ եւ յետոյ, երբ աւարտէք շարքը, ամբողջը կը վերածէք հատորի մը: Ասիկա լաւ ծրագիր մը չէ՞»:

Ձեմ գիտեր թէ՛ ըսած եմ ձեզի որ ժամանակին ստացած եմ կիրի հրատարակի Փանթօն սէ Փանթօնը. գրախտային երա՛զ մըն է ան, բոլոր տարտամ եւ անընթաց իրերուն եւ զգացումներուն թրթռման մէջ ծաղկող: Տարտամին հմայքն ու գինովութիւնը ոչ մէկ անգամ այնքան հրաշալի կերպով գրականացած էր, ապահովապէս: Հետաւոր երազային պատկերները՝ դեռ յիշողութեանս մէջ, ու հեռալուր դրախտային երաժշտութիւնը՝ դեռ լսելիքիս խորը, կ'օրօրեն զիս: Եւ ամէն անգամ որ կը մտածեմ Փանթօն սէ Փանթօնին, թումանին անկարելի սիրովը տանջուած հէզ նիհար, պարուհիին մեղրամտէ յուսաբեկ պատկերը սիրտս կը կեղեքէ՛ մեծ, անսահման կարեկցութեամբ մը: Խորհեցայ փոխադարձաբար զրկել բրեն, կիրի, Նրկուսէս. բայց վարանեցայ. կը կասկածիմ թէ՛ յաւակնատութիւն մը ըրած կ'ըլլամ՝ այնքան անվստահ եմ արդէն՝ Նրկուսէի արժէքին մասին:

Բայց եթէ փութացի ձեզի գրկել իմ լուսանկարս, - ամաքտօրի գործ մը՝ եղբորս պատրաստածը, բայց շատ նման իրականին, - ապահովաբար յաւակնութեան պատրուակով չէր: Շատոնց փափաքած եմ ունենալ ձերինը, առանց երբեք համարձակելու այդպիսի փոփաք մը բանաձեւելու. այսօր, իմինս ուղերով, դուք այդ բազմանքիս իրագործման հնարաւորու-

թիւն տուած կ'ըլլաք, կը յուսամ: Կը խարուի՞մ արդեօք: Զպիտի հաւատալի: Դուք, աննմանօրէն ձեր սեռակիցներէն շատին, այնքան պարզ, անկեղծ, անսեթեւեթ կը հանդիսանաք ձեր բարեկամութեանց մէջ: Եւ, հաւատացէք, շատ, ինչոք շատ երջանիկ պիտի ըլլալի, եթէ ձեր լուսանկարին բնկերացած ըլլալին ձեր յարգելի ամուսնին եւ Պ. Կիլին լուսանկարները: Այն ազնիւ ու վեհանմն վերաբերումը, զոր բանաստեղծը ունեցաւ ինձ նկատմամբ, թոյլ չի տար այլեւ որ վարանիմ՝ նորագոյն պատուով մը ինքզինքս պատուուած տեսնելու այս իղձս յայտնելու իրեն՝ ձեր հաճոյակատար միջնորդութեամբ:

Ձեր բաղձանքին համեմատ Փրանսերէնի թարգմանած եմ նաեւ՝ ձեզի ձօնած ստանաւորս. բայց վարանեցայ զայն ձեզի դրկելու, վասն զի վստահ չեմ յաղող թարգմանութիւն մը ըրած ըլլալու: Որքան փափաքելի էր որ, ձեր իսկ ձեռքով կատարուած ըլլար լաւագոյն թարգմանութիւն մը: Բայց եթէ անպատճառ ուզէք, յաջորդ անգամ կը դրկեմ իմ թարգմանութիւնս:

Նրկու տողով կը տեղեկացնէք զիս՝ Պապալժէրի հետ ձեր ունեցած տեսակցութեան: Ձեր յաջորդ նամակը անտարակոյս աւելի մանրամասնութիւններ պիտի պարունակէ: Նրկար ատենէ ի վեր չենք թղթակցած իրեն հետ: Այս պատուական երիտասարդին հետ ալ մեր մշակած բարեկամութիւնը քիչ մը անսովոր բան մըն է: Մակալիճ Էնքէրմասիմալի տնօրէն էր, երբ թղթակցութեամբ ծանօթացանք իրարու. նամակցեցաւ ինձի, եւ անկից ի վեր 10 տարի կայ, չենք մոռնար զիրար:

Ահա՛ ձեզի երկար նամակ մը, իմ կարգիս: Ու խնդրելով որ ձեր ինները շատ չուշանան,

Կը մնամ ձերդ անձնուէր  
ԱՐՏԱՇԷՍ ԵԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մալկարա, 31 Մարտ 1907

Ազնիւ բարեկամուհիս,

Որքան ուշացայ ձեր վերջին նամակին պատասխանելու: Ամօթապարտ եմ ստուգիւ, բայց ամէն վայրկեան մտքիս մէջ ունէի ձեզի դրկելու պարտականութիւնս: Պարտականութիւն ըսի. ա՛յո բառը սխալ է հոս: Եթէ ընդերը քաղաքավարական պարզ պարտականութիւն մը կատարելու ըլլար, շատ դիւրին կզած կ'ըլլար մինչեւ այսօր բան մը դրել ձեզի: Մինչ-

դեռ իմ ուշացումը վերադրելի է մանաւանդ՝ լուսադոյն պատեհութեան մը եւ Հանդարտ տրամադրութիւններու, որք ինձ թոյլ պիտի տային ամէնէն թանկագին Հաճոյքներէս մին կատարելու, — ձեզի հետ խօսակցելու:

Ամէնէն առաջ, կ'ենթադրեմ թէ անտարբեր չէք իմանալու որ՝ մեր ընտանիքը սրտովին ուրախ է ձեր առողջութեան լուրերն առնելով, եւ անկեղծօրէն զգածուած է այն հաւաստիքով՝ թէ դուք յաճախ կը խորհիք մեր ունեւուն, ձեր անծանօթ ու հեռաւոր բարեկամներուն վրայ: Շատ անգամ կը հարցափորձեն զիս ձեր մասին, ձեր լուրերէն կ'ուզեն ունենալ, եւ անկեղծ հոգ ունին զէպի իրենց տաղանգաւոր բարեկամուհին: Ես ապահով եմ թէ բոլոր ասոնք կը բղխին ձեր աննկատ անկեղծութենէն, որով ընտանեկան մթնոլորտի մը զոյուրութիւնը կարելի դարձուցիք մեր միջեւ, նոյնիսկ այնպիսի պարագայի մը մէջ՝ ուր անձնագէտ զիրար չենք ճանչնար եւ օր մը իրարու հանդիպելու հաւանականութիւնն այ այնքան ցնորական կը թուի, աւա՛ղ: Ուրեմն փութագէ՛ք մեզի զրել ձեր վերջնականօրէն առողջացած եւ աշխատելու քաջապատրաստ զտնուած ըլլալու մասին. այդ բերկրաւոր լուրը պիտի երջանկացնէր զմեզ:

Շահագրգռութեամբ կարդացի ձեր գրական լուրերը: Կ'ըսէք թէ կիլ կը պատրաստուի նոր կազմակերպութեամբ հրատարակելու իր հանդէսը: Ուրախութիւն է այդ լուրը, բայց իմ մասին յօժարակամ կը խոստովանեմ թէ կիլ անթափանցելի գրող մ'ըն է: Իր Փրանսերէնը, — չէ՛ թէ արձակը, կրնամ էլէր ըլլալու պէտք չկայ, — իր ոտանաւորը անմեքձեանի կը մընայ ինծի, հակառակ իմ բոլոր բարի կամեցողութիւններու: Ես որ արդի Փրանսական բանաստեղծութիւնը զիչ շատ կը ճանչնամ, կիլի լեզուն առանձին կը գտնեմ: Ձկայ ուրիշ մէկը որ իրեն պէս գրէ. թերեւս միայն Մայլատէն՝ իր քանի մը վերջին գրութիւններուն մէջ, — Մայլատէն որ այնքան հասկնալի լեզու մը ունի իր լուսադոյն բանաստեղծութիւններուն մէջ: Կը խոստովանեմ թէ այս անհակացողութեան մէջ իմ անբաւականութիւնս կրնայ կարեւոր բաժին մը ունեցած ըլլալ: Այդ է որ ինծի համար՝ անկուրթի պիտի տայ խնդրել ձեզէ՛, զիս առաջնորդել կիլի լեզուին հասկացողութեան մէջ՝ դուք՝ որ զինքը մօտէն կը ճանչնաք, լուստեղեակ էք իր բոլոր մտադրութիւններուն, հնարքներուն: Ձինքը յաճախ կարդալով, տարտած ու քառասյին մեծփայլելութեան մը տպաւորութիւնը կ'ունենամ, յանկարծական փայլատակումներով լուսաւորուած: Ուրիշ՝ ոչինչ: Բայց կ'ուզեմ ընտելանալ ես այս տարօրինակ լեզուին: Կ'ուզեմ զիտնալ թէ բառականօրէն թարգմանելի՞ է ան: Ենորհապարտ պիտի թողուք զիս այս մասին գրելով: Այս բոլորը ըսի ձեզի, առանց վարանելու, չընկրկելով նոյնիսկ քիտիւրիւլ ըլլալու հաւանականութեան առջեւ:

Բայց ինչ որ զիս կը խանգարուէ ամէնէն աւելի, ձեր՝ մեծ հանդէսի մը մէջ մօտ գործելու հաւանական լուրն է: Կը սիրեմ յուսալ թէ ձեր յառաջիկայ նամակը աւետիսը պիտի բերէ այդ յոյսին իրականացման: Այն ատեն, ամէն դիւրութիւն պիտի ունենաք ձեր գրական ծրագիրները զործադրելու եւ միւս կողմէն՝ ձեր տաղանգը նուիրագործում պիտի դանկ Փրանսացի ղժուարահան ընթերցող հասարակութեան մէջ: Ձերմագէտ բարեմաղիքով եմ այդպիսի յաջողութեան մը՝ որուն այնքան արժանի էք արդէն:

Այլեւս շատ ցանցառօրէն կը գրէք մեր հանդէսներուն: Կեղծ համ-

Յարճերը գրեթէ երեսի վրայ թողած էք: Ամէն պարագայի մէջ փափաքելի էր որ զիրք մը ըլլար ան: Պապիկահանները չպիտի՞ ուզէին ձեռնարկել անոր հրատարակման, մտաւոր ապագայի մը մէջ: Պէտք է որ վերջապէս ձեր զիրքերու շարքը ունենաք դուք, եւ պատեհութիւնը ընծայէք ձեր տաղանդին վրայ հիացողներուն՝ լիուրի ճաշակելու զձեզ կարգալու հաճոյքը:

Գարով ձեր լուրերուն, այս տարի ձմեռը սաստիկ ու երկարատեւ եղաւ: Մինչեւ այսօր ցուրտ է, եւ օդերը խոնաւ կ'երթան: Բնութիւնը՝ մոխր ինքնամոխրութի մը մէջ ինքզինք կը վերապահէ դեռ: Ո՛չ պողոտեց մը կանանչ կայ ըլլալներուն կողերուն վրայ, ոչ իսկ պուրակ մը ծաղկած է ճամբաներու եզրը: Չափազանց առատ ու յաճախակի ձիւներ ունեցանք, որք հապիւ թէ հալեցան: Գարնան այս առաջին ամիսը՝ կատարելապէս ձըմեռնային ամիս մը եղաւ: Անձկութեամբ կը սպասենք արեւի ու դաշտի կեանքին, որ կ'ուշանա՛յ, կ'ուշանա՛յ: Ա՛հա՛ ձեզի լուրեր, որք այնքան ձըմեռնային են սակայն, ու այնքա՛ն տափակ:

Ու երբ այսպէս կը գտնեմ որ զձեզ լրջօրէն շահագրգռելու բան չունիմ ձեզի հաղորդելիք, ատիկա ինծի բաղձանքն ու յոյսը կուտայ թէ՛ ձեր նամակները չպիտի ուշանան, հաղորդելու համար ձեր դրական յաջողութիւններուն բերկրաւիթ լուրերը:

Սպասելով անոնց, կը խնդրեմ որ իմ սիրալիբ բարեւներո հանիք հաղորդել ձեր ազնիւ ամուսնին եւ ընդունիլ խորին ու յարգալիբ զգացումներու ապահովութիւնը:

Ձերդ անձնուէր

ԱՐՏԱՇԷՍ ԵԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մալկարտ, 27 Յունիս 1907

Ազնիւ բարեկամուհիս,

Բազմաթիւ պարտքերով բնուաւորուած եմ հանդէպ ձեզի, ու տակաւին կ'ուշանամ, չէ՛ թէ զանոնք մատուցանելու, ինչ որ շատ դիւրին չէր, կը խոստովանիմ, այլ ձեզի յայտնելու իմ խորին ու խիստ անկեղծ շնորհակալութիւններս, նախ՝ ձեր գեղեցիկ գրքին համար, զոր կարդացի ամենամեծ զմայանքով, ուր անգամ մը եւս կը հաստատուի ձեր խկատիւ տաղանդը, որուն նկատմամբ ունեցած հիացումս ըսելի՛ նոր չէր արդէն: Յետո՛յ՝ ստացայ նաեւ Տիւհամէլի հատորը, զոր կարդացի, եւ զոր կը վերադարձնեմ: Իսկ Բընէ Կիլի յօդուածները՝ ինծի բերին լուսարանութիւն-

ներ, որք կը ծառային աւելի գիտակցութեամբ գնահատելու իր մասնաւոր ու կենդանոց գեղեցկագիտութիւնը: Իր թէնոին՝ այո, քիչ մը կը կարծեմ հասկնալ- բայց ես միշտ անբախտ կը մնամ հասկնալու իր լեզուն՝ զոր չկրցան իրենց կարգին հասկնալ երկու Փրանսացի ճամբորդներ, անոնցմէ մին ըլլաւ ով աւելի կամ նուազ *au courant* իրենց բանաստեղծական շարժումին: Ինչ որ կը հաստատեմ ըրնէ կիլին մօտ, տեսակ մը հոյակապ ու աստուպելիական հպարտութեամբ անվախութեան ոգի է, տեսակ մը աննախորդ ու անբաղդատելի անհեթեթութիւն՝ ուր կայ լրջութիւն, մեծութիւն, համոզում, եւ անդրդուելի հաստատակամութեամբ կամք մը՝ որուն նկատմամբ ակնածանք կ'ունենանք, հակառակ ամէն բանի:

Անձնական ճաշակով խօսելով, գիտական բանաստեղծութիւնը չեմ սիրեր շատ: Եթէ, կը խորհիմ, այդ վարդապետութեան հետեւող բանաստեղծներ, իրենց «յուզեալ բնագանցութեան» մէջ կ'ուզեն գիտական ճշգրտութիւններ գնել, այդ ըլլաւ ու է վրիպական յաւակնութիւն մը թերեւ: Չէ՞ որ գիտութիւնը, այս օրէն մինչեւ վաղը, ինքզինքը կը հակասէ արդէն, եւ այսօրուան ճշմարտութիւնը՝ վաղուան սխալն իսկ է: Ըստ իս, տասնց բանաստեղծութեան սահմանները բռնադատ կրճատումներու հարկադիր ընելու, կրնայ գիտական բանաստեղծութիւն մըն ալ զոյսութիւն ունենալ, առանց միահեծան պահանջկոտութիւններու: Արուեստի ազատութիւնը ուրացող եւ շարժի լինելի: Արեւին տակ՝ ամէն թէնոսի, ամէն վարդապետութիւն՝ իր տեղն ունի: Ըստ իս՝ վարդապետութիւններու համեմատ չեն աստիճանաւորուիր գրագէտները. անոնք՝ լաւ են կամ ոչէշ. ասա այսչափ:

Չեմ գիտեր թէ դուք ի՞նչ կը խորհիք այս խնդիրներու մասին, բայց նախազգացում մը կ'ըսէ ինծի թէ՛ շատ ասարկարծիք ըլլալու չէք:

Բայց կը յուսամք թէ պիտի մտնայի այն աղնիւ ու վեհանձն վերաբերումը՝ զոր ունեցաք ինձ նկատմամբ, Տօմինոյի խնդրոյն մէջ: Փախուկ եւ անապարտ տղայ մը կ'երեւի այդ: Բայց նաեւ՝ որքա՞ն յաւակնոտ: Կը ցաւիմ իր վրայ, վասնզի վերջապէս դրող մըն է, որ կրնայ օր մը մարդ ըլլալ, եթէ քիչ մը ինքզինքը ճանչնայ, եթէ կարենայ չափաւորութիւն գնել իր թեթեւութիւններուն:

Պիտի ըսէի նաեւ թէ՛ նամակիս ուշանալուն պատճառն այն էր որ՝ կը յուսայի ձեր ղրկած ծրարին հետ ստանալ նաեւ նամակ մը՝ որուն այնքան սպասեցի, եւ որ ցարդ կ'ուշանայ:

Օրերէ ի վեր ձեզի գրելու վրայ խորհած պահուա, շատ մը բաներ կը բանաձեւէի, որոնցմով պիտի լեցնէի նամակս: Բայց ասա՝ միտքս բոլորովին պարապ է: Արդէն ի՞նչ կրնայի գրել՝ որ չձանձրացնէր զձեզ, որ կրննութիւն մը եղած չըլլար, եւ զոր կարդայիք հետաքրքրութեամբ: Հոս, մեր պիւղիտ մէջ, կեննքը իրստ միտքինակ է. այս տաքերուն՝ կարդալն ըսկ պրեթէ անկարելի: Խանութիս գիծացը աքառիս մը կայ: Յաճախ աս նոր շուքին ներքեւ կը նստինք. ճնճողակներ կը սիրաբանին կանանչ տերեւներուն մէջ, ստտերուն վրայ: Անոնցմէ մին կը յանդգնի մինչեւ մեր մօտը գալ, պետինը նետուած թռչնակերի մնացորդներ ժողվելու համար՝ պատահարաբար շուկայէն անցնող հաւի մը հետ: Խանութպան բարեկամներ՝ նարտ

ու թուղթ կը խաղան: Չէր հաստորը ունիմ ձեռքերուս մէջ: Գանի մը առջ կը կարդամ Աշուղէն... Ի՞նչ կախարդանք դրած էք դուք այդ քերթուածին մէջ, ինծի պէս անզգած վերսիֆիֆաթօր մը յուզելու, մանրերկրորդ մը՝ լացնելու սպառնալիքով: Եւ ահա՛ թռչնիկը մտերմօրէն կը մօտենայ ինծի՝ որ մեկուսի եմ, ու կը խորհիմ ձեզի, գիւղիս անկիւնէն, ձեզի՝ զոր դուցէ բնաւ չպիտի տեսնեմ, այլ որուն այնքա՛ն թանկագին բարեկամութիւնը՝ կ'երջանկացնէ զիս, կ'ամռօք իմ անփառունակ կեանքիս քաւութիւնը:

Ո՛հ ներեցէք ինծի, ազնիւ բարեկամուհիս, եթէ, իմ այս անզգոյշ անկեղծութիւններս գտնէք չափազանց ետական եւ անհաճոյ: Դուք միշտ խիստ պարզ, խիստ բարեկամական ու ներողամիտ եղած էք ինծի նկատմամբ: Չեմ ուզեր ընել բան մը՝ որ ցաւ կամ տհաճութիւն պատճառէ ձեզի: Այս վայրկեանիս՝ աղու մը տեղ դրէք զիս. յաջորդին՝ սթափած եմ արդէն, ու կը վերջացնեմ նամակս: Եթէ շուտով պատասխանէք ինծի, պիտի հաւատամ թէ տակաւին շատ ձանձրայի չէք գտներ նամակներու ընթերցումը:

Միշտ ձերդ անձնուէր  
ԱՐՏԱՇԷՍ ԵԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ԱՊՐԻԼԵԱՆ ԵՌԼԵՐԻՑ

ԵՐԲ ԱՊՐԻԼԵՍ ԷՐ ՆԱ...

Կամիտասն է երգում անոյշ մեղսօրօր.  
Գարնան ցիլերին ժայտներ քափում,  
Յոյսի, բերկրամեփի ակօսներում խոր՝  
Ազօթքը գարնան ծովի պէս ծիւում...

Կամիտասն է երգում անճրեւը գարնան,  
Դեղին ծիլերը հագնում են կանաչ, —  
Խնդում է հոգին, սի՛րտը գեղջկական,  
Լսում է հեռից եզների բառաչ...

Կամիտասն է երգում երկունքը հողի,  
Հասկերը բուրեան արտերի վրայ՝  
Վազում են գէլի արեւի շողին,  
Կարօտով փնտռում գգուամէքը նրա...

Կամիտասն է երգում կարկաշն ազգկայ,  
Սիրոյ գաւաթով արբեցող սողին.  
Կարօտներ՝ վառուղ անճուն գիշերուայ,  
Վշտեր՝ պարուրուած հայրենի հողին...



Կամիտասն է սփնում մինչեւ ուշ գիշեր. —  
Ի՞նչ խոնար աչքեր... դողդոջուն շուրթեր...  
Հոգու սիւներն են փչում մէկ առ մէկ,  
Բըզըկտում սիրտը խլեակները հէ՛ք... —

Մինչ ո՞ւր, կամիտա՛ս, մե՛նք քայլենք այսպէս.  
Անապատներում անջո՛ւր... տօթակէ՛զ...  
Մերձի ու անօրի՛... մտրակների տա՛կ...  
Մեր սիրտը փրծուա՛ծ, մեր սիրտը պապա՛կ...

Կամիտասը լուռ ճայում է հեռուն. —  
Մարթաւած մարմիննե՛ր... աչքեր սեւեռու՛ն...  
Աւազների մէջ մատնե՛րը մանկան...  
Ցինների կտցած կուրծքերն ազգկան...

Ցրուեց մշուշը աչքերից անկեանք. —  
Շարքերի վրայ անգուսպ հեկեկանք.  
Մաթի մէջ մորմնք, հոգեմաշ խռովք՝  
Ազօթքը դաքճաւ երկնային նզովք...:

ԱՐՇԻ

# ՀՐԿԻԶՈՒԱԾ ՕՐԵՐ

Գրեց՝ ԱՆԱՅԻՍ ՀԵՐՈՆ

Երբ զպտի կինը, Մունա Մանսուր, արթնցաւ, արթնցած ըլլալու տպաւորութիւնը շունեցաւ բնաւ: Որովհետեւ զոց աչքերով իսկ միտքը պայքարած էր ժամերէ ի վեր, զլանալով իրեն նոյնիսկ թուլցած եւ մեղկացած մարմնի մը խաղաղութիւնը:

Նախ հիւանդ կարծեց ինքզինք: Ձեռքը տարաւ ճակտին, բայց չկրցաւ հաւատալ ենթազրութեանը: Ձեռքին տաքութիւնը աւելի զօրաւոր էր:

Պատուհանները գոցած եւ ծածկած էին, որպէսզի անձրեւին կաթիլները նեքս չսահին. այնպէս որ յոյսի նշոյլներ միայն կ'իջնէին վար, այն աստիճան, որ հազիւ միայն շուրջիներուն դիմազիծերը կրնար զանազանել:

Դուրսը Յունուարի քամին կար: Կատղած քամին, որ հաւանաբար կը սառնեցնէր անցորդներուն մասները: Ներսը, հակառակ պատերուն ծակտիքներէն սպրդող ցուրտին, կը լողար լճացած քրտինքին մէջ:

Սրահին շորս պատերուն տակ խուճր խումբ կ'իներ, նստած, կատղած գաղանի ախորժակով կը լափէին իրենց բաժինը: Այնքան անապարանք կար այդ գործուղութեան մէջ, որ մարդ չէր խօսեր: Դիմացէն՝ անկիւնը, բանտապահ կնոջ գոռոզ նայուածքը կ'իշխէր շնչահեղձ մըթնալորտին՝ իր սաղմին մէջ խեղդելով ամէն շարժում կամ ձայն: Այս կաշկանդուած լուսթեան, կիներու նստուածքին,

ուտելու ձեւին, պատուած հագուստներուն մէջ այնքան դձուգութիւն կար, որ ամչցու ոչ թէ հասարակ բանտարկեալ մը ըլլալուն, այլ հասարակ մարդոց մէջ դտնուելուն համար. Գեորգի, իրմէ քիչ անդին, իր կէս օրուան ճաշի բաժինը կար: Ծառ բան չէր: Կտոր մը հաց եւ բանջարեղէնի ապուր մը: Սարսափելի անօթի էր. եւ չէր յիշեր իսկ քանի օր առաջ կերած ըլլալը: Սակայն հսկիչին նայուածքը, յետոյ կիներուն տղեղ շարժումները թոյլ չէին տար որ ձեռքը երկարէր արտէս: Ուտելու պարագային անոնց դասակարգին իջած ըլլալ կը կարծէր: Յետոյ նոյնիսկ մտածեց թէ կերած միջոցին ընտանիքէն մէկը կրնար այցելութեան դալ եւ անկումը տեսնել:

Ստամոքսը եւ հպարտութիւնը սկսան պայքարիլ մինչեւ որ առաջինը տեղի տուաւ: Մանր կաշկանդումէ ազատուողի եռանդով սկսաւ դիտել պատերը: Առաջին անգամը չէր որ կը դիտէր: Այլիւս զոց դիտէր անոնց ամէն մէկ մանրամասնութիւնը: Մօտուորապէս շարաթէ մը ի վեր որ հոն էր, ամէն անգամ որ խոսվէր կուզար այրել-տաղելու իր մը ասածելու կարողութիւնը, աչքերը կ'ուղղէր պատերուն՝ ապաւինելով անոնց օգնութեան: Չորցած պատեր էին: Լայնքին, դէմ դիմաց խաչուած Յիսուսի եւ կախաղանի վրայ երեքացող մարդու մը պատկերները իրարու կը նայէին: Հա-



բիւրեւորող անկամ ըլլալով իրեն այնպէս թուեցաւ, թէ մարզը իր մեռած նայուածքովը թողութիւն կը խնդրէր աստուածորդիէն. իսկ ան իր անմեկնելի ժըպիտովը կը զարմանար, թէ ո՛ւր մնացած էր իր յաղթանակը, երբ զարեք վերջ մարդիկ նոյն ձեւով կը պատժուէին: Միւս պատերուն վրայ, քով զորդի, տակ տակի, Սուրբ Գրքէն յայտարարութիւններ, զգառութեան եւ հաւատքի հրաւիրող խօսքեր կախուած էին: Խնդարու անզուսպ փափաք մը ունեցաւ: «Ինչպէ՞ս կրնամ հաւատալ, երբ պատին վրայ դէժ դէժի ներդրածութիւնը մարմնացնող ժպիտը դիտող եւ վրիժառութիւնը խորհրդանշող չորացած փայտի կտորները կան» խորհեցաւ: Նորէն խնդաց. «Ժիշդ այնպէս, ինչպէս ես խրատ պիտո՞ք տայի զաւակներուս...» անցուց միտքէն: Աղջիկներուն վերջիշումը բռնութեամբ քնացած զգացումները արթնցուց: Շարքի մը ի վեր չէր տեսած դանձոք, Տարբեր պարագաներու մէջ թերեւս այնքան չկարօտնար: Այդ օրը հինգշաբթի էր. այցելութիւն ընդունելու օրը: «Երանի թէ դան», ըսաւ պոռթկացող խանդաղատանքով: «Երանի թէ...» չկրցաւ շարունակել: Գրեւէր թէ անոնք պէտք չէր գային: «Ձեռն հասկընար», խորհեցաւ, հաշտուելով անոնց չգալու պահափարին հետ: «Ձեռն կրնար ըմբռնել, թէ ինչո՞ւ եկած եմ այս ծակը...»: Քիչ ետք ուղեց ամուսինին մասին մտածել, երազել, երեւակայնել, բայց չկրցաւ. համարձակութիւնը չունեցաւ: Հիմա տարօրինակ կերպով կ'ամբողջանային իր օղիքը գործած ըլլալուն՝ այլ անոր հետեւանքին համար: «Արդեօք կապի պիտի հասկնա՞յ վիճակս, պիտի ըմբռնէ՞ գործած եղանակիս էութիւնը», խորհրդածեց: Բայց եւ այնպէս կը զարմանար, թէ ինչո՞ւ քանի ամուսնոյն տոյնութեան ժամերը կը մօտենային, այնքան անհաւատ կը դառնար իր մասին: «Հապա եթէ չգայ», խորհեցաւ յանկարծ: Այո՛, կրնար չգալ. չէ՞ որ իրաւունք ունէր, չէ՞ որ ինք բան-

տարկուած կին մըն էր, որ իր կեանքին օրերը կը բաժնէր գոհակ կիներու հետ, անոնց հետ ճաշած, ծալապատիկ նըստած, անոնց խօսակցութիւնը լսած... Քրտինքի կաթիլները բարակ ակօսներ կը շինէին մարմնին զանազան մասերուն վրայ: Հակառակ տոտր, բարակ դող մը ելեկարական հոտանքի մը նման կը սըպլըրդէր մարմնին ներս: Մեքենական արդուութեամբ ծածկոցը քաշեց վրան. ու գրպանէն հանեց գլանիկի տուփը, որ պանծի մը պէս պահած էր իր քովը: Անօթի շարժումներով վառեց հատ մը եւ իրար ետեւէ յաղածօրէն քաշեց ծուխը, մինչեւ որ սուսկերուն մէջ զգացած բարակ այրուցքը հոգեկան թեթեւութիւն մը տուաւ իրեն: Հիմա այլեւս հանգիստ էր: Անօթութիւն չէր զգար: Մասներուն ծայրովը հրեց արիւնք, որպէսզի ստուած ապուրին հոտը չաղարտէ ծխախոտին բոյրը: Քիչ մը աւելի կոթեցաւ պատին եւ այդպէս մնաց անշարժ, մինչեւ որ աղուոր թուրութիւն մը նորէն պարուրեց մարմնին բոլոր մասնիկները:

- Մուսա Մանսուր, պոռայ ձայն մը ներսէն:

Անդրազարձաւ որ բան մը չէր ըզգար: Արիւնը սառեցաւ երակներուն մէջ, «կրնամ մեռնի՞մ մտածեց: Թեւերը, ոտքերը դողացին, ծածկոցը աւելի պլլուեցաւ մարմնին շուրջ, եւ երբ ոտքի ելլելու ուզեց՝ չկրցաւ ազատուիլ անոր կաշկանդումէն:

«Ամուսինս ըլլալու է» անցաւ միտքէն: Պիտի նախընտրէր գայն չտեսնել: Կամ տեսնել միայն հետուէն, ցանկապատի մը ետեւ պահուրտած, առանց ինքզինք ցոյց տալու:

- Մուսա Մանսուր, կրկնեց բանտապահը նորէն: Չէ՞ս լսեր, քեզ կը կանչեն:

Շուարած իջաւ, բայց չկրցաւ քալել: Հսկիչ կինը մօտեցաւ իրեն եւ լիբր ձայնով մը պոռայ.

- Քեզի՛ կ'ըսեմ, չէ՞ս լսեր: Խո՛ւլ ես ինչ է: Ուրախացի՛ր, մարդդ եկեր է: Ձգացումներու յորձանք մը ոտքին

մատեներուն ծայրէն բարձրացաւ աչքերուն: Լա՛ր թէ խնդար: Երգէ՛ր թէ լըռէր: Ի՞նչ ընելիքը չգիտցաւ: Մեքենական արարողութեամբ շտկեց հազուատը, կօշիկին կապերը ամրացուց, մատեներուն ծայրովը յարգարեց մազերը. բայց նորէն չկրցաւ քաշել:

- Աճապարէ՛, միշտ քեզմո՞վ պիտի զբաղինք, պտուղ հսկիչը. եւ երբ տեսաւ թէ զինքը չէր լսեր, բռունցքի ուժեղ հարուածով մը հրեց կռնակէն:

Ասիկա դազաթնակէտն էր: Առանց իսկ դառնալու, տեսնելու համար իրմէ բան մը խնդրելու իսկ անարժան կնոջ մը գէմքին գծորային արտայայտութիւնը, սկսաւ կամակոր յառաջանալ: Իր պարտութիւնը շուրջիցնէրուն ցոյց չտալու համար: Ոչ ալ արցունքը ցոյց տալու: Նորածին մանուկի մը պէս կուլար, առանց իսկ լսելու իր հեծկտանքը, հեկեկանքը: Առանց իսկ անդրադառնալու թէ ի՞նչ կ'ընէր: Օրերէ ի վեր զսպուած հպարտութիւն մը, որուն բեռնակիրը եղած էր իր կեանքի ամբողջ երկայնքին, հիմա ին՛չ՞նչ ու անօգնական կաթիլներու վերածուած՝ կը պարպուէր էութենէն դուրս. մինչեւ որ ինք մտար անգէն, կըմկըւած, պատրաստ ինտու, կոխկրտուելու, ամենուն անարգանքը մտրտուի:

Բակին մէջ ամուսինը իրեն կը սպասէր:

Քանի կը յառաջանար, արցունքը ինքնարեքար կը դադրէր: Քալուածքը արագացուց, շուարումը ծածկելու համար. միայն նայուածքը չկրցաւ որոշ տեղ մը կեդրոնացնել: Չէր ուզեր նայիլ անոր, աչքերուն կարմրութիւնը ցոյց չտալու համար: Չէ՛ր կրնար: Որքա՛ն բան ունէր ըսելիք: «Շարժուան բոլոր պատահարները պէտք է պատեմծ խորհեցաւ: Բայց երբ ինքզինք դասու անոր սովէն, երեւակայութիւնը միայն կրցաւ աշխատիլ:

- Բարե՛ւ, ըսաւ ամուսինը, խանդադատանքի եւ կարօտի շեշտ մը զնկլով անոր մէջ:

Ուզեց պատասխանել, բայց վախցաւ որ հազիւ բերանը բացած՝ արցունքը կրնար խեղդել զինք:

- Բա՛... ըրաւ ու չկրցաւ շարունակել:

Ուզեց աչքերը բարձրացնել, նայիլ անոր աչքերուն, բառերուն պակասը արտայայտութեամբ լեցնելու համար: Բայց նայուածքը մինչեւ ձեռքերը բարձրացաւ միայն: Ինչքա՛ն գեղեցիկ ձեռքեր թուեցան անոնք: Առաջին անգամ տեսնողի հիացումով զիտեց զանոնք: Դիտեց նաև համեղ կերակուրի համը քիմքին զպտուցող կնոջ մը փորձառութեամբ: Այդ ձեռքերը շատ բան էին իրեն: Երազէ՛լ կուտային: Զգաց թէ միայն այդ ձեռքերը կրնային փրկել զինք այդ գեհնէն: Շարաթ մըն էր չէր տեսած զանոնք: Ուզեց թեւերը երկարել, գոնէ երկվայրկեան մը շոյել, զգալ անոնց տաքութիւնը, գորութիւնը, աղուամազերուն թաւութիւնը: Բայց անդամալուծուած կը կարծէր ինքզինք. ինք որ իր ամէնէն երկրայական զօրքն իսկ կրնար առանց քաշուելու խօսիլ ամուսնոյն:

- Վաղը դա՛տդ է, նորէն ըսաւ կապի ընկճուած ձայնով մը:

- . . .

- Վա՛ղը առտու:

- Այո՛:

Դէ՛մ գի՛մաց, իրարմէ հազիւ քայլ մը հեռու կանգնած էին զլիտիկոր: Բակին մէջ մարդ չկար: Բայց երկուքն ալ զիտէին թէ զաղտարողի նայուածքներ կը զիտէին զիրենք:

Նոր նկատեց թէ ամուսինին չապիկը ազտոտ էր: «Մաքուրները վերջացած ըլլալու են», խորհեցաւ: Յետոյ ուզեց հարցնել թէ ճաշը ո՞վ կ'եփէ. պարիկները դպրոց կ'երթա՞ն, զոգնոցները ո՞վ կ'արգուկէ, դասերը ո՞վ կը սորվեցնէ, ո՞վ անոնց ձեռքերը, պճիկ ոտքերը կը լուսա՛յ... ո՞վ...:

- Պարիկները հետո պիտի բերէի, բայց չկրցայ...:

Զհարցուց թէ ինչո՞ւ չկրցաւ:

- Լա՛ւ են, ըսաւ կարմրած աչքերը

վեր բարձրացնելով:

- Այո՛, ըրաւ ամուսինը զլիսով, եւ առաջին անգամ ըլլալով իրենց աչքերը խաչածեակներն զիրար:

Կապի կը նայէր իրեն՝ զոհուելու պացող գառնուկի մը աչքերով: Ինք, վախով՝ որ իր այդ ձախաւեր նայուածքն իսկ կրնայ ընդմիջտ հեռացնել զինք իր սիրելիէն: «Եթէ զիսնար որ ամէն բան իրեն համար ըրի», խորհեցաւ:

Բայց եւ այնպէս չկրցաւ տէրը ըլլալ իր ջիղերուն: Ամուսնոյն անմեղ եւ ներողամիտ նայուածքը կ'աշխարհէր իր հոգին: Փակեց աչքերը եւ առանց գիտնալու թէ ի՞նչ կ'ընէ, գլուխը հակեց առաջ, մինչեւ որ ճակատը մօտեցաւ, հանդէպաւ անոր ուսին: Արցունքը կը հոսէր, աղուտը, միանուազ երած շտապեակն մը պէս, որ աֆրոնի տուած ըզպայնութիւնը կու տար իրեն: Թուլութեան հոսանք մը կը տարածուէր մարմնին մէջ: Ձեռքով ուղեց սրբել աչքերը: Բայց շարժող թեւը բանտարկուած ըզպաց ամուսնոյն բազուկներուն մէջ: Այլեւ անոր շունչը կը զգար իր մազերուն վրայ: «Քրտինք կը հոտի», խորհեցաւ նորէն շապիկը մտարեկով: «Հաւանաբար ես ալ կը հոտիմ», շարունակեց արցունքին մէջէն ժպտելով, եւ ինքզինք անյի մօտեցուց, աւելի լաւ ըմբոշինելու համար քրտինքին բոյքը:

Ոտքի, կոթնած իրարու, մնացին այդպէս, մինչեւ որ շունչը պակսեցաւ իրենց:

Առաջին բաժնուողը ամուսինը եղաւ: - Ե՛րբ տուն պիտի գաս, ըսաւ, հիւանդ կարօտով, եւ երբ կինը շարտասախանեց,

Գիտե՛ս, ըսաւ, աղջիկները ըսին որ իրենց կողմէ համբուրեմ քեզ...

Հակառակ ցանկութեան չկրցաւ համբուրել: Եթէ այս նախազատութիւնը զիջ առաջ յիշած ըլլար, հիմա արդէն համբուրած պիտի ըլլար: Մպասեց որ կինը նորէն մօտենայ, երբ ուշացաւ, ամչնալով իր համարձակութիւնէն, զրպանէն ծրար մը հանեց,

- Նայէ՛, ըսաւ, զեղի ի՞նչ բերի: Ամերիկեան գլանիկներ էին:

Ենորհակալ եմ, ըսաւ կինը, և ձեռքը երկարեց գանոնք առնելու համար: Երկուքին ձեռքերը մնացին իրարու միացած:

- Հիմա պէտք է երթամ, ըսաւ մարդը: Ու հագիւ ըսած, գոջաց ըսածին:

- Ետու եկուր նորէն, շինչաց կինը: Յետոյ իրարու աչքերու մէջ նայելով՝ հեռացան իրարմէ:

Ուրիշ ըսելիք չունէին:

Կապի դարձաւ ետ. կոտրած աթոռին վրայ նետուած գլխարկը առաւ, մեքենարաք նորէն մօտեցաւ, նշան ըրաւ զլիսով աւ քալեց:

Հիմա կրնար նայիլ անոր առանց ամբընալու իր նայուածքէն: Անոր հեռացող ամէն մէկ քայլին իր սէրը կը մեծնար: Եթէ միայն չամչնար, ո՛րքան ըսելիքներ ունէր: Մոռցաւ նոյնիսկ ըսել որ դիչերը աղջիկներուն սենեակը պտուկի, անոնց վրան լաւ ծածկէ, օդային կազը բաց չմտնայ, շապիկները լուացուելու զրկէ, ... որքան ըսելիքներ կային ստակաւին...

Ամուսինը զլիսակ կը հեռանար:

Թիկնեղ Հասակը պզտիկցած կը թրւէր այլեւ: Գեղեցիկ ձեռքերը հագիւ կը տեսնուէին: Գլխարկին ծառութիւնը յայտնի չէր: Ուղեց ետեւէն պոռալ, որ առանձնութեան մէջ շատ չծխէ, բայց կապի կ'անհետանար:

- Վերջացա՛ւ, ըսաւ հակիչ կինը, կոտրուած քաղաքավարութեամբ:

Թիչեց թէ ազատ մէկը չէր:

Ազատ ըլլալը երկար չլիչելու համար, շուտով հետեւեցաւ անոր:

Տ

Կողմնակի նրբանցքին մէջ նստած, կը սպասէր իր կարգին: Իրմէ քիչ հեռու կին ստաիկան մը, բծախնդիր հետաքրքրութեամբ, կը մեկնէր իր ամէն մէկ շարժումը: Ինք կարեւորութիւն չէր տար անոր, քանի որ ախորժակ չունէր արտառց բաներ ընելու:

Բանի դուռը կը բացուէր, պաշտո-

նիայի մը մուտքն ու էլքը դիւրացնելու համար, սուր ցաւ մը կը զգար սրտին մէջ:

Ասիկա երկրորդ դատաւարութիւնն էր եւ սուսինին շափ տակնուվրայ կ'ընէր զինք: Սիրտը երբեմն մեծ շարժի մը կը մտնէր մարմինը. իսկ երբեմն ալ զերեզման կը փոխադրէր: Գուրբը հաւանաբար ընկերներ, բարեկամներ, աղափականներ՝ թուլամորթի հետաքրքրութեամբ եկած էին զինք զիտելու: Իր արցունքի կաթիլները համբելու եւ շեօ գիտեր ի՞նչ գոհացում ստանալու անոնցմէ: Գազանի մը կատաղութեամբ կ'ատէր անոնց ներկայութիւնը այդտեղ, ոչ իսկ ամուսիններ կ'ուզէր, պէտք չունէր անոնցմէ գուր մուրալու: Իր ուղածը սուսնաձուլութիւնն էր, զէժ գիմաց, դատաւորին հետ, ինքզինք կարենալ բացատրելու համար անոր: Չամչնալու համար իր արարքը արդարացնող կամ դատապարտող փոփոտեմներէն, որ ախանջին պիտի հասնէին անմիջապէս որ հարցաքննութիւնը սկսէր:

Ձանդը զարկաւ: Գուրը նորէն բացուեցաւ և տեսաւ որ իրեն նման կին մը, օստիկանին ընկերակցութեամբ, կը մըտնէր ներս: Հիմա կարգը իրենն էր: Ձըսպատեց որ զէժի ոստիկանը ծայն տայ իրեն. ասքի ելաւ եւ համարձակ քայլերով առաջարկեց որ զինք առաջնորդէ:

Իր երեւումը սրահին մէջ լուսութեան մատնեց բոլորը: Գլուխը կախ, խուսափելու համար նայում քնեցու խաչաձեւութիւն, դասը զոց սորված աշակերտի մը պէս յառաջացաւ եւ զբաւեց տեղը: Այլեւս ոչ ոք կը խօսէր իր ետին: Գոհ էր լուսութենէն: Ինքզինք կարուած կը զգար բոլորէն: Անխարհի մէջ միայն ինքը կար, զիմացի կանաչ սեղանին առջեւ նստած դատաւորին հետ, որուն պիտի փաստէր ոչ միայն իր անմեղութիւնը, այլև ստիպողականութիւնը իր գործած արարքին: Այլեւս բանտարկեալ կին մը չէր. այլ մարդկութեան պատգամաւորը որ արդարութիւնը կըտուորող այս խորանին պիտի դար իր թէզը

պաշտպանելու, խիղճին ծայնը բարձրացնելու:

Գատը սկսած էր. կը տեսնէր թէ նախապատրաստական արարողութիւնները կ'ըլլային:

- Մունա Մանտուր, կանչեց դատաւորը:

Ինքնարեքարար ելաւ ոտքի:

Գատաւորը ձեռքի թուղթերը շրտկեց, մէկ քանի հատը տեղաւորեց սեղանին վրայ, միւսները թղթատեց եւ ծանր ձայնով սկսաւ կարդալ:

- Ամբաստանեալ, ծնած Գահիրէ 1930-ին, ամուսնացեալ, մայր՝ երկու զաւակներու, բնակութիւն հաստատած Մէատի արուարձանին մէջ, կամբաստանուի սպանութեամբ Պեհիշ Ֆաթհալլայի, որ արիւնջուայ վիճակի մէջ զըտնըւած է կիրակի առաւօտ ժամը 10 ու կէսին, ամբաստանեալի յարկարածին մէջ:

- Ամբաստանեալ, ճի՛շտ են այս յայտարարութիւնները:

- Այո՛, ըբաւ գլխով:

Գատաւորը շարունակեց:

Ենթակի առաւօտ, երբ ընտանիքը հաւաքուած խօսակցութեան մէջ էր, Պեհիշ Ֆաթհալլայ, որ մայրն է ամբաստանեալին ամուսնոյն, վիճարանութիւն մը կ'ունենայ խօսակիցներուն հետ: Վիճարանութիւնը ընտանեկան բնոյթ ունենալուն, երկարած է, մինչեւ որ խօսակիցները առաջուց տեղեակ ըլլալով Պեհիշ Ֆաթհալլայի անզիջող բնադրութեան, տեղի տուած են, բացի ամբաստանեալէն, որ շարունակած է վիճարարանիլ, մինչեւ որ Պեհիշ հանրմ բորբոքած՝ յառաջացած է ապտակելու համար իր հարսը, մինչ այս վերջինը ազատելով անոր հարուածէն, զայն իր երկու թեւերով հրած է ախպիսի ուժգնութեամբ մը, որ Պեհիշ Ֆաթհալլայ զարնըւելով պատին, վիրաւորած է իր զանկը և, արիւնահոսութեան հետեւանքով, քանի մը ժամ վերջ աւանդած է հողին: Այս յայտարարութիւնը ստորագրած են հանգուցեալին երկու զաւակները,

Կապի Ծաթհալլաւ, Պահիջ Ծաթհալլաւ, ինչպէս նաեւ դրացունհին՝ Պատիջէ Սա- մի, որ ներկայ եղած է այդ միջոցին»:

— Ամբաստանեալ, անճիշդ բան մը կը տեսնե՞ս այս յայտարարութեան մէջ:

— Ո՛չ, ըսաւ աչքերը վեր առնելով:

Դատաւորը շարունակեց:

— Ճի՛շդ է որ Պեհիջէ Ծաթհալլաւ մայրն է ամուսնոյդ:

— Այո՛, ըսաւ շուտով:

Շուով մը բարձրացաւ սրահին մէջ:

— Ձե՞ս կարծիք որ պէտք էր յար- ցանք ունենայիր, մասնաւորապէս ա- մուսնոյդ մօրը հանդէպ:

— Անիկա մայր չէր, բացառանչեց անապարանքով: Ուրախ՝ որ վերջապէս խօսելու առիթը տրուած էր իրեն: Մայր ըլլալը կենդանական արարք մը չէ միայն: Մայրութիւնը ուրիշ բան է: Մայրութիւ- նը տալ է, առնել չէ...

— Թողունք իր լաւ կամ դէ՛լ մայր ըլլալը: Ամբաստանեալ, կին մը սպան- նած ես. ի՞նչ պատճառաբանութիւն կրնաս տալ ստոր. . .

— Կանխամատուած սպանութիւն չէր ըրածս: Ձինք չհրելու պարագային, չեմ գիտեր թէ ես ի՞նչ պիտի ըլլայի: Ըրածս ինքնապաշտպանութիւն մըն էր միայն: Անկախ իր մահէն, իր ներկա- յութիւնը միշտ պատուհաս մըն էր մեր տան մէջ: Մեր երջանկութեան, զուակ- ներուս կրթութեան թշնամին էր ինք: Կին մը չէր ինք: Սաղայէ՛լ մըն էր: Իր ուղածը իր հանգստութենէն զիջում մը չընելու յամառութեամբը մեր զժբախ- տութիւնն էր...

Կը զգար թէ այլեւս հաւասարակը- ռութիւնը կը կորսնցնէր: Ո՞վ էր ինք: Ո՞վ էին այս բոլոր մարդիկը որ չըջա- պատած էին զինք, բերնէն խոստովա- նութիւն կորզելու շարժումութեամբ: Ի՞նք պէտք չունէր անոնց: Իր անմեղու- թիւնը փաստելու պէտք չունէր, քանի որ վստահ էր իր մասին: Իր խիղճին հանդարտութիւնը կը բաւէր արդէն. կը պահանջէր զինք...: Բայց եւ այնպէս խօսեցաւ, բանտէն ազատուելու սիրոյն,

զուակնեքուն, ամուսնոյն սիրոյն, եւ մահունէ վերջն իսկ իրենց երջանկու- թեանը վրայ աւառնող անոր սուրու- կանը ընդմիշտ ջախջախելու յոյսով: Հարցաքննութիւնը կը շարունակուէր... Ինք կը խօսէր: Մարդիկ կ'ընդմիջէին զինք, վկաներ խօսք կ'առնէին: Մոռցը- ւած կէտեր կը լուսարանուէին: Սպանու- ուողին զէ՛մքը մէջտեղ կ'ելլէր: Անոր հրէշութիւնը սահմանող ամէն մէկ ակ- նարկութեան՝ ժողովուրդին մէջ բացա- րանութիւնը կը սկսէր: Ինք առանց ու- շաղթութիւն դարձնելու կը շարունակէր: Կ'ըսէր թէ ան մարմնապէս փճացած կին մըն էր արդէն, ամուսնոյն մահուան բա- րոյապէս պատճառը ինք եղած էր. թէ՛ զուակնեք իրեն համար միայն հասոյ- թի ազդիւր էին, հարսերը ոպտտուհի, թոռները գործակատար... կուտար ըն- տանիքին վերաբերեալ մանրամասնու- թիւններ, նիւթականի հետ կապ ունե- ցող հարցեր, հոգեվիճակի ազդող նա- խաղասութիւններ: Պօքեր, որ ուրիշ ոչ ոքի, նոյնիսկ մտերիմ բարեկամուհի չէր ըսած. համարձակութիւնը չէր նե- րած: Ինչպէ՛ս կ'ըսէր հիմա այդ բոլորին առջեւ...:

Երբ հարցաքննութիւնը վերջացաւ, կարծեց թէ ամէն ինչ պէտք եղածին պէս ըսած էր: Հոգեկան թեթեւութիւն մը զգաց: Նորանցքներուն մէջ դէպի իր տե- ղը երթալով, կը ժպտէր:

Կարելի՞ էր միթէ, որ արդարութիւ- նը լյաղթանակէր...:



Հինգ տարի մնաց բանտին մէջ: Ամ- րոտանութիւնը ծանր էր: Հակառակ մեղմացուցիչ պարազաներուն, բացա- յայտ էր որ կեսուրը իր ձեռքերուն մէջ իր ձեռքերովը սպաննուած էր:

Օրերը դիւրին չանցան: Այդ աղ- տոտ սրահներուն մէջ աշխարհին վերջը մօտեցած կարծեց: Սկիզբը չհաւատաց թէ մարդիկ կրնային հրէ՛լ մը աշխարհէն վերցնելու համար զինք պատժել: Միտ- քէն օրինակներ անցուց եւ բաղդատեց իրարու: Կը հաւատար թէ մարդ իրա-

ուսնք չունի իր նմանը սպաննելու, քանի որ կարողութիւնը չունի զայն վերահանդանացնելու: Սակայն ինք ուզելով չէր սպաննած: Զգայութեան մէկ վայրկեանին Հարուածը ուժգին եղած էր: Բժիշկները Հաստատած էին արդէն իր ջիւղերուն դիւրագրգիռ ըլլալը: Յետոյ, իր սպաննածը մարդ մը չէր բառին վերացական իմաստով: Գազան մըն էր, որը թերեւս զինք սպաննէր եթէ ինքզինք պաշտպանած չըլլար:

Ամէն մէկ օրը փնտցած կեանքի մը պէս երկար թուեցաւ: Շարաթը անպամ մը զուակնեքը, մօրը ընկերակցութեամբ, կու դային զինք տեսնելու: Ամէն անգամուն տակնուվրայ կ'ըլլար: Ամուսինը ջիշ կու դար: Գալուն՝ իբրբաւ մասին չէին խօսեր: Նոր ծանօթացած օտարականներու պէս կը նստէին զէմ գիմաց: Ան իր դործին մասին կը խօսէր. ինք՝ կը պատմէր իր բախտակիցներուն կեանքին, ու կ'ամչնար ամէն մէկ ըսած քառին Համար: Պօսելիք միակ նիւթը այս էր:

Ուրիշ այցելութիւն չէր ընդուներ: Եթէ զային իսկ, չէր տեսնուեր: Պատճառարանութիւններ հնարելով ետ կը լըկէր:

Ամուսնոյն բերած թերթերը կը կարդար, գլանիկները կը ծխէր: Մուխին մէլէն կ'երազէր: Սակայն իր սուր երեւակայութիւնը ուժ չունէր այլեւս: Ամուսինը Հազիւ թէ կրնար երազել: Կ'ամբընար իրենց տարիներու կեանքին ամէնէն սովորական մտերմութիւնն իսկ վերջիչելու: Նոյնիսկ քաջութիւնը չունէր անոր դեղեցիկ ձեռքերը երազելու: Երբեմն միայն, յոգնած պահերուն, իր անկողինը կը ցանկար. բայց միայն ինքզինք կ'երեւակայէր մէջը: Ամուսինը քովը ունենալու ցնորքն իսկ մեղք մը կը թուէր իրեն. աւելի ահաւոր մեղք մը, քան իր կեսրոջ սպաննութիւնը: Իր սէրը ամուսնոյն Հանդէպ կաթիլ մը իսկ չէր պահում: Ընդհակառակն դարբերու իմաստութիւնը կտրծեա պարուրած էր զայն: Պատանձակած սէր մը եղած էր

անիկա: Միշտ տալու պատրաստ: Ընդունելու դազափարն իսկ ուրացող: Միշտ կոյր նուիրումի ձեռնառու: Փոխադարձ շոյանքն իսկ չաղբնկալող: Նոյնն էր նաեւ զուակնեքուն Հանդէպ: Պիտի ուզէր իր կեանքին ամէն մէկ երկվայրկեանին իսպը ելլել անոնց սիրոյն. անոնց կեանքի ճամբան յարգարելու սիրոյն, անոնց տուայտանքները զովացնելու, նկուրթիւնները սրբելու սիրոյն, Հոգ չէ թէ անոնց քովը չըլլար, զիբնէ իր ներկայութեամբը չամջնելու Համար: Ուղեց օրերը արդիւնաւոր անցընել: Թերթերը չէին զոհացներ զինք: Ամուսինէն զիրքեր ուզեց: Անոնք շատ անիրական թուեցան իրեն: Ամէն պատմութեամբ, ամէն ողբերգութիւն կը բազաւտէր իրենին հետ, եւ միշտ անիմաստ կը գտնէր: Ուզեց օրազիր պահել: Ապրումները, խոհերը գրել: Գրածները չհանեցաւ, սրովհետեւ բնականօրէն զանոնք արտայայտելու կարողութիւնը չունէր: Ինք զբաղիտուհի չէր: Քանի մը ռեննկակիցներու լեզուի զտներ տալ ուզեց: Նախ ողբերգութեամբ, յետոյ Հիասթափութիւնը չուշացաւ: Պէտք եղածին չափ ընդունակ չէին: Այլեւս բանէ մը Հանոյք չէր առնէր: Շատ անգամ կարօտը կը զգար գեղեցիկ երաժշտութեան մը: Երբեմն փափաքը կ'ունենար ըսելու ամուսնոյն այդ մասին. սակայն չէր ուզէր, կարծելով որ ձայնափիւտ մը ունենալու պարագային՝ երաժշտութիւնն ալ իր հմայքը պիտի կորսնցնէր:

Ամէն ինչ փոխուած էր իր մէջ: Այն կենսունակ, տաքարիւն, զուարթախօս Մունային մնացած էր միայն սֆինքս մը, որ լուրթեան մէջ կը խորանար: Տակնուվրայ եղած չափանիշներով, ինքն իր մէջ առանց յուսահատելու, առանց յայտնի ընելու, կը տապալակէր, երկուոյթներ սահմանելու, արարքներ մեկնելու Համար:

Հարուստները Հինցած էին: Մայրը բերած էր նորերը: Բայց ուրիշներուն բաժնած էր ինք: Ոտնամանները մայրած էին: Զէր ուզած փոխել, պատրուակելով

որ աւելի հանդիստ կ'ընէ անոնց մէջ: Երբեմն ակոյալի սուր ցաւեր կ'ունենար: Անքի փափաքեր դիմել հակելին, զսոննք վարձանեւու միջոց մը խորհելու համար: Սկսած էր սիրել այդ ցաւերը: Անոնք մոռցնել կու տային ուրիշ ցաւեր: Երբեմն նոյնիսկ կը փնտռէր անոնց դոյութիւնը:

Հասակը կորսնցուցած էր իր սլացիկ կերպարանը: Երթնելը՝ իրենց ճրկուսութիւնը, ժպիտը նուէր մըն էր հիմա՝ ուրիշներուն:

Իր կայունացած էութեանը մէջ մէկ բան միայն պատճառ կ'ըլլար իր դոյութեան իրաւունքին: Առանձնութեան պահերուն, երբեմն կը մտածէր թէ իր ներկայ վիճակին մէջ, արդե՞օք, — հող չէ թէ անուղղակի կամ ուղղակի — մահուանը պատճառ ըլլալու զնով պիտի պաշտպանէ՞ր ինքզինք այդ կնոջ հարուածին դէմ: Հիմա որ ապտակուիլը շարժակուրու պէս բան մըն էր իրեն համար: Ամէն անգամ որ այս մտածումը կ'ունենար, կը զգար թէ արիւնը դեռ չէր ցամքած երակներուն մէջ:

Բնաւ չէր զզվացած ըրածին: Կեանքին մէջ դոնէ մէկ անգամ մարդկութեան օգտակար գործ մը ըրած էր:

»

Դիւրին բան չէր տուն դալը: Հինգ տարին շատ բան փոխած էր, թէ՛ ամուսնոյն եւ թէ՛ իր բնաւորութեանց մէջ: Ամուսնական կեանքով ինչ որ կըրցած էին շաղիլ իրարու, հիմա իրեն համար լպրծուն բաներ կը թուէին: Նորին տուն երթալը, ընտանեկան շրջանակին մէջ մտնելը, ոճիւրը պատահած սենեակին մէջ ապրիլը, ամուսնոյն հետ մէկ անկողին բաժնելը, ամէն վայրկեան զատակներուն երեսը նայիլը, յետոյ ծանօթներու հետ բարեկամութիւն կեդծելը, այլեւ մարդ մեռցնելէն շատ աւելի զժուար բաներ կը թուէին:

«Թեքեալ ինծի չնեքէ, խորհեցաւ. պարզապէս իր հանգստութեանը, զատակներու ապահովութեանը համար

ընդունի դիմ: Ի՞նչ որ ալ ըլլայ՝ մեռնողը մայրն է: Թեքեալ մինչեւ հիմա խղճալուն համար այցելեց»: Ենթադրութիւններ՝ որ տարիներու հեռաւորութիւնը արամբանական մտածումներու կը վերածէր:

Բանտին մէջ եղած ատենը շատ աւելի ապահով զգացած ըլլալ կը կարծէր ինքզինք: Հիմա ազատ կեանքը շատ աւելի դժոխային բանտի մը երեւոյթը կ'առնէր իրեն համար:

«Ձաւակներս կ'առնեմ կ'երթամ» խորհեցաւ: Յետոյ մտածեց թէ զատակներն ալ կրնային պաշտ ըլլալ իրմէ: Այս մտածումը արցունք կը բերէր աչքերին: «Որքան դժբախտ եմ, խորհեցաւ. փնայած արարածի մը համար կեանքս խորտակեցի»:

Քանի մը վայրկեանէն, ընտանիքէն մէկը կրնար գալ զինք առնելու: Օր մը ատալ իմացած էր իշխանութենէն իր ելլելու մասին. այնպէս որ ոչ ամուսնոյն եւ ոչ ալ մօրը հետ կըցած էր խօսիլ: Անոնք հեռամայնով տեղեկացուած էին այդ մասին:

Հակել կինը շնորհաւորած էր զինք. և վերջապէս ժպտեցաւ: Ինք առաջին անգամ ըլլալով նոր հազուադէպ հազած էր, կօշիկները փոխած, իսկ ակոյալին ցաւը այլեւս սուսկալի կերպով կ'անհանգստացնէր զինք:

Սպասման սրահը փոխադրուած էր: Այլեւս բանտարկեալ մը չէր: Ուրիշներու ըմբռնումով ազատ մարդ էր: Բայց արդեօք իրեն համար կարելի՞ էր նորին ազատ ըլլալ: Ազատ ըլլալու համար սահմանաւոր անհրաժեշտութիւններ ընելիք. գերմարդկային աշխատանք, որուն համար ինքզինք յոգնած եւ անընդունակ կը ըզզար այլեւս:

— Ահա՛, եկա՛ւ... ըսաւ հակել կինը. այնպիսի շէնչոյ ճայնով մը, որ ուրիշ մարդու կը պատկանէր կարծես:

Ոտքի ելաւ. շրջապահը որ ամուսինը հասնի իրենց: Մնաք բարով ըսաւ շուրջիներուն, եւ ուղղուեցաւ դուրս, համարձակ քայլերով:

Որոշած էր այլևս: Ամէն ինչ պիտի ըսէր ամուսնոյն: Վախ մը չունէր ոչ անկէ, ոչ ալ ըրածէն: Բացատրութիւն պիտի պահանջէր ամենայն անկեղծութեամբ եւ անհամաձայնութեան մը պարագային պիտի բաժնուէին: Բանտին մէջ սորված էր տոանձին ապրի՛լ, եւ միայն շարաքը մէջ մը զաւակները տեսնել:

Նկատեց որ ամուսինը նոր հագուստներ հագած էր. գլխարկը մաքրուած էր. շապիկը կը փայլէր: Ուրախացաւ զայն այդպէս տեսնելով: Ճշաւ որ ես ալ նորերս հագած եմ՝ խորհեցաւ:

— Բարե՛ւ, ըսաւ մարդը եռանդով, երկու ձեռքերը մէկտեղ երկարելով իրեն: Կարծես թէ հանրային պարտէզի մը մէջ սիրահարներու նման ժամադրութիւն տուած ըլլային իրարու:

Մարդը կը ժպտէր:  
— Քիչ մը շուտ քակե՞նք, ըսաւ մեղմութեամբ:

Քայլերը արագացուց: Անոր բնականութիւնը, հակառակ ինքնավստահ ըլլալու իր փափաքին, կ'ապշեցնէր զինք:

Յիշուցի մէջ կարելի եղածին լափ հետու նստաւ անկէ:

Քաղաքին ճամբաները կարօտով յիշեց: Հին սիրելի մը գտած ըլլալու տրամադրութիւնը սենեցաւ:

Տունը՝ զաւակները կը սպասէին իրեն: Ամէն ինչ փոխուած էր: Պատկերներ կուտային: Ամէն անկիւն ծաղիկներով զարդարուած: Այս գուրգուրանքը ամէն ինչ տակնուվրայ կ'ընէր իր մէջ: Ինք անոնցմէ արհամարհանք կը սպասէր, անոնք սէր կու տային իրեն: Պտրտեցաւ մէկիկ մէկիկ բոլոր սենեակները: Ոճիւրը պատահած սենեակին մէջ աւելի մնաց, զիտեց այն անկիւնը ուր կետրուր արեւը հոսած էր:

Ու լղիմացաւ:  
Այս բոլորը շատ էին իրեն համար: Ինք արժանի՞ էր այս բոլորին: Մարդասպան մըն էր ինք: Մարդը մարդ էր, ստորին թէ բարձր:

Լացաւ, պաշտելի էակ մը կորսնցընողի լացով: Ինքզինք կորսնցուցած էր:

Ուզեց առանձնանալ սենեակին մէջ: Թոյլ չտուին: Ամէն տեսակէտով անյարմար կը զգար ինքզինք: Զաւակները պաշարեցին զինք: Իրենց մասին տեղեկութիւններ տուին: Պատմեցին իրենց մտերմութիւններէն, եւ ըսին թէ իր բացակայութեան հետ չէին հաշտուած ըլլանաւ:

Ամուսինը կը դիտէր զիրենք եւ կը ժպտէր:

Ի՞նչ կար այդ ժպիտին մէջ. այդ է որ չէր կրնար մեկնել:

Իրիկուան դէմ պտոյտ մը ըրին: Ինքզինք կարկտանով մը միայն փակցուած կը նկատէր իր ընտանիքին:

Վերադարձին, գիշերուան, անկողին մէջ ամուսինին հետ առանձին ըլլալու հետանկարը հազար անգամ նախընտրել կու տար իրեն իր բանախ թշուառութիւնը:

Լոյսերը անմիջապէս մարեց: Առաջին բանը որ զգաց անկողինին հանդուստութիւնը եղաւ:

— Ամէն ինչ վերջացաւ, ըսաւ ամուսինը, թեւերը երկարելով իրեն: Մութին մէջ նշմարեց զանոնք, ու մահուան ընպատանալիքին առջեւ իրեն ապուշէն մը գտնողի հրճուանքովը սեղմեց իրեննորուն մէջ: Քիչ ետք անդրադարձաւ նակ, որ համբուրելն ալ չէր մոռցած: «Քանի՛ տարի է որ չեմ համբուրած», մըտածեց, ամչնալով ինքզինքէն:

— Ես քեզ կը հասկնամ, ըսաւ մարդը նորէն, խորունկ եւ վստահեցնող ձայնով մը:

Երկուքը մէկ լացին:

Առաւօտը իր արեւու ճառագայթներովը շորցուց անոնց արտասուքը:

Այլևս կրնար երջանիկ ըլլալ: Ազատ մարդ ըլլալ:





# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆ

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԱԾՈՒՆ

## ՎԵՐՋԻՆ ԽՔԱՈՍՆԱՄԵԱԿԻՆ

### ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՋ

Քաղաքական դէպքերու իրրիւ հետեանք, վերջին քառասնամեակին, հայութիւնը ապրեցաւ աշխարհադրական երկու ուրոյն միջավայրերու մէջ, որով մեր գրականութիւնը ընթացաւ երկու ուղղութեամբ:

Առաջին՝ հայրենիքի մէջ ան վայելեց իշխանութեան նիւթական օժանդակութիւնը, բայց մնաց ենթակայ իրաւակարգին պարտադրած զաւանթարանական սեղմումներուն:

Երկրորդ՝ Սփիւռքի մէջ, ան գերծմնաց քաղաքական եւ դաւանարանական սեղմումներէ, բայց եղաւ ծանրօրէն ենթակայ նիւթական ամէն կարգի դժուարութեանց, մեր զանգուածներուն գրականութեան հանդէպ ցոյց տուած անտարբերութեան պատճառով:

Մինչ Ապրիլեան Եղեւնով արեւմտահայութիւնը կորսնցուցած էր իր մլտաւորական ընտանին, արեւելոյսայ գրողներէն ողջ էին թումանեան, Աւետիս Իսահակեան, Շիրվանզատէ, Լէօ, Դերենիկ Դեմիրճեան, Նարդոս, Յ. Յակոբեան, Աթաբեկ Ռնկոյեան, Յովհաննէս Յովհաննիսեան, Սիմոն Յակոբեան, Գէորգ Բաշինջազեան, Ե. Շահապիզ,

Վահան Միրաքեան, Գարեգին Լեւոնեան, Միք. Մանուէլեան, Ա. Արազի, Սանփան Զօրեան, Ատրպետ, Եուշանիկ Կուրղինեան, Ստեփան Մալխասեան, Մանուկ Աբեղեան, Յ. Մանանդեան, Եղիշէ Չարենց եւ ուրիշներ:

Իրաւակարգին փոփոխութենէն առաջ, հոն էին արդէն արեւմտահայ գրողներէն Վրթանէօ Փափազեան, Վահան Թոթովենց, Հրաչեայ Աճառեան: Քիչ ետք անոնց պիտի միանային Զապէլ Եսայեան, Փրոֆ. Ա. Պաշատուրեան, Ս. Կուրտիկեան, Ե. Թոլոյեան, Արմէն Ամուր եւ Արման Կոթիկեան:

Շնորհիւ մտաւորական մարդի վերայ թափուած լուրջ ջանքերու, քառասուն տարուան ընթացքին, շունչին տակ հիններուն եւ անփոխարինելի նպաստովը հայրենի հողին, կարճ ատենէն հասաւ երիտասարդ գրողներու փաղանգ մը:

Անոնք որ զաւանթարանութեամբ կապուած էին իրաւակարգին, տուին իրենց տուրքը իշխանութեան, ստորագրելով արնու-աստուածը պանծացնող թխածոներ:

Ուրիշներ ահուանին սեղմած՝ ըրին նոյնը, փրկելու համար իրենց կեանքը, երբ տեսան, որ Գրեմլի կարմիր իշխանաւորներու շատ սիրելի Չարենցն ան-

զամ շիրցաւ ուսերուն վրայ պահել զըլտութիւնը, երբ փորձեց բողոքել ցեղը խոցող անարդարութիւններու դէմ :

Կարմիր տիրակալութեան խելագարութեան օրերուն, ինկան Չարենցի Հերթին Չապլի Եսայեան, Ակսել Բակունց, Վահան Քոթովենց, Ե. Քոյոյեան եւ աւելի քան երկու հարիւր յիսուն մտաւորականներ :

Սթալինի մահով եւ Բեքիայի գընդակահարութեամբ, աջօրադարձ ունեցան Հայրենիքէն Հեռացուած խումբ մը գրողներ :

Անցնող քառասուն տարիներու մէջ Հայրենի Հողին վրայ խորացաւ ընթերցանութեան սէրը, շնորհիւ իշխանութեան որդեգրած պայշար անգրագիտութեան դէմ կարգախօսին :

Երբ երկիրը ունեցաւ կարող իմացողներու կուռ բազմութիւն մը, ընթերցումը դարձաւ հոգեկան հանոյթ, իսկ հայ գիրքը՝ պահանջ :

Քառասուն տարի վերջ, այսօր, հիներէն զբեթէ ոչ ոք մնացեր է :

Նորերն են այլեւս կարթութեան տէրը : Անոնք են որ լծուած են վերելքի աշխատանքին ու զբաղանքեան ջանք մաս կը պահեն երկրին բոլոր կողմերը : Ստեղծագործութեան անոնց վաստակին դասը կը հասնի մինչեւ Սփիւռք :

Արեւելեան կողմն աշխարհի, մեր զբաղան անդաստանին բանաստեղծական անուն պեղող ժամանակակից դէմքերն են՝ Յովհաննէս Երեւոյ, Վահագն Դաւթեան, Սողոմոն Տարօնցի, Գեղամ Սարեան, Աշոտ Գրաշի, Գուրգէն Մահարի, Խաչիկ Դաշտենց (Խաչիկյանի ծանօթ Հեղինակը), Սարմէն, Վաղարշակ Նորենց, Համօ Մահեան, Վ. Ալազան, Սուբէն Վահուհի, Գևորգ Էմին, Գուրգէն Բորեան (մեռած), Ազատ Վըլտունի (մեռած), Գ. Արով, Վահագն Կապենց, Վաչագան Յովհաննէսեան, Պարոյր Սեւակ, Սիլվա Կապուտիկեան, Հոփփսիմէ Պօղոսեան, Մարո Մարգարեան, Աղաւնի եւ ուրիշներ :

Քառասնամեակին՝ վէպով, պատմըւածքով, յուշերով եւ արձակով, զբաղան կալուածին մշակները մնացին Գ. Դեմիրջեան, Ս. Զօրեան, Վախտանգ Անանեան, Հմայակ Սիրաս, Հրաչեայ Գոշար, Մկրտիչ Էմին, Գրիստափոր Թափալցեան, Ս. Այվազեան, Գարեգին Բես, Մ. Պետրոսեան, Բենիամին Աէյրանեան, Յարութիւն Մկրտչեան, Ս. Կուրտիկեան, Ղ. Կոմունի, Գառնիկ Ստեփանեան, Վիգէն Խելումեան, Արաքս, Արաքի, Սարգիս Պայազատ, Ե. Քաթիկեան, Վ. Թէվէթչեան, Մ. Քորգոմեան (Քիֆլիսէն), Բողոքան Վերդեան, եւ այլն :

Մկրտիչ Կորիւն եւ Արշաիր Դարբեհի մշակեցին առակագրութիւնը :

Մենագրութիւններ տուին՝ Սարգիսեան, Սարգիս Մելիքեօթեան, Ա. Թահմազեան, Ա. Ոսկերիչեան, Մ. Սանթրոսեան, Ա. Յովհաննէսեան, Գուրգէն Յովնան, Հ. Ղամալեան, Գ. Նանուսեան, Հ. Քամազեան, Սեւակ Արզումանեան, Ս. Յարութիւնեան եւ այլն :

Քննադատական ճիւղին լծուեցան՝ Է. Քոփչեան, Է. Ջրբաշեան, Լ. Հափվերդեան եւ կարգ մը մենագրողներ :

Բանասիրական երկեր տուին՝ Ա. Ա. Աբրահամեան, Ա. Ղարիբեան, Գ. Սեւակ, Մ. Մուրատեան, Գ. Գոյեան, եւ ուրիշներ, առանց հաշուելու հիներէն Ս. Մախասեանցի, Մ. Արեղեանի, Հ. Աճառեանի, Յ. Մանանդեանի, Փրոֆ. Աւետիք Տ. Պօղոսեանի եւ ուրիշներու կոթողական վաստակը :

Կան տակաւին իմաստասիրական, (ինչպէս Հ. Գաբրիէլեան), մանկավարժական, պատմական, գիտական, թատերական կալուածով հետաքրքրուող գրողներ եւս, որոնց ջանքերը պատիւ կը բերեն Հեղինակներուն :

Հին եւ նոր օտար բազմաթիւ գրողներու գործերուն թարգմանութեանց զուգահեռ, վերհրատարակուեցան կարգ մը հիներու սպառած գործերը :

Այսպէս, քառասուն տարիներու ընթացքին մտաւորական շարժումը հասաւ

դեբաղանց աստիճանի մը, ու դիրքեր լոյս տեսան մերթ քանի մը տասնեակ հազարաւոր սպաքանակով:

**ՀԱՅԿԱՎԱՆ ՍՓԻՒՌ**

Հայկական Սփիւռքը հետեւանք էր ցեղին դէմ շղթայազերծուած թրքական բարբարոսութեան:

Ապրիլեան Եղեռնով մէկուկէս միլիոն զոհեր խլող թշնամին, դազազած՝ փորձեց բնաջնջել արեւելահայութիւնն հաս:

Այս փորձը արժեց իրեն երեք ճակատներու վրայ - Սարտարապատ, Բաշ Արարան եւ Ղարաֆիլիսէ - ջախջախիչ պարտութիւն մը, որուն իբրեւ արգասիք, ունեցանք Մայիս 28-ով երկու տարի թանկախութիւն:

Առաջին աշխարհամարտին յաջորդող ղենազադարի օրերուն, Պոլիս կեդրոնացան արտասահման զտնուող կարգ մը դրոշմեր, մտաւորականներ, տարազըրուած ազգայիններ ու բազմաթիւ որբեր:

Հայութեան համար սպասումի եւ յոյսի օրեր էին:

Օսմանեան երբեմնի մայրաքաղաքը գրաւուած էր Դաշնակից ուժերէ եւ ըստացած միջնազգային ոստանի մը կերպարանքը:

Խանդավառութեան առաջին օրերուն Պոլիս հասած էին Շիրվանզատէ, Կ. Զօրեան, Յ. Օշակեան, Վ. Թէքէեան, Ս. Պարթեւեան, Տոքթ. Ա. Սալբի, եւ այլ գրական դէմքեր: Հոն էին հիներէն Սիւպիլ, Հրանդ Ասատուր, Յարութիւն Մըմրեան, Յ. Ասպետ, Ե. Օտեան, Հ. Մարք, Մ. Շամտանճեան, Ս. Գարամաճեան, Յ. Մնձուրի, Ա. Անտոնեան, Ահարոն, Ե. Տէր Անդրէասեան, Շաւարշ Միսաքեան, Յ. Զ. Սիբրուի, Եղիշէ Արք. Դուրեան, Մեսրոպ Արք. Նարոյեան, Հ. Ա. Ղազիկեան եւ զրչի այլ վաստակաւորներ:

Հրապարակային հանդէսներ, թատերական ներկայացումներ, գրական

հաւաքոյթներ սովորական երեւոյթ էին ամէն կողմ:

Խանդավառութեան այլքը հասած էր մինչեւ Իզմիր եւ Կիլիկիա, ուր հաս նրման ձեռնարկներ կը մնային մեր գանգուածները ոգեւորող առիթներ:

Հետզհետէ սակայն մասլէ ամպեր կուտակուիլ սկսան հորիզոնին վրայ:

Դէպի Հայաստան երթը կանգ առաւ յանկարծ, ստեղծուած դէպքերու պատճառով:

Երբ ծայր տուաւ Կարսի ուղղութեամբ թրքական նոր յարձակում մը, եւ վտանգին լուրերը հասան Պոլիս, պողպատեւեմ Յակաւորը նշանաբանով նիւթական արագ օգնութիւն հասցնելը դարձաւ օրուան հրամայական պարտականութիւն:

Մամուլը, որուն առաջապահ դիրքերուն վրայ կանգնած էր Ե. Միսաքեանի խմբադրած Ճակատամարտը, կը յիշեցնէր իւրաքանչիւրին իր պարտականութիւնը:

Բայց հակազդել քաղաքական դէպքերուն եւ ուղղութիւն տալ տնոնց, կը մնար վեր մեր մնացորդացին ուժերէն:

Միւս կողմէ, Դաշնակիցներու ներքին ճակատին վրայ ստեղծուած ճեղքուածքով՝ ալ աւելի զօրացաւ ծայր տրւած Գեմալական շարժումը:

Երբ խորտակուեցաւ Յոյներու կողմէ պաշտպանուած Իզմիրի ճակատը, երբ փոխազարժ համաձայնութեամբ քաղուեցան Իտալացիք Ատալիայէն եւ Ֆրանսացիք Կիլիկիայէն, իրենց դարաւոր ակունքները լքած՝ հայրենի հողերէն հեռացան վերապրող հայ խլեակներ, աւոնոնց հերթին նաեւ Պոլիս զտնուող բազմաթիւ եկուոր հայեր ու մտաւորականներ:

Այս բողմութիւնները թիւով շուրջ կէս միլիոն, հաստատուեցան Լիբանան, Սիւրիա, Յունաստան, Ֆրանսա, Կիպրոս, ու քիչ ետք բռնեցին ճամբան Արժանթինի, Պրագիլիոյ, Ուրուկուայի, Չիլիի եւ Վենեսուէլայի: Փոքր թիւ մըն ալ անցաւ Հիւս. Ամերիկա, ուրիշներ՝

մինչև Հարաւային Ափրիկէ, Աւստրալիա եւ ասիոյ հասոյնները:

Պուլկարիոյ, Թուամանիոյ, Մ. Նաւահոններու, Իրանի, Իրաքի, Հնդկաստանի, Եգիպտոսի, Եթովպիոյ եւ Թուրքիոյ մէջ ներկայիս մնացած 70.000 Հայերու հետ, անոնք կը ձեւացնեն Հայկական Սփիւռքի մեր մէկ միլիոնը:

**ՊՈԼԻՍԸ ԶԻՆԱԴԱԳԱՐԻՆ ԵՏՔ**

Ինչպէս դիտելի է, Պոլսոյ գրական հրատարակիչ վրայ դեռ մեծ թիւ մը կը կազմէին հին ու նոր ուժեր, բայց 1918-1922 շրջանը թաւալեցաւ հոն կեդրոնացած հասարական ուժերու որակին հակոտնեայ դեղումներով:

Այս երեւոյթին մէջ պէտք է փրճուել ազդեցութիւնը քաղաքական դէպքերու:

Անտուդութիւնը ապրող գրողներ չէին կրնար խաղաղ պայմաններ պահանջող օրերու յատուկ լուսատր գործեր տալ:

Չորս տարիներու ընթացքին լոյս տեսած կարգ մը թարգմանութիւններու հետ ինքնազգի գործեր եղան Հրանդ Աւստուրի Դիմաստարները, Ա. Աստուհանի Այն աւ օրերունը, Մ. Շամասեհանի Հայ մտքի հարկը եղեռնին, Թէոզիկի Յուշարձան հայ զինուորին, Լ. Խասանեհանի Անմահները, Գ. Վարուժանի, Գ. Մեսրոպի Փերիչէիերը, Յ. Զ. Սիրունիի Դափնեպսակ հայ զինուորին և Զուլումը եւ մեր օրերը, Կ. Զարեանի Օրերի պսակը, Յ. Օշականի Խոնարհները եւ Խարիւրդներու մեհեանը, Ա. Մարմարեանի Անդրանիկ ե պատերազմները, Ա. Ալպոյանեհանի Անեխոստող դէմքեր-Գ. Զօհրապ, Հայկանոյշ Մարքի Մուլուքեան պսակը, Վ. Քամալեանի Արեամ գետերը, Տ. Զիթունիի Արևիկեան խաղաղարիւր եւ Համբարձման վիճակը, Գ. Կոսովարեանի Գերեզմանի ծագիկները, Տոքթ. Մալաքեանի Գիտութիւն, փիլիսոփայութիւն եւ կրօնքը, Գ. Ծէնէրճեհանի եւ Պետրոսեանի Եգիպտոսի միլիոնները, Ս. Սիրունիի կեանքը եւ գործը, Վարդ-Մեխակի Զէյթունի նահանգը, Ե.

Օտեանի Թաղականի կնիկը, ձեպըմքաց նորածինը, Մատնիչը, Յ. Մարթանյանի Առաջին փորձութիւնը, Վահան Թոթովեանի Հայաստանի Տան Քիշոքը, Գ. Զերազի Մեր տան երգերը, Օհան Պարզեւի Վարդի կոկոնները, Յ. Սեհանեանի Սու ծովը, Յ. Մարգրտեանի Հայկաշէն տարեգիրքը եւ Կիլիկիան երգարանը:

Պէտք է աւելցնել տասնց վրայ յետպատերազմեան մեր լուսագոյն քերթողներէն վաղամեռիկ Մատթէոս Զարեֆեանի Տրամուքեան եւ խաղաղութեան երգերն ու Կեանքի եւ մահուան երգերը զոյգ գործերը, ինչպէս նաև «Նաւասարդ» միութեան ջանքերով թրքական գրաքննութիւնէն վերցուելով լոյս տեսած Դանիէլ Վարուժանի Հացին Երգը:

Այս հրատարակութիւններուն վերջայ կարելի է աւելցնել կարգ մը բժշկական գրքոյկներ եւ այլ մանրուքներ եւս:

Ինչ որ թուեցինք, կը յիշեցնէ անշուշտ ոսկիին խառնուած պղինձը, բայց կատարուածը շրջանի մը երեւան հասած ճիգին վկայութիւնն է միայն, աւելի ոչինչ:

Պէտք չէ մոռնալ մամուլի սիւնակներուն մէջ մնացած լատարձ արտօններ, որոնք մաս կը կազմեն այդ օրերու սփիւռքեան գրականութեան:

Զինադադարէն ետք Պոլսոյ մէջ լոյս տեսան ճակատամարտ, Վերջին Լուր, Ժամանակ, Սուրբանդակ, Շաւիղ թերթերը եւ Հայ կին, ամսաթերթ Հայկանոյշ Մարքի, Ոստան, Մեծ պարբերական Մ. Շամասեհանի և Բարձրավանճ՝ Թէգէեան-Օշական-Պէրպլէրեան խմբակի ամսօրեան:

Ասոնցմէ առաջինը միայն ասին մըն ալ շարունակեց իր գոյութիւնը ֆեմալականներու Պոլիս մասնիչն ետք, մինչ վերջին երկուքը շատոնց զաղբած էին:

(1)

Վ. Գ.

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

**ԷՐ Ն Է Ս Թ      Հ Է Մ Ի Ն Կ Ո Ւ Է Յ**

Եթէ բաւարար չափով շարունակուի, ամէն պատմութիւն կ'աւարտի մաքսան մէջ: Ան, ով կը պահէ ասիկա մեզմէ, իրաւ պատմող մը չէ:

Է. ՆԵՄՆԿՈՒԷՅ

1961 Յուլիս երկուքի առաւտեան ժամը եօթէն քիչ անց, Հիւս. Ամերիկայի Իտաւո նահանգի Քէլուս գիւղի իր բնակարանին երկրորդ յարկի ննջասենեակէն վար կ'իջնէր Էրնէսթ Ղէմինկուէյ, ընդունելութեան սրահի պատէն վար կ'առնէր որսի երկփող, կարճավիզ հրացանը, ծայրը կը դնէր բերնին մէջ, ու կը քաշէր երկու բլթակներն ալ...

Կինը, Մարի Ղէմինկուէյ, հակառակ բացարձակ անկարելիութեան, կը պնդէր շուրջիններուն թէ ամուսինը արկածի զոհ դաջած էր, հրացանը մաքրած ժամանակ, Այդպէս ալ յայտարարեցին աշխարհի ռատիոները, լուրը մահուան անոր, որ երեսնամեակ մը ամբողջ արապետած էր ամերիկեան ու աշխարհի զբաղանութեան սահմաններէն ներս, դարձած էր օրինակ՝ լեզուի, սճի, կեցուածքի, կեանքի բարոյական նոր կանոններու:

Վրժուար չէ մեռնիլը, կը յայտարարէր ինքն իսկ, 1950-ին, Վեթ. Շորքըրոյի թղթակից Լիլիան Ռոսի, տեսակցութեան մը ընթացքին: Վրէրախար

յիմարները միայն կրնան մտահողութիւնը հոգիի վերկուծեամբ: Ո՞վ կրնայ մտածել հոգիի պահպանումի մասին, երբ մարդուն պարտականութիւնը զայն կորսնցնելն է՝ իմաստուն ձեւով. այնպէս, ինչպէս սուղ կը ծախես պաշտպանած զէրքը, երբ այլեւս անկարելի կը դառնայ զայն պաշտպանելը. սուղ՝ այնքան որքան կարելի է. ջանալով վերածել զայն աշխարհի ամենասուղ ծախուած զէրքին: Դժուար բան չէ մեռնիլը:

Կեանք մը իրը, ուր մշտական մտասեւեռումը եղաւ անհրաժեշտութիւն՝ արժանաւորապէս գիմաւորելու բոլոր զժուարութիւնները, քայքայումները, մա՛հը: Վտանգներով, արկածներով, ու նաեւ զեղեցկութիւններով հարուստ կեանք մը՝ Ղէմինկուէյի կեանքը:

Հաւատարիմ միշտ իր սկզբունքներուն, երբեք չձգտեցաւ իր կեանքը վերածել հաճելի շրջապոյտներու յաջորդականութեան մը: Փնտուց միշտ այն վայրերը, այն դէպքերը, ուր մարդ կըրնար պարտուիլ, կրնար կորսնցնել ամէն



ինչ, նոյնիսկ կեանքը, բայց ուր առիթը կ'ունենար փաստելու ինքզինքին, առակ ըլլալը՝ վարուելու ըստ սեփական կանոնի, անհրաժեշտ լրջութեամբ ու զանաթեամբ:

Մնած էր Օսք Փարք, 21 Յունիս 1898-ին: Հայրը բժիշկ էր, և նոյն ձեւով անձնասպան եղած էր 1928-ին: Մայրը՝ երաժշտութեան սիրահար կորովի կին մը, որ իր աղան տարի մը ամբողջ զբոյրոցէ զրկած էր, երաժշտութեան դասեր առնել տալու համար:

Փոքր տարիքէն ստիպուած է կիսատ թողուլ ուսումը, հացը շահելու համար:

որպէս միջոց՝ պահել ընտրած է: Պոքսի ընթացքին է որ վնասուած է իր մէկ աչքը, այն աստիճան, որ բանակի ծառայութեան համար անյարժար յայտարարուած է:

Առաջին համաշխարհային պատերազմին, երբ Ամերիկա պատերազմի մը տաւ, բաղժիցս փորձած է բանակ մըունել, որպէս կամուօր: Տասներկու տարբեր ճիւղերու գիմած է, միշտ ալ մերժուելով, աչքին պատճառով: Ի վերջոյ, կը յաջողի ընդունուիլ դաշտային ծառայութեանց գունդին մէջ, եւ որպէս հիւանդախոսքի վարորդ կը զրկուի իր

տալական ճակատ, օժանդակելու իտալական բանակին:

1918-ի Յուլիսի սկզբը, կը հասնի իրեն սահմանուած ուղղմանակատը՝ Թոսալիստ տի Փիսվէ դիւղին ժօտերը: Փոխանակ մնալու հիւանդակաւորուն հետ, պիշիք մը կ'երթայ առաջին դիժները, եւ երբ շրջալայի շերտ մը կ'հրկարէր իտալացի զինուորի մը, աւստրիական ռուսք մը կը պայթի, գրեթէ իր սրունքներուն մէջ:

ձեռ աչն ատեն մեռայ անգամ մը, ըսած է հետագային Հէմինկուէյ: Չլաացի թէ հոգիս դուրս կու դար մարմնէս, այնպէս ինչպէս թաշկինակ մը կը քաշես ու կը հանես գրպանէ մը, մէկ ծայրէն բռնելով. չորս կողմս աստանեցաւ քիչ մը փու ետ վերադարձաւ, մտաւ ներս մարմնէս, եւ այլեւս մեռած չէիք:

Շրափնէյի 237 կտորներ մօտած էին իր սրունքներուն եւ մարմնին մէջ, որոնցմէ մէկ մասը հանելու համար, վեց շարթուայ ընթացքին, տասներկու անգամ դորժողութեան կ'ենթարկուի: 19 տարեկան էր: Արժանացաւ իտալական պատերազմական խաչին: Իր վիրաւոր վիճակը անտեսելով, իր կողքին ծանրօրէն վիրաւորուած իտալացի գինուոր մը շալկած եւ վազելով տարած էր հիւանդանոցի վրանները, ուր եւ ինկած էր ինք. արժանացաւ նաեւ գինուորական արժանեաց շքանշանին, որ իրաւունք կու տար իրեն նաեւ 50 տոլար կենսաթոշակ մը ստանալու:

Երբ վերադարձաւ Օաք Փարք, 1919-ին, այլեւս չէր կրնար դիշերները քնանալ. կը քնանար ցերեկները, որովհետեւ ռուսի պայթիւնը դիշեր ատեն տեղի ունեցած էր, եւ կը թուէր իրեն, որ հիթէ մութին մէջ աչքերը փակէ, այլեւս պիտի չկարենայ բանալ պաննօ:

Լու. մը առաջնաւիչ ետք, լրագրական ասպարէզը ընդգրկեց: Եւրոպան գըրաւած էր գինք: Վերադարձաւ Փարիզ, իր հետ բերելով յանձնարարագիր մը Շէրմուս Անտէրառն գրապէտէն, այն օրերուն Փարիզ ապրող ամերիկացի գը-

րադէտներուն, էլզրա Փաուլտի, ժէրթրիւտ Սթէյնի եւ ուրիշներու ուղղուած: 1921-ին Եւրոպա վերադարձած է արդէն, եւ յոյն-թրքական պատերազմի թղթակից է: Ապա Փարիզ է, ուրկէ յաճախ կ'երթայ Չուիցերիա, Լոզանի խորհրդաժողովի մասին տեղեկութիւններ պրկելու համար ամերիկեան թերթերուն:

Կեանքին կեդրոնը սակայն վէց տորուայ համար, կը դառնայ Փարիզը: Յըրաններէնը կը սորվի թերթեր կարգաւորով: Նախ մարզական բաժինները կարգաւորով կը սկսի, ապա կ'անցնի ոճիք եւ արկածի բաժիններուն, ապա կ'անցնի կի տը Մոփասանին, Տիւմային, Սթէյնտալին, Յլուպէրին, Պոտլէրին, Րէնպոյին, Ժիսին եւ Վալէրիին:

Լրագրական ասպարէզը լքելով, կ'ապրի նիւթական շատ նեղ պայմաններու մէջ, իր առաջին կնոջ, Հաալէյի հետ: Սակայն նուիրուած է իր նախապրութեան. պատմուածքներ կը գրէ ու կը գրկէ թերթերուն: Բոլորն ալ կը մերժուին ու ետ կը վերադարձուին իրեն, ամենայն կանոնաւորութեամբ:

Գրական բարեկամներու շրջանակի մը մէջ է, - Ժէրթրիւտ Սթէյն, էլզրա Փաուլտ, Սիլվիա Պիչ, որոնք կը քաշալերեն, կը քննադատեն, կը սրբազրեն պինք եւ մանաւանդ բարեկամութեան մը ջերմութեան ուժը կը բերեն իրեն, կարենալ սպասելու համար, յարատեւելու համար:

1922-ին, երբ կ'ինը Լոզան կու գաք, իր հետ բերելով Հէմինկուէյի մինչ այդ գրած պատմուածքներուն ձեռագիրները, կայարանին մէջ, գող մը կը թոցնէ ճամբորդական պայտաակները եւ, անգիտակցաբար, մեծ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլայ միջազգային գրականութեան, իրականացնելով այն ինչ որ կը պահանջէր Հէմինկուէյէն, Ժէրթրիւտ Սթէյն, այսինքն՝ այրել բոլոր գրածներն ու ծայրէն սկսիլ:

Այդ սկզբնական շրջանէն կ'ազատուին, պատահաբար, դարակի մը մէջ մոռցուած պատմուածք մը եւ հրատա-

բակիչի մը կողմէ մերժուած ու փոստին յանձնուած պատմուածք մը միայն, որոնք քանի մը բանաստեղծութեանց հետ միասին, կը հրատարակուին բարեկամի մը միջոցներով, 1923-ին, ընդամենը 300 օրինակ սպաքանակով:

1924-ին երկրորդ գիրք մը լոյս կը տեսնէ իրմէ, «Ին սուր քայմ» գարձեալ բարեկամի մը աշխատանքով, հեամենի, Յրդ գարէն միացած մամուլի մը վրայ, ընդամենը 170 օրինակ: Այս գործն է որ առաջին անգամ հրատարակելիներու ուշադրութեան կ'արժանանայ եւ 1925-ին կրկին լոյս կ'ընծայուի, այս անգամ Նիւ Եորքի մէջ, եւ Շէրվուս Անտէքսընի հրատարակիչներուն, Պոնի եւ Լէվրարթի կողմէ:

1926-ին լոյս կը տեսնէ իր առաջին արժէքաւոր գործը՝ «Տիւր Սըն Ալսօ Բայզ»:

1927-ին, իրեն յատուկ վերապաշտական ստիպողականութեան տակ, կ'առանձնաւորուի իր առաջին կնոջմէն, Հասայէյէն, ասան մը ետք ամուսնանալու համար Փոլին Ֆէյֆէրի հետ:

1928-ին «Յարուէլ քու արմզն է, որ աստիճան մը եւս կը բարձրացնէ իր անունը: «Երբ դայն կը գրէի, գրած է 1948-ին Հէմինկուէյ, իմ երկրորդ մանչըս, Փաթրիք, կը ծնէր սէզարիէնով, Քանասա Սիթիի մէջ: Երբ սրբագրումը լրացուցած, երկրորդ անգամ գրի կ'առնէի դայն, հայրս ինքզինք սպաննեց Օաք Փարքի մէջ, Իլինոյիս... կը յիշեմ բոլոր այս պատահարները, բոլոր վարդերը ուր սպրեցանք, լու ու վատ օրերը, որ այդ տարի անցուցինք... Սակայն աւելի կենդանի կերպով կը յիշեմ գրքին մէջ սպրիս, ու ամէն օր անոր մէջ պատահածները կազմաւորելու: Կատուցելով գրքին անձնաւորութիւնները, բնութիւնն ու զէպքերը որ կը պատահին հոն, ինքզինքս կը ղգայի աւելի երջանիկ քան որեւէ ասուն եղած եմ:

«Ամէն օր կը կարգայի գիրքը, օկիգրէն օկսելով, մինչեւ կանդ առած տեղըս, ու կը շարունակէի գրել: Ամէն օր կանդ կ'առնէի գրելէ, երբ տակաւին ը-

սելիք ունէի, երբ դեռ գիտէի թէ յաջորդ տողերուն մէջ ի՞նչ պիտի պատահի:

«Այն իրողութիւնը թէ գիրքը ողբերգութիւն մըն էր, տրամութիւն չէր պատճառեր ինծի, քանի որ կը հաւատայի թէ կեանքը ողբերգութիւն մըն է, եւ գիտէի թէ միակ վերջաւորութիւն մը կրնար ունենալ: Տեսնել թէ ի վիճակի ես բան մը կատուցելու, ստեղծագործել այնքան մը բաւարար ճամարտութեամբ, որ քեզ իօկ կ'երջանկացնէ ընթերցումը, իրականացնել սակիա ամենօրեայ աշխատանքիդ մէջ, ահա բան մը, որ շատ աւելի հաճոյք կը պատճառէր քան ուրիշ որեւէ բան, որեւէ ժամանակ:

«Այդ օրերուն, այդ աշխատանքէս զատ ուրիշ ո՛չ մէկ բան կարեւորութիւն ունէր ինծի համար»:

1933-ին, չորս ամսուայ համար Ափրիկէ գնաց, որսորդութեան: Տիգանդըրիէ բռնուեցաւ, սակայն իր սովորութեան համաձայն, անտեսեց հիւանդութիւնը այնքան երկար ատեն որ կրնար: Ի վերջոյ սակայն, ստիպուեցաւ թողուլ խումբը եւ բժշկական օժանդակութիւն փնտռել: Հոն ծնաւ իր «Քիլմաննարայի ձիւնը», - պատմութիւնը Ափրիկէի մէջ մեռնող գրագէտի մը, որ այնքան յաջողութիւն չունեցաւ:

1936-ին սկսաւ Սպանիոյ մէջ ջրաքաջիական պատերազմը: Հէմինկուէյ հոն պէտք էր ըլլար ու հոն էր:

Իր անձնական գրամէն 40000 տոլար նուիրեց, զնելու համար 24 հիւանդակաւորներ, որպէս նուէր՝ հանրապետականներուն: Դրամը կանխիկ չունէր, ստացաւ կանխիկ իբրեւ վարձատրութիւն իր գրելիք գրքին: Ինքն ալ զնաց Սպանիա, որպէս թղթակից Նորթ Ամերիքըն Իբւզ Փէյֆըր Էլլայէնսի: Հիմա սակայն իր ամէն մէկ բառին համար կը վճարուէր մէկ տոլար: Օրական 500 բառ կը գրէր, իսկ կիրակի օրերը՝ 1000: 1937 Փետրուար 27-ին, ճամբայ ելաւ զէպի Սպանիա: Իր երկրորդ կինը, Փոլին, ճանչնալով ամուսնին նկարագիրը եւ ամենավտանդաւոր կէտերուն վրայ գտնուե-



լու ներքին պահանջը, չէր ուզեր թոյլ տալ մեկնումը. «Կը նախընտրեմ ողջ ամուսին մը ունենալ, քան թէ մեռած պատերազմական լրագրող մը»:

Հէմինկուէյ սակայն մեկնեցաւ: Եւ այդտեղ կը սկսի հողեկան բեկումը, որ պիտի առաջնորդէր նոր ամուսնալուծումին եւ իր երրորդ ամուսնութեան:

Միքէ տարի տետղ այդ կռիւներու ընթացքին, չորս անգամ զացած է Սպանիա: Եւ ժամանակ գտած է, երկու անգամ բորբոսեթեանց միջեւ, գրելու «Թու հէլ», էնտ քու հէլ մաք» գիրքը, որպէս վճարում իր ստացած քառասուն հազար տոլարի կանխիկ դումարին:

Թէեւ ուրիշներ հաւանած են գիրքը, զայն կոչելով «քրոլեդարական մեծ գիրք», սակայն ինք զո՛հ չէ մնացած, որովհետեւ «գիրքը զուրս հկաւ. որպէս վէպ մը, սակայն իրականին մէջ մնաց կարճ պատմութեանը համախոսում մը. ու հակայական տարբերութիւն կայ այս երկուքին միջեւ»:

Սպանիոյ պատերազմներէն բերաւ սակայն իր շատ յաջող գործերէն մէկը՝ «Ճոր հուս տեղ պլի Թոլլա»:

Երկրորդ համաշխարհային պատերազմին, Լոնտոն էր, որպէս թղթակից: Ապա Նորմանտի, ցամաքահանումէն քիչ ետք: Ապա Փարիզ՝ ուր կը մտնէր, ինչպէս պիտի տեսնենք, զէն ի մեռին:

Պատերազմէն ետք հաստատուեցաւ Քուպա:

Երկար ատեն լուսթիւն:

Կար իր համբաւը. կար իր առասպելական գիմադիրը: Սակայն զրոյական նոր արտադրութիւն մը չկար: Գրապէսներն ու ընթերցողները կը կարծէին թէ սպանած էր Հէմինկուէյ: 1951-ին սակայն պզտիկ զբոսիչ մը լոյս կը տեսնէր, «Տեղ օլտ մէլ էնտ տեղ տի», որ գինք կ'առաջնորդէր Նոպէլեան մրցանակին: 1936-ին դեռ, գրած էր փոքր պատմութեան մը, «Օճ տեղ պլաւ առդրը», ուր նկարագրած է ծերունի ձկնորսի մը արկածները, պայքար շանաձուկերու հետ, ի խնդիր իր որսացած ձուկի պահպանումին: Ինչպէր սակայն մնացած էր իր յիշողութեան

մէջ: Գոհացած չէր իր գրածով, թուած էր իրեն թէ չէ կրցած իրականութիւնը տալ, լրելը տալ, վերջնականը տալ: Տասնըհինգ տարի պէտք եղած էր, որ պէտքի թափանցէ այդ ղէպքին աւելի մեծ խորհուրդին:

«Փորձեցի իրական ծերունի մը կառուցել եւ իրական տղեկ մը, իրական ծով մը, ձուկ մը, իրական շանաձուկեր, կ'ըսէր հետազային «Թալմ» պարբերութիւնի թղթակցին. եթէ կրցած եմ, բաւարար չափով ղէթ զանոնք ճշմարիտ չեն, այն ատեն շատ բան պիտի նշանակեն անոնք: Ամենադժուար բանը, բան մը իրաւ ճշմարիտ ընելն է, եւ երբեմն նոյնիսկ՝ աւելի ճշմարիտ քան ճշմարիտը»:

Հէմինկուէյի վերջին գործին մէջ փոխարեքարար ներկայացուածը ինքն է՝ ծերունիը. ու իր գործը՝ մուկը:

1954-ին Նոպէլեան մրցանակը տրուեցաւ իրեն: Մաղաղաթ մը եւ 36000 տոլար: Մանուկի մը նման ուրախ էր. մանաւանդ որ այդ օրերուն 8000 տոլարի պարտքեր ունէր:

Վերջին տարիներուն հիւանդ էր, ընկճուած: Արեան գերճնչումէ կը տառապէր եւ շաքարախտէ, ինչպէս իր հայրը: Պահեստողութիւն պարտադրած էին իրեն, 20 քիլոյի չափ պակսեցնելու համար իր մարմնէն, որ արջանման էր, եւ որուն հանգէպ սէր ունէր ու հիացում:

1960-ի ձմեռը իրեն այցելողները գինք պտած էին սիրտ նմուշ հողեկան վիճակի մը մէջ. արտայայտուելու անկարող, կամ միջին արտայայտութիւններով, ինքզինքը անսպասով զգացող, մտահոգ միջեւ. անգամ իր ստեղծագործութիւններուն, անոնց արժէքին եւ իր կարողութեան մասին. ոչ միայն անմիջական ստեղծագործական կարողութիւնը, այլ նոյնիսկ անցեալի իր գործերուն արժէքին մասին կասկածներ ծնած էին իր մէջ. կը գողար անոնց վրայ, աչքերուն մէջ անվստահութիւն ու սուր ասփ մտած էր:

Երկու օր մնացած էր Մայո քլինիք:

ուր ջղային ընկճումների համար էյնկարական ցնցումներու տակ դրած էին զինքը:

Անձնասպանութիւնը, որպէս միջոց կեանքի մը պատժութիւնը աւարտելու, միշտ ներկայ եղած էր իր մաքին մէջ: Համոզուած էր թէ երկչոտութիւն ու վատութիւն չկայ այդ ԵՄԻՄ մէջ, երբ կը գործադրուի արագացնելու համար վերջաւորութիւն մը, որ այլապէս պիտի ըլլայ դանդաղ ու խռնակալի մահ մը:

Աշխարհ արդէն ամէն բոլոր անոր անկնկալ մահուան լուրին կը սպասէր, այնքան որ արկածներով լի եղած էր իր կեանքը: 1954-ին, երբ Նոպէլեան մրցանակը իրեն կը տրուէր, մրցանակին յատկացումը որոշողներէն մին կը յայտարարէր՝ «որոշեցինք ժամ առաջ տալ իրեն մրցանակը, քանի չէր սպանած ինքզինք այս կամ այն արկածին մէջ»:

Կարծես արկածները իրեն ջաշող շանթարդով մը ըլլար. կամ, ինչ որ անկի ճիշդ է, արկածները փնտրող խռնակալ մարմին մը, միտք մը ու հոգի մը ըլլար: Դեռ տասնընթեայ տարեկանին, պոքսի առաջին դասին իսկ, ջրին ոսկորը կոտորուեցաւ, ապա գրեթէ կորսնցուցուց իր մէկ աչքը, դարձեալ պոքսի խողի մը ժամանակ: Ամերիկեան Ֆուլպուրի երկու խողերէն, որոնց մասնակցած է որպէս ուսանող Օաք Փարքի հայ պիւլիթ մէջ զինքը զուրս հանած են՝ վերաւար:

Ձուիցերիոյ մէջ, իր առաջին դասակը, ձոն, արկածով մը իր մատը հորը աչքը կոխած է, ու Հէմինկուէյ երկու օր ամբողջովին կոյր մնացած է: Փարիզ հոգած ժամանակ, բաղնիքին մէջ, սխալ շղթայ մը քաշելով, առաստաղին վրայ բացուած երկաթէ պատուհանը ինկած էր դիտուն, ճեղք մը բանալով ձախ աչքին վերեւ:

1930-ին, որոտղութեան մը ընթացքին, գիշեր ատեն, դիմացէն եկող ինքնաշարժի մը լոյսերէն կուրցած, արկած մը կ'ունենայ եւ թիւ կը մնայ որ կորուսնայէ բազուկը:

Նրկորոգ համաշխարհային պատերազմին, երբ Լոնտոն կը գտնուէր որպէս թղթակից, ինքնաշարժի ուրիշ արկած մը կ'ունենայ, պարտադիր միագնումին պատճառով: Գլխէն վերաւոր՝ կը ստիպուի հիւանդանոց մը ընտնել: Սակայն, առանց անառաւ բժշկաներու խորհուրդին, շաբաթ մը ետք, պլուրը դեռ կապուած, վրային անցուցած պողպատեայ զինուորական գլխարկ մը, Նորմանտիի ճակատը կ'իջնէր, որպէս պատերազմական թղթակից, ցամաքահանումէն գրեթէ տաս օր ետք:

Առասպելական արշաւ մըն է անկէ ետք, մինչև Փարիզ ու աւելի անդին. իր հերոսներուն վայել Հէմինկուէյեան արշաւ մը:

Ճիճի ինքնաշարժ մը լեցուցած իր անձնական պաշարներով ու խմիչքի լիւնչերով, ճամբայ կ'ելլէ զէպի գերմանական զինները: Քանի մը օր ետք, արդէն անցած է անոնց կռնակը, 90 զինամեղրով ներս թափանցած, իր շորս կողմը հաւաքած Ֆրանսական դիմագրական ուժի անկանոն զինուորներէն 200 հոգի ու կազմած իր խումբը: Իր զինուորները կը կարծէին թէ ինք ծպտուած զօրավար մըն է, հակառակ իր յայտարարութեան թէ հարիւրապետ մըն է միայն, ինչ որ նոյնպէս չէր անշուշտ:

Ֆրանսական դեռ չազատագրուած դիւղերէն անցնելով, ճամբուն վրայ գերմանացի զինուորներ գերի բռնելով, սրբընթաց արշաւ մը զէպի Փարիզ, ուր հասաւ դաշնակից ուժերէն առաջ: Նրբ Զօր. Լըբլէրքի ուժերը դեռ կուր կը մըղէին Սէնի հարաւը, Հէմինկուէյի խումբը արդէն իսկ կը կուտէր Փարիզի մէջ, Յաղթութեան համարին շորս կողմը, Նոյն իրիկունը, ուշ ատեն, Լըբլէրքի ուժերը Փարիզ կը մանէին:

Փարիզ մտնելուն պէս, իր առաջին պորձը եղած է երթալ Փապլօ Փիքասոյի աշխատանոցը, տեսնելու համար թէ գերմանացիք արդեօք վնաս մը հասցուցած էին իր բարեկամին: Ապա, Օտէոն փողոց, Սիլվիա Պիչի տունը: Կը հարցընէ թէ կրնա՞յ բանով մը օգտակար

ըլլալ իրեն: Միլիթա կը պատասխանէ թէ վերմահացի հրացանաձիգներ կան տանիքներուն վրայ, որոնք շարունակ կը կրակեն եւ կը նեղեն զիրենք: Հէմինկուէյ կը հրամայէ իր խումբին վար իջնել Յիփերլեմ, կը բարձրանան տանիք, «Վերջին անգամ իրենց զէնքերու կրակոցի ձայն էր որ լսեցինք», կ'ըսէ Միլիթա Պիլ: Վար իջնելով, կը հաւաքէ իր խումբը ու՝ «Երթամ ազատագրեմ Ռիցի դիմի մասնակիցը» ըսելով կ'ուղղուի դէպի պանդոկ Ռից:

1953-ին կը շարունակուի արկածներու շարանը, այս անգամ շատ ծանր, մինչեւ իսկ իր մահուան լուրի տարածման պատճառ եղող օդանւումի արկած, Բէնեայի մէջ: Այրուածքներ, դանկուկրի կոտորուածք, պատուած երիկամուկ, ողնասիւնի կոտորուած ոսկոր մը եւ երկու ճգմուած ոսկորներ:

Օդանւումի կոտորներ տեսած էին վերջն ու ջողը կեանքի ոչ մէկ նշան: Այդպէս ալ հետազոտած էին սմէկ կողմ: Աշխարհը զինք մեռած կարծեց. մահազրութիւններ լոյս տեսան իր մասին: Կարպացած էր հետազոտին բոլորն ալ: Բան մը միայն սրտնեղութիւն պատճառած էր իրեն. դրուածներուն մէջ՝ բոլոր մահազրութիւններն ալ կը պնդէին, թէ իր ամբողջ կեանքին մէջ, մահը փնտռած էր ինք:

«Կարելի՞ քան է երեւակայել, ըսած էր Հէմինկուէյ, թէ մէկը երբ մահը փնտռէ իր ամբողջ կեանքին մէջ, մինչեւ 54 տարեկանը գտած չըլլայ զայն...: Ուրիշ քան է մօտ ըլլալ մահուան, զիչ թէ շատ գիտնալ անոր ինչ ըլլալը, ուրիշ քան է փնտռել մահը: Որքան գիտեմ, ամենազիւրի բանն է մահը գտնելը: Կարելի է գանել զայն բանուկ պողոտաներուն վրայ, փոքրիկ անզգուշութեամբ մը, ինքնաշարժը քշած ժամանակ. կամ Սէքոնայի լիցուն շէշի մը մէջ. կամ պատերազմի ժամանակ, ձեռք շառնելով պէտք եղած զգուշութիւնները... այնքան ձեւեր կան զայն գտնելու, որ յիմարութիւն է բոլորը յիշատակել»:

Ամենածանրը իր արկածներէն, ա-

մենատեւական հետք ձգողը, զինք խորագէտ ցնցողը անշուշտ, 1918-ին, Ֆոսայի մէջ, իր ոտքերուն տակ պայթած ումբն էր: Այդ օրը մահը այցելած էր իրեն ու հեռացած: Այդ օրը վախը սողոսկած էր իր հոգիէն ներս: Ոչ վախը մահուան, այլ, եթէ կ'ուզէք, վախը... վախին: Վախը վախոտութիւնէն. վախը՝ չկարենալ դիմաւորելու պէտք եղած կեցուածքով, անհաճոյ, ցաւը, տառապանքը, մահը:

Ատկէ, իր տեսական ներկայութիւնը ամենավտանգաւոր կէտերուն վրայ, աշխարհի երեսին մղուող զանազան պատերազմներու ընթացքին:

Մահուան փնտրուածքը չէր որ զինք մղած էր արկածէ արկած ու դարձուցած առասպելական տիպար մը, այլ իր կոտորի գոյութեան շարունակական փատարկութեան ներքին պահանջը, քանի որ իրեն համար կեանքին իմաստաւորումը՝ մարդուն կեցողութիւն Մէջըն էր Միւսը: Իր կեանքովն իսկ ստեղծուած էր իր առասպելական տիպարը, համապատասխան իր զբաղանդութեան կերտած նկարագրներուն: Հէմինկուէյ այլեւս զերին էր իր իսկ հերոսներուն, դատապարտուած էր Հէմինկուէյեան կեանք մը ապրել, մինչեւ վերջ, մինչեւ մահ:

Կա՞յ արդեօք աւելի մեծ փաստ վաւերականութեան, զբաղանդութեան մէջ հակայութեան՝ քան այն իրողութիւնը, որ կեանքը կամ կեցուածքները կը կոչուին անունովդ՝ Հէմինկուէյեան կեանք, Հէմինկուէյեան տիպարներ...:

Ինք ոչ մէկ քայլ չէ տուած իր կեանքին մէջ, թերթերուն համար, համբուի համար, առասպելի համար: Ապրած է սակայն իր համոզումներուն հաւատարիմ մնալու մշտական մտասեւեռումով. ու չէ վարանած երբեք՝ ինքզինք նետելու վտանգներու դիմաց, երբ այդպէս պահանջած է պատուոյ կանոնը:

«Վերսպրիլ պատուով... այս նորոյթն ինկած եւ ամենակարեւոր բառը նոյնքան դժուար է իրականացնել, որքան որեւէ ժամանակ եւ նոյնքան կարեւոր՝ դրագէտի մը համար», կ'ըսէր Հէ-

մինկուէյ, կը հաւատար թէ լաւ սպրիլ, կը նշանակէր գիտնալ թէ ի՞նչ պէտք էր ընել լաւ մեռնելու համար:

Իր կեանքի կանոնն էր արդէն՝ «Վա-  
յելուէ կեցուածք՝ կեանքի ճշումներուն  
դիմաց»: Հէմինկուէյի համար առնական  
կեցուածքը մարդուս ամենամեծ հպար-  
տութեան իրաւունք տուող արարուածքն  
է. պարտութիւնը կորուստ մը արձա-  
նագրել չէ. կորուստ է՝ երբ պարտու-  
թեան ժամանակ պէտք եղած առնական  
կեցուածքը չունիս:

Ըստ Ժէրթրիւտ Սթէյնի, որ այն-  
քան ժողովն ճանչցած է Հէմինկուէյը,  
իւր երիտասարդութեան, զգալիոտու-  
թեան ուժէ մարհամարհանքը իր մէջ դար-  
զացած է որպէս հակազդեցութիւն, իբր  
եղող ամէկոտութեան ու գերզգայուն հո-  
գիքին: «Եւ ընթացաւ իր խառնուածքը,  
կը գրէ Սթէյն, այն ճամբայէն, որ ճամ-  
բով որ ընթացած էին իրմէ առաջ բազ-  
մաթիւ ամերիկացիներու խառնուածք-  
ները, որ ճամբով որ կ'ընթանան եւ հի-  
մա: Սեռը եւ բուռն մահը դարձան մը-  
տակալածանք մը իրեն համար: Կրնայ  
ըլլալ որ սխալ ըմբռնէր դիս. սեռն ու  
մահը մարդկային ամէնէն բարձրաժէջ  
յուզումներուն մղիչ զուպանակներն են:  
Սակայն միայն անոնք չեն, եւ ամբող-  
ջովին յուզումներ չեն անոնք: Հէմինկ-  
ուէյի համար սակայն, ամէն ինչ վերած-  
ուեցաւ սեռին ու մահէն հանուածի, կամ  
անոնցմով բազմապատկուածի...»:

Ինք, Հէմինկուէյ, համաձայն չէ  
զանուած Սթէյնի այս բացատրութեան:  
Ըստ իրեն, անգլիացի սպայ մըն է, որ  
Շէյքսպիրի Հանրի Դ.էն մէջբերում մը  
ընկրով, գծած է իր դիմաց քաջութեան  
իւր ըմբռնումը. «Լծ տարեկանին տղէտ  
էի եւ դեռ շատ քիչ բան կարգացած էի:  
Կը յիշեմ յանկարծական երջանկութիւնը  
եւ մնայուն թալիսման մը զրտած ըլլա-  
լու ատրումը, որ ունեցայ, երբ երիտա-  
սարդ անգլիացի սպայ մը, որուն առա-  
ջին անգամ հիւանդանոցին մէջ հանդի-  
պեցայ, թուղթի մը վրայ գրեց ինծի  
համար, որպէսզի կարենամ յիշել, Շէյ-  
քսպիրի հետեւեալ տողերը՝ ...«Հա-  
ւատա, վկայ, հոգս չէ՝ մարդ կրնայ

մեռնել անգամ մը միայն. մենք մահ մը  
պարտական ենք Աստուծոյ... եւ ինչ ալ  
որ պատահի, առ որ կը մեռնի այս տա-  
րի, հանգիստ է դալ տարուան համար»:

Ուրկէ ալ որ եկած ըլլայ իրեն, քա-  
ջութեան իբր եղող ըմբռնումը, Հէմինկ-  
ուէյ, ինչպէս Պայրըն իրմէ հարիւր տա-  
րի առաջ, երիտասարդութեան բերաւ  
ընդօրինակելի կեցուածքներ, հետեւի  
վարուելակերպեր: Երիտասարդութիւնը  
սկսաւ ապրիլ իրեն նման, գրել իրեն  
նման, խմել իր հերոսներուն նման, խո-  
սիլ Հէմինկուէյի արամաբոտութիւն-  
ներ: 1926-ին, երբ Հրատարակուեցաւ  
«Տ՛հը սըն ալսօ բայը»ը, սերունդ մը ամ-  
բողջ ամերիկացի երիտասարդ գրողնե-  
րու, մտաւորականներու, ինքզինք են-  
թարկեց ինքնակամ աքսորի, խուժեց  
Յրանա, ապրեցաւ հոն, փնտռելով Հէ-  
մինկուէյի արտում ուրախութիւններ,  
որոնք վաղուց անցած էին Հէմինկուէյի  
անցեալին մէջ:

Վիպասան շոն Օ'Հարա կ'ըսէ՝ «Այ-  
տարի մէջ ոչ մէկ վիպասան այնքան  
ազդեցութիւն ունեցած է ուրիշներու  
զրեյակերպին վրայ, որքան է. Հէմինկ-  
ուէյ»:

Համաշխարհային շափանիչով ազ-  
դեցութիւններ գործած այս գրագէտն  
է, որ 1920-ին կու դար Փարիզ, որպէս  
երիտասարդ լրագրող, սկսնակ գրող,  
գրականութեան սէր ունեցող անձանք  
մը գեռ, ծծելու եւրոպական մշակոյթին  
բարերար ազդեցութիւնը, ապրելու կի-  
տը Մոփասանի, Յլոպէրի, Թոլսթոյի  
չունչին տակ, բայց մանաւանդ կուսնե-  
լու իր լեզուն ու ոճը, կերտելու կեանքի  
իւր ըմբռնումը, իր ժամանակագրող-  
ներու շրջանակին մէջ, ազդեցութեան  
տակ:

Էզրա Փառնտ, Սիլվիա Պիլ, մանա-  
ւանդ Ժէրթրիւտ Սթէյն՝ Փարիզ քնա-  
կող ամերիկացի երիտասարդ գրագէտ-  
ներուն Մատամ Րէքամէէն, որուն մա-  
սին գաղափար կազմելու համար կը բա-  
ւէ Հէմինկուէյի հետեւեալ տողն իսկ,  
գրուած իրեն, Ժէրթրիւտ Սթէյնի.  
«...Գրելը որքան շիւտիւն էր, ձեզ ճանչ-  
նայէտ առաջ...»: (1)



Ա Ր Ա Մ      Հ Ա Յ Կ Ա Ձ



Ձեզուն սիրտ մը՝ իրենց կեանքին առօրեան ապրող մարդոց մէջտեղ կեցած: Խոնարհ, ընթացիկ, առանին բաները գրականութեան բերող, գանձնք արուեստի մակարդակի մը վրայ ղնող եւ գիտելիքն ու տաղանդ մը:

Արամ Հայկազ կեանքի գիտին բուռն ընթացքը իր գրականութեան նիւթ ընտրած գրագէտը չէ: Կեանքին ներաշխարհը տակնուվրայ ընող մեծ ջրագոտուներուն, յորձանքներուն եւ տեղատուութեանց պատմիչը չէ: Ձէ կախարդը՝ մեր առջև «արգանդի» եւ «արիւնի», ապա սիրոյ եւ դժոխքի ճամբաներ բացող եւ մեզ անոնց ահաբեկ ուղիւորը ընող: Մեզ չի սեւեռեր, մեր ամբողջ էութեամբ, հողեկան բարդ հանդոյցներու վրայ: Կը խորշի վիպասան ըլլալէ կարծես փարելու համար կեանքը, իր կեղեւէն շատ անդին, իր արտաքին նախաչերտերէն դէպք վարերը, շատ խորունկները, շատ մութները: Առօրեան ու մակերեսը արուեստ են, գրականութիւն են ի հարկէ, բայց չեն կրնար վէպ ըլլալ, որակի տարողութեան իմաստով: Առօրեան կեանքի կոտորակ է, կոտորակ մնալու դատապարտուած: Կ'ըլլայ պատկեր, կ'ըլլայ պատմուածք, պատմուածքներու շարք, բայց չ'ըլլար վէպ, որովհետեւ վէպը ուրիշ բան է այլեւս: Կեղրոնացում է, լայնք ու խորացում: Միայնակի կնիք ունեցող բաներու բախում է եւ ասոնց կեանքին ու ախրերուն գումարը:

Արամ Հայկազի նախասիրութեանց մէջ, օրերն են կարեւորը եւ ոչ թէ ներ-

քին կապերով իրարու զօդուած օրերու կամ տարիներու միութիւնը: Օրուան սովորական պատահարներուն, զգացումներուն եւ խոհերուն խաղաղ եւ առհասարակ գուարթ գուտանն է ինք: Իր գրականութեան մէջ տխրութեան սօզը թիչ բան մըն է. շատ բլլալու պարագային իսկ, կը նախընտրէ թաքնուիլ, կամ իսկուրով մը ծպտուիլ:

Յետոյ, քաղցրարարոյ մարդ մըն է «Հայրենիք» ամսագրին եւ Հիմա ալ «Բազմի»-ի այս միայուն եւ պայծառ ուլիտակեցը՝ վկայութեամբը բոլոր վիճակներու մարդոց: Բաղցրագրիչ պատմող մը՝ ինչպէս յայտնեցին զայն իր ստորագրած բոլոր պատմուածքները, սկիզբէն մինչեւ այսօր: Արմատներէն մինչեւ յետին տերեւը հայ մը մանուանդ՝ ուրիշ ամէն բանէ առաջ, ուրիշ ամէն բանէ վերջ: Այս դեռնին վրայ սաստիկութեան գծով ապրող մը հետեւարար՝ տիւ եւ գիշեր: Կանանչ հայութեամբ եւ կանանչ Հայաստանով շնչող մը՝ շարունակ: Թուքերը ամբողջական հայու մը ամբողջական մոլեակնորութեամբը լեցնող մէկը՝ պարագաները ինչ ձեւով ալ ներկայանան:

Մէկ խոսքով՝ Մփիւռքի մակընթաց հայերէն...

Նիւ Մուքի պոզոտաներուն վրայ, շատ երկիրներու շատ զուականեր հայրենիք ու ցամաքամաս մոռցան ի վերջոյ. փախան կարծես բազմաթիւ հին սրբութիւններէ, լքեցին հին բարք ու աւանդութիւն, խուսափեցան տակաւ հին

աստուածներու ա'լ նեղացուցիչ Հովանիէն: Ընկզմեցան անոնց Հոգիները հետարզհետէ տուարի ու անգլիերէնի ովկիանոսին խորը: Քաղաքը վիթխարի էր, վիթխարիօրէն նոր, վիթխարիօրէն երիտասարդ, եւ զոյգ ովկիանոսներուն ժիջեւ տարածուող հանրապետութիւնը անհուն էր, կեանքի անհուն ճամբաներով, անհուն ազատութեամբ:

Արդ, նոր ժամանակներու այդ սոսկավիթխար խառնարանին մէջ, մարդկային բոլոր տեսակի ճորթերով ապրող Հրատարի ծովախորշին անեղբակա՛ն բարեւոյնի մէջ, ԵՎԵՐՔԵՍ ՍԵՐԻՔԻ համեամ հայ նորավիպագիրը, Քառասուն տարիէ աւելի ժամանակաւրջանէ մը առդին, ոչինչ զիջեցաւ իր հայութենէն:

Մնաց, Արամ Հայկազ, սաստիօրէն հայ, մակընթացօրէն հայ՝ Պոթընի Համառակին պէս, Փարիզի Շուշանեանին, Նարգունիին ու Պէշկէթաշիանիին պէս, Սարաֆեանիին, Հրաչ Զարդարեանիին ու Որբունիին պէս: Դեռ ուրիշ ոչինչան լուսածններու պէս: Բոլորն ալ, 1915-ի պատանիներ՝ եղան սաստիկ հայ, կրակի պէս կիզիչ: Ու պայծառ ու մակընթաց: Ու խռովիչ ու խենթ: Այսպէս, զերիվէ՛ր ապրումի մը վերածելով հայն ու Հայաստանը, իրենց տարագիր կեանքի առաւօտներուն թէ իրիկուններուն մէջ: Չմոլորեցան: Օտար ոչ մէկ զեղեցկութիւն կրցաւ կաշառել իրենց ազգային ապրումը: Ձինկան ոչ մէկ անդունդի մէջ: Չթաղուեցան ոչ անլիերէնի վիճին մէջ եւ ոչ ալ Քըրանսիերէնի: Դրամ եւ նիւթական այլ բաներ՝ եղան ուրիշ ու մանր արժէք: Մեծազոյն արժէքով ամենամեծ դրամը իրենց համար՝ երկրագունտին վրայ տարտղնուած ու զգտիկ կայքով հայութիւնը եղաւ: Իսկ այդ սաստածային դրամը մանրուքի վերածող ոչ լուսայտփոխ եւ ոչ ալ բաւարար Հարստութեամբ դրամատուն հանչցան անոնք: Չայն, երբ պէտք եղաւ, վերածեցին զըրական հատորներու. սմանք՝ նկարի, երգի, զանգակի: Այսինքն՝ տասնամեակէ



տասնամեակ, գեղեցիկ զոհողութիւններու:

Ազգային բարձր գիտակցութեան ու բարոյականի այս ընթացքը, — զանդիւնող հայ ըլլալու լուս կամ բարձրադասակ կամք —, կը գտնենք հայ մտաւորականին համար բոլորովին բնական: Ոչ կը զարմանանք եւ ոչ ալ հարկ կը տեսնենք պարծենալու: Աժօթ չէ՞ ուրիշ մեւտով մտածելը նման բաներու մասին:

Ամէնէն բնականը ի՞նչ պիտի ըլլար անկառիկ շարիքէ մը ետք, որ 1915-ը եղաւ: Այդ օրերէն եկած մեծցած, գրող դարձած տղան ճերմակ խօսքեր պիտի ուղղէր աշխարհին, թէ կարժի՛ր խօսք, արիւնի ու կրակի պէս: Վարդազո՞յն մեկաներ պիտի դորձածէր, թէ սեւ՝ անէճքի՛ նման: Զարմանալին խռովքի ու դառնութեան դաժան զպրտութեան մը ծնունդ տալը պիտի ըլլար, թէ հանդարտութեան ու ժպիտի՛ դործերը պիտի ըլլային:

Հանդարտ Համաստեղն անգամ, շունի մը հետ խօսեցաւ, կործանուածի մը բոլոր տխուր բառերով: Միւսները անյազօրէն խռովեցան, անկուշտ տաղնայ մը

ապրիցան տաճարեանէ տանամեակ: Պոսացին զայն:

Բայց Արամ Հայկազ, Շապին Գարահասարցի Արսէն Չեքեմեանի հինգ ժանկրէն ամէնէն կրտսերը եւ տարեկից պրազէտներուն թերեւս ամէնէն աւելի շարժարեւածը ապրիլեան եղեռնին՝ - Տէ՛ր Աստուած, ինչ ուժ եւ յամառութիւն՝ - չլացաւ, չհայհոյեց: Փոխան զայրոյթի եւ վախճան չունեցող զայրապուստեան մը՝ կարծես վախճան չունեցող հանգարտ ձեւով մը... Ժպտեցաւ: Յամառ սղայ կ'ըլլայ, նոյն ատեն արդար եւ հոգեպէս զօրեղ՝ որ սրլափ ծեծես, անդրուելիօրէն հանգարտ կը մընայ, աչք չի թարթեր. նոյնիսկ կրնայ ժպտիլ ու ծաղրել այդ ձեւով ծեծելու տկարութիւնը, անմտութիւնը:

«Վեղին Ձայնը» գործին հեղինակը մեղի կը թուի թէ նմանած է շատ ծեծ կերած, բայց միշտ ալ ծեծն ու ծեծողը յամառօրէն տրհամարած զօրեղ հողիով ամբապինդ տղու մը: Ծեծած եւ ամէն ինչով փնացնել ուզած են ա՛ղբը, ծեծած եւ ամէն ինչով փնացնել ուզած են ծոն՛դը: Ուզած են ծեծելով եւ յոռի ամէն բանով չձգել ոչ ո՛չ հարազատներէն: Զինքն ալ ուզած են անշուշտ շարժարեւ ու չբացնել. բայց կը զգաս, ինք եւ իր գրականութիւնը կը զգացնեն քեզի, որ չէ կըած, որ մնացած է իր մէջ հայութիւնը՝ միշտ ուզողահասակ, միշտ ուղղապինդ: Կուտակուած լեռ մը շարժարեւներուն տակէն, յաջողած է նոյնիսկ ժպտիլ, արհամարհել, ենթադրուակցութեան մը խորունկներէն զգալով կարծես թշնամիին տկարութիւնը, ճակատագրական անմտութիւնը անոր: Ազգէն շատ քիչ մարդ ազատեցաւ, իր գերզատաւնէն՝ ազատեցան թերեւս միայն մէկ կըլու հոգի: Ժպտեցաւ դարձեալ, կատակեց կրկին, թշնամիին անհուն անմտութեան վրայ գումարելով այս անգամ հաւանաբար ուրի՛շ բաներ, - ցեղային վերակենդանութեան հանդէպ իր անբուպա յոյսն ու հաւատքը: Թշնամիին ներքին տկարութիւնէն եւ հայուն ներքին զօրութիւնէն յառաջացած կրկնարմատ

ժպիտ մը ուքեմն՝ Արամ Հայկազի ժըպտը, կրկնարմատ կատակ մը՝ երեսունըհինգ տարեկներէ աւելի, դրել սկըսելէն ասդին:

Նկարագրի բացատրիկ եւ հոգեկան սարիչ դիժի մը վրայ խաբսխուած ժըպտելու այս զօրութիւնը, որ Արամ Հայկազինն է՝ կ'ապշեցնէ քեզ. Կը դրանես ինքզինքդ պահ մը տարօրինակութեան մը ասօն. ու կը հարցնես դուն քեզի, մէյ մը հանգարտ, զուարթ, պրեթէ շոքոյալ գրականութեան մը եւ գրական մշակի մը նայելով, մէյ մը համազգային կործանումի մը հազար հինգ հարիւր օրերու կատարեալ դժոխքին: Կ'ըսես, զարժացած, ապշած, բթացած պրեթէ:

- Պոլսոյ մէջ վից ամիս հռչակաւոր Յակոբ Օշականի աշակերտ եղած այս տղան ծնած է 1900-ին, Շապին Գարահասար: Արդ, քսաներորդ դարու առաջին տարին շատ քա՛ղցր թուական մըն էր միթէ մեղի համար: Ու Շապին Գարահասարը շաքարղէզներու Գուլա՞ մըն էր միթէ օսմաննան Անտոնուի մը մէջ, որպէսզի կարենայիր քա՛ղցր ըլլալ, թրթռնալ. թուականներու մէջ ծնելով հանդերձ: Կը նայիս, նորէն, ժպտող մարդուն, կատակ ու կեանք իր գրականութեան եւ... ուրիշ թուականի մը այս անգամ: Թայաթներու թուականին:

Արդ, 1915 թուականը ժպտախ՞ թուական էր, թէ Հայաստանի բոլոր ժըպտաներն ու ժպտողները անկացնելու թուական: Թայաթներն ու ինվիւրները մեր տխրութիւնը փարատելու եւ մեզ գուարթացնելու՞ ջանք կը թափէին այդ օրերուն, թէ Նիքոսի ափերն ի վար դիակ բազմապատկելու, արցունք եւ արիւն արտածելու ծրարեր կը գործադրէին, սաղայէլէ մը աւելի բծախնդիր հրէշութեամբ:

Այո՛, կը շմիս պահ մը, կը բթանաս, կը հարցնես իւրովի:

- Տէր-Չօրի չորս կողմերը չորս տարի կատակ եւ չորս տարի հարանիք ընելու՞ փութացեր էինք կարաւա՞ն առ կարաւա՞ն, թէ քլուեր էինք անտեղ

չան պէտք բնաջնջուելու: Ու մանաւանդ որո՞ւն լման պատանութիւնը մոխրացաւ Գիւրտիստանի մէջ, նման ուրիշ տեղ մոխրացած բազում ու բիւր պատանութիւններու: Իմ եւ տարեկիցներո՞ւս, ինձմէ փոքրերո՞ւն, սա դրացի օտար մարդո՞ց, թէ «Ճեղին Զայնը» եւ «Շապին Գարսէխարի Հերոսամարտը» գրողին:

Հակասութեան մը այս բոլորովին ակնբոխ երեւոյթին առջեւ, որ Արամ Հայկազի կեանքին առաջին եւ կարեւորագոյն շրջանը եղաւ, մարդ իսկապէս, նախ քան բացատրութիւն մը փնտռելը, կ'ապշի: Անուր չարիքներէ ետք, բնականօրէն Երեմիա մարգարէի մը սպասող եւ յանկարծ Նասրէլտին Հօնայի մը հանդիպող մարդու մը սպաշտութիւնը տարբեր պիտի չըլլար քան ա'յս սպաշտութիւնը:

Ճ

Նասրէլտին Հօնա մը չէ անշուշտ Նիւ Եորքի մտաւորական հայ գինկոկրաֆը: Բայց իր անցեալին ու արտօնութեանց դիմաց հօնայական բարի ու տարօրինակ քերականութիւն մը ընդգծելը, անձէն մինչեւ իր գրականութեան ծայրամասերը երկարող, փորձիչ բան մը կը դառնայ հոս մեղի համար:

Ասեղի ծակի պէս նեղ տեղերէ անցած այս դրազէտը, որ իր բոլոր կատակներով ու տեսական զուարթաստեղծութեամբ հանդերձ, մինչեւ եղունգներուն ծայրը լուրջ ու բարոյախոր մարդ մըն է նոյն ասին, կոխից կրակի վրայ շատ անգամ՝ ու ժպտեցաւ:

– Կուլամ՝ հետեւաբար կամ: Երեմիա մարգարէին եւ նմաններուն կեանքի փիլիսոփայութեան ոճն էր սոբիկա: Նաև հայերուս օճը՝ շատ անգամ, շատ տեղ: Մեր գոյութեան ամէնէն արամաբանական եւ ամէնէն զօրաւոր մէկ փաստին վերածած ըլլայինք կարծես արցունք կոչուած տխուր դոյալակներ, ժպտան ու զուարթութիւնը քիչ արտօնուած, կարծես միշտ դողցուած բաներ թուեցան դարեր հաշուող մեր մասնագրութեան

մէջ: Նկատուեցան մակերեսային թիթեւ բաներ: Գոյութեան մեծագոյն փաստը արցունքը եղաւ:

Արամ Հայկազի եւ իր գրականութեան համար, կը թուի թէ հակառակ օճը ճիշդ համարուեցաւ:

– Կը ժպտիմ՝ հետեւաբար կամ: Կը կատակեմ՝ հետեւաբար գոյութիւն ունիմ: Զուարթ եմ՝ հետեւաբար առողջ:

Իր անձն ու գիրքերը յենարանն են կեանքի փիլիսոփայութեան մը վերածուած այս պարզ բառերուն:

Կայ գեռ ուրիշ բան:

Անարդարօրէն կրակներու մէջ դըրուած ըլլալ եւ այդ պահուն ու այդ պահէն երկար ժամանակ ետք, աշխարհը կրակի տալու արամագրութիւն եւ սպորում ունենալ՝ բարոստութեան եւ զօրութեան նշան մըն է, կասկած չկայ: Կրուելու ուժ է: Շուշանեանները, Մփիւռքի մէջ, այդ տեսակ սպորումի հեղինակ կոչան, կամ ուղեցին ըլլալ: Այրած էին, կ'այրէին, այրե՛լ կ'ուղէին:

Բայց, Բարեկոնէն ոչ շատ հեռու եւ Նարուզոգոնոսորի նշանաւոր հնոցէն բազում անգամ աւելի հրարոր հնոցի մը մէջ նետուած ըլլալ եւ Արեթիսազովի մը հանդարտութեամբ չըջիլ անոր բոցերուն մէջ, նոյնիսկ ժպտիլ, եւ Գիւրտիստանի զօրիքին այդ ժպտալ գանձի մը պէս յետոյ Նիւ Եորք հասցնել, տուն-տեղ ըլլալ անոր հետ մինչեւ 1962 թուականը՝ ուրիշ տեսակի զօրութեան մը ապացոյցն է: Մփիւռքի մեր այսօրուան գրականութեան մէջ, Արամ Հայկազի զօրութիւն կրնանք կոչել զայն:

Զօրութեան երկու գլխաւոր բեւեռներ կան մարդկային կեանքին մէջ: Կընիքի զօրութիւն եւ խաղաղութեան զօրութիւն: Արտասահմանի մեր արդի գրականութեան մէջ, կենսունակութեան նշան կրուի եւ խաղաղութեան բեւեռներէն առաջինին վրայ էթէ Վազգէն Շուշանեանը կը տեսնենք, երկրորդին վրայ կը տեսնենք Արամ Հայկազը, – խաղաղութեան եւ իմուրին անխոնջ մարդը:

Ե. Գ.



## ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐՈՒ ԽԵՂԱԹԻՒՐՈՒՄՆԵՐԸ

Վ. ՀԵՐՈՒՆ

ՅՈՒՐԴԱՅԻՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՀԱՍԱՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻՑԻՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ:

Խորհրդային Հայաստանի պատմագրութիւնը եւ գրական քննադատները նոր թափով աշխատանքի են լծուել նախաճակատներեան հայ գրողների վաստակը եւ հասարակական գործունէութիւնը սովետական ակնոցներով դիտելու, իսկ հնարաւոր եղած պարագային «խորհրդայնացնելու» գրանք: Խորհրդային պատմական եւ գրական մեկնարանութիւնները այժմ եռակի նպատակ են հետապնդում.

ա. Ապացուցել որ «հայ յուսալիլմական գրողները» ոչ թէ ներկայումս միայն այլեւ հեռաւոր եւ մտաւոր անցեալներում, ունեցել են սուռական օրիավարաւիտ եւ քարոզել են ու մաղթել «հայ ժողովրդի կամաւոր միացումը» Խուսափում են հետ.

բ. Որ հայ ականաւոր գրողներից շատերը, թէ Արատասահմանում եւ թէ Կովկասում, որոնք ապրել են Հայաստանի հանրապետութեան խորհրդայնացման շրջանին, ոչ միայն կապուել են Հայաստանի հետ այլեւ հաւատացել նրա խորհրդային վարչաձեւին եւ գրան ծընունդ տուող համայնավարութեան.

գ. Որ «հայ յուսալիլմական գրողները» դատապարտել են Հայաստանի հանրապետութիւնը եւ Հ. Յ. Գալսեակ-

ցութիւնը, ժխտելով այս վերջինի դոյութեան իրատեսքը եւ նողկանք արտայայտել նրա դաւաճանական գործունէութեան համար:

Այս տեսակէտից յատկանշական է «Ամենայն հայոց բանաստեղծ» Յովհաննէս Թումանեանի պարագան: Համայնավար տեսարանները եւ Թումանեանի հայաստանեան կենսագիրները իրենց տեսակէտները հիմնաւորելու համար, դժբախտաբար դիմել են բանաստեղծի կենսագրութեան աղճատման, պատմական խեղաթիւրումների՝ բազմաթիւ զէպքեր եւ գրութիւններ դուրս թողնելով նրա կենսագրութիւնից կամ իր գրական-հասարակական ընդթ կրող վաստակից: Կրճատելով այն նամակները եւ յօդուածները, որոնք անհամապատասխան են իրենց որդեգրած ելուցքներին:

Ի՞նչ են խորհրդային քննադատների կարծիքները Թումանեանի որդեգրած ազգային-հասարակական ընդհանուր ուղեգծի մասին. գրանք կարելի է լաւագոյնս խտացուած համարել հետեւեալ երեք եզրակացութիւնների մէջ.

«...Թումանեանը խորապէս ատել է Անդրկովկասում ժամանակաւորապէս բռնի դրած դաշնակ եւ այլ թափթփուկներին, անդրկովկասեան ժողովրդների այդ ոխերիմ թշնամիներին, անգլո-ամերիկեան իմպերիալիստներին. վաճառուած այդ լակէյներին, որոնց կարճատեւ տիրապետութեան ընթացքում Ան-

զըզովկա՞ր զարձաւ սովի եւ աւերակների երկիր...» (1)

«...Դարասկզբի Հայ մեծանուն զըրողների շարքում, Թումանեանը ամէնից աւելի շատ, ամէնից աւելի ճիշդ ու հաստատակամօրէն կողմնորոշուեց զէպի սովետական կարգերը եւ 20-ական թըւականների սկզբին, բոլոր միւս զըրողների համեմատութեամբ, թէեւ կարծատեւ բայց ամէնից աւելի գործօն մասնակցութիւն ունեցաւ այն դժուարին պայքարում, որ մղուեմ էր յանուն նոր կարգերի ամրապնդման, ընդդէմ հակառակորդի ուժերի, որոնք կատաղօրէն ձգտուեմ էին իր խոնձարուրի մէջ խեղդել սեւտուցիտի նորածին մանկան» (2)

«...Յովհաննէս Թումանեանը... աշխատակորներէ մէջ զգալի աշխատանք է տանում զաշխակցական աւանդիւրան (խաղը Փետրուար 18-ի մասին է Վ.Ղ.) լիկվիդացնելու համար» (3)

Այժմ քննենք Յովհաննէս Թումանեանի ազդային հասարակական դործունէութիւնը, աւելի այն ինչ որ յատկանշըւում է իր կենսագրութեան մէջ:

90ական թուականներին, Տաճկահայաստանում եւ կովկասում սկսուեմ են ձեւակերպուել Հայ ազատագրական շարժումներ: Ազգային կուսակցութիւններ են հրապարակ գալիս Հայ ժողովրդի զատը պաշտպանելու առաջադրանքով: Յովհաննէս Թումանեանը միանում է այդ կուսակցութիւններէ՝ Հ. Յ. Դաշնակցութեան: 1905 թ. Ապրիլին, Դաշնակցութեան կովկասեան Առաջին Շըրջանային Ժողովին, Թումանեան մասնակցում է իրրեւ «Մեծ քաղաքի» (Թիֆ-

լիս) կենտրոնական կոմիտէի անդամ (4): Սակայն ինչպէս երեւում է, Թումանեանը, որ ունեցել է հանրային գործիչի զօրեղ ջիղ, անմոտիրութեամբ նըսիրուելով հանրային-հասարակական խնդիրներին, իրրեւ բանաստեղծ չի ունեցել կուսակցականի, քաղաքական գործիչի խոտնուածք: Արշակ Ջամբաշեանը պատմում է թէ ինչպէս «կովկասում Դաշնակցութեան կողմից սոցիալիստական սկզբունքներով դասակարգային պայքարի շղթայագործման հարցում» նիկու Ազրալեանը «զօրոտի» է բարձրացնում Թումանեանի ձեւքը, եւ թէ ինչպէս վերջինս ժպտալով «ձայն» է տալիս (5):

1905-1906 թուականներին, երբ կովկասի մէջ շղթայագործուել էին հայ-թատրական կոիւներ, եւ երբ ռուս ցարական պաշտպանութիւնը իր կրուորական դիրքով եւ այլապէս աշխկցում էր այդ ընդհարումների ծաւալման, Յովհաննէս Թումանեանը ընդվզում է ցարիքի դրամներ որ տիրեալի քաղաքականութեան դէմ. նա գրում է.

«Յեղափոխութեան ուրուականից վախեցած ռուսական զիւղղիւրատիան ժողովրդների համար մի շար խաղ հընարեց, ցանկանալով բաժանել նրանց եւ դրանով զրաղեցնել նրանց ուշադրութիւնը» (6):

Այդ կոիւների ժամանակ երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը լծուած էր Հայ ժողովրդի սպառազինման եւ ինքնապաշտպանութեան դործին, Թումանեանը «...զինուած սոից զլուխ հարիւրաւոր ձիււրներով ու ճերմակ դրօշակով» (7) մեծ աշխատանք է տանում իր ծնընդամար Լոսին ու շրջակայքը ազգամիջեան կոիւներից դերծ պահելու համար:

(1) Արշալոյս Բարայան, «Յովհաննէս Դրակնուտիւն եւ Արուեստ» Երևան 1952, Թիւ 2:

(2) Տես Ա. Ասատրեան, «Սոցիալիստական Վճարանքի Հայ Գրականութեան Պատմութիւնը» (Երևան, 1959) էջ 78:

(3) Տես Մ. Պ. Ազալեան, Հայ եւ Ազըրբայժանական Ժողովրդի Գորուոր Բարեկամութիւնը (Երևան, 1961) էջ 279:

(4) Ջամբաշեան, «Վէճ» Համալէս, Փարիզ, Թիւ 2, 1933:

(5) Դոյն տեղի:

(6) Յովհ. Թումանեան, ԵՐԿԵՐ, Դասոր, (1961 թ. Փրեան) էջ 421:

(7) Երկեր, Դասոր 6, (1946, Փրեան) էջ 299:

Շնորհիւ Քումանեանի թափած ջանքերի եւ միաժամանակ Լոսիի շնորհիւն դիրքերի ու հայ ժողովրդի լաւ ապաստարանում, Լոսի դուռը դերձ մնաց այդ ընդհարումներից: Իր կատարած հաշտարար դերի մասին մարդասէր բանաստեղծը հետեւեալն է գրում, 1908-ին գրած մի նամակի մէջ.

«Ամէն ջանք լարունակ գործ էր դրել մեր գուլաններում խաղաղութիւնը պահելու եւ կոտորածների առաջն առնելու: Աւ այսօր ես այնքան դժուար չեմ որ գրականութեան մէջ մի սրեւէ բան եմ արել, որքան դժուար է, որ ակներեւ կարողացայ իրար դէմ կանգնած ժողովրդիկները սրբը պատեան դնել եւ շատ ու շատ անմեղների ազատել այս դազանական կոտորածից» (8):

Ոչ միայն Քումանեանի ներկայ սովետականացիները չեն յիշատակում բանաստեղծի Դաշնակցութեան հետ այդ թուականների ունեցած կապի մասին, այլև սայլիեան մուգի օրերին, 1939, ստիպել են Քումանեանի գուլաններից Նուսրէ Քումանեանին եւ խեղաթիւրել իր հօր կենսագրականը: Այսպէս օրինակ, Քումանեանի դուռը խօսելով վերջինիւն նամակի մասին, գրում է թէ «Քումանեանը ցաւով է նշում այն վաստը որ ենթարկուելով ցարական ու դաշնակցական պրովոկացիայի, հայ թրքական ընդհարումների ժամանակ հայ ժողովուրդը գուր մնաց 1905 թ. Ռուսաստանում բռնկուած Յեզափոխական շարժումներից» (9), բայց փոքր այն է որ թէ վերջինիւն եւ թէ սրեւէ ուրիշ նամակի մէջ Քումանեան հայ-թաթարական ընդհարումները դաշնակցական «պրովոկացիայի» արդիւնք չի համարել, այլ ցարիկի: Եթէ Քումանեանը իսկապէս նման յայտարարութիւն արած չի-

ներ սրեւէ տեղ սրեւէ նամակի մէջ, մենք վստահ ենք որ թէ Նուսրէ Քումանեանը եւ թէ Քումանեանի միւս բոլոր կենսագիրները փոխանակ մեկնաբանելու Քումանեանի նամակի այդ մասը ուղղակի մէջբերում կ'անէին այդ նամակից, այդ զոյուրիւն շունեցող յայտարարութիւնը:

1908-1909-ի ընթացքին ոռոս կառավարութիւնը շրջայտերծած է պայքար Հ. Յ. Դաշնակցութեան դէմ: Արքակալուում են բազմաթիւ հայ մտաւարականներ, ժողովրդական մարտիկներ, հանրային գործիչներ, եւ դատական հետապնդման ենթարկուում: Բուրժուազայականութեան պատկանելու եւ Ռուսաստանի դէմ հակապետական գործունէութիւն տանելու մեղադրանքով: Հայ արիշ ժողովրդականները կարգին ձերբակալուում է նաեւ Յովհ. Քումանեանը (Դեկտ. 24, 1908) եւ արգելափակուում Քիֆիսի Մետեխ բանտում, «ուր մտում է վեց ամիս»: Ազատ է արձակուում 1909 թ. Յունիս 13-ին, 5000 ռուբլի գրականութիւնով (Երաշխատութեամբ) Քիֆիսից չհեռանալու պայմանով (10):

Ինչո՞ւ է ձերբակալուել Յովհ. Քումանեանը ըստ սովետական պատմագրութեան: Որովհետեւ չեն կարող ստել թէ Քումանեանը դաշնակցական է եղել, նրանք հետեւեալ թիւը բացատրութիւն են տալիս.

«Յարական ժանտարմերիայի աչքից չէր վրիպում Քումանեանի 1905-1906 թ. քաղաքական նշանակութիւն ունեցող եւ ըստ էութեան հակակառավարական դործունէութիւնը: Քումանեանի խաղաղարար միտման դուր չի գալիս իր ժամանակի նաեւ տեղական հայ եւ թուրք քննարկի եւ հարաւարներին, որոնք դէմ լինելով Քումանեանի հակակառավարական դործունէութեանը, ամէն հնար ու ջանք գործ են դնում - նոյնիսկ համադրուողները -, մի շարք գրադարութիւնների

(8) Յ. Քումանեան, Երկեր, Տատր 5, էջ 298 «Նոր-Ուղի» հանդէս, Թիւ 2-3 (Երևան, 1929) էջ 198-199:  
Ն. Քումանեան, Յովհաննէս Քումանեան, (Երևան, 1939) էջ 89:  
(9) Ն. Քումանեան, էջ 89

(10) Նոյն տեղ, էջ 91:

...միջոցով թուամենանին մասնկուցարական կառավարութեան ձեռքը» (11)

Այս բացատրութիւնը թէեւ դատարարական պայքարի համ եւ թուամենանին էլ իրբեւ հակացարական տարր ներկայացնելու միտում ունի, այսուհանդերձ արամարանական է: Բայց արամարանական չէ այն հանդամանքը որ ցարիզմը Ձ եւ կէս ասորի է սպասել նման հակակառավարական անձի հաշտարար բայց վտանգաւոր արարքները ջննելու ե դրանց հեղինակին բանտարկելու: Պարզ փաստը այն է, որ Յ. թուամենանը բանտարկուել է Հ. Յ. Գաշակցութեան դէմ ցարական կառավարութեան շրջապահերձեւ Հայրածանքների առնչութեամբ:

Գաշակցութեան դատի առնչութեամբ, 1911 թուի նոյեմբեր 7-ին, թուամենանը նորից է ձերբակալուում, կրկին նետուում Մետեիի բանտ եւ ապա այնտեղից փոխադրուում է Պետերբուրգ, դատավարութեան համար:

Դատավարութեան ընթացքին, էր ժամեր տեւող ամբաստանազրի մէջ դատախազը վեր է հանում Գաշակցութեան գործունէութիւնը եւ եղարկացրնում թէ.

«Գաշակցութիւնը իր ծագման օրից է վեր (1890) Ռուսաստանի համար եղել է հակապետական ու յեղափոխական, շատ աւելի վտանգաւոր, շատ աւելի անհանդուրժելի, քան մի այլ կուսակցութիւն:

«Են լզիտեմ ոչ միայն մեր պատմութեան, այլեւ ընդհանուր համամարդկային պատմութեան մէջ մի կազմակերպութիւն, որը իր մէջ պարունակէր այն աստիճան հակապետական ուժ, եւ այնպիսի թափով եւ կատաղութեամբ կռիւ մղէր պետութեան դէմ, ինչպէս Գաշակցութիւնը» (12):

Որհնդհանա յ պատմագիրներն ու գրական քննադատները չեն ուղում որեւէ

ձեւով անդրադառնալ թուամենանի իրբեւ գաշակցական դատուելուն, քանի որ այդ կարող է անուղղակի կերպով երեւան բերել Գաշակցութեան հակացորական եւ յեղափոխական բնոյթն ու գործունէութիւնը: Այս կարող է նոր հակասութիւններ եւ խնդիրներ ստեղծել առանց այն էլ հակասութիւններով խճողուած խորհրդային պատմագրութեան համար, որովհետեւ ըստ պաշտօնական ուղեգրի, Գաշակցութիւնը ցարիզմի եւ Ռուսաստանի յետադիմական տարբերի գաշակիցներից եւ յննարաններից մէկն է եղել:

Գաշակցութիւնը զազանի եւ անլեզալ կազմակերպութիւն լինելով, թուամենանը եւ շատ ուրիշներ ցարական Սենատի ատեանի առջեւ հրապարակով ուրանում են իրենց գաշակցական լինելը: Գաշակցութեան դատավարութիւնը տեւում է շուրս ամիս եւ վերջանում է Ծհ հոգու անպարտ արձակումով եւ 52 հոգու դատապարտութեամբ: Անպարտ արձակուողների մէջ էր Յովհաննէս թուամենանը: Գաշակցութեան դատավարութիւնից յետոյ, Յովհ. թուամենանը զազարում է գործն եւ շարքային գաշակցական լինելուց: Ըստ Արշակ Ջամայեանի, դատավարութեան ընթացքին թուամենանի ի յայտ բերած անարի կեցուածքը պատճառ է լինում որ Գաշակցութեան թիֆլիսի Կ. Կոմիտէն մի շարք ընկերների հետ նրան եւս հեռացնի Գաշակցութիւնից: Ըստ ուրիշների, էր երկու անգամ բանտարկուելը եւ իր բազմանդամ (տասնեւմէկ հոգի) ընտանիքի հանդէպ ունեցած ծանր մտահոգութիւնը պատճառ են դառնում որ ինքը թուամենանը կամուզին հետանայ Գաշակցութիւնից:

«Մակայն Գաշակցութիւնից հեռացուելուց յետոյ եւս թուամենանը իր բոլոր համակրանքներով մնաց Գաշակցութեան եւ գաշակցականների հետ: Նա օրն է բուն մեզ հետ էր եւ ազգային-քաղաքական բնաւորութեամբ որեւէ հարց ծագելուց, անմիջապէս մեր խոր-

(11) Նոյն տեղ, էջ 91:  
(12) Տես Դատախազի ձառք ԳՐՕՇԱԿ (19 12 վէմ):

հրդեհն էր դիմում» գրում է Ա. Ջամալ-եանը (13)։ Այս յայտարարութիւնը գալիս է հաստատելու նաեւ յայտնի բոլլեւիկ քննադատ Պօղոս Մակինցեանը։

«Թումանեանը դուրս է գալիս Դաշնակցութիւնից, բայց իր ողջ աշխարհայեցողութեամբ, իր ազգային մտայնութեամբ եւ ներքին զգացողութեամբ մընում է դաշնակցական ընդմիջոյ» (14)։

Դաշնակցութեան գաղափարութեան ընթացքին, Թումանեանի պաշտպան փաստաբաններն էին Ռուսաստանի ժամանակի ամենայայտնի փաստաբաններից Գրուղ Աբերյալը եւ Ա. Կերենսկին։ Իր պաշտպան փաստաբաններին Թումանեանը նուիրել է մի բանաստեղծութիւն Սրկու հոգի մի խորագրով (1912 թ. Պետերբուրգ գրուած)։ Բայց որովհետեւ Հեռագային Ա. Կերենսկին 1917 թ. Փետրուարեան Յեղափոխութենէից յետոյ ուստ ժամանակուսը կառավարութեան պարագլուխը եղաւ եւ այդ կառավարութիւնը տապալուեց լենինի հոկտեմբերեան Յեղափոխութեամբ, եւ որովհետեւ ըստ լենինի Կերենսկին սոսիկ ճենգ ու խամսճիկ» մի խորտելիակ էր, ուստի Հայդեօրատը յարմար է դատել Թումանեանի երկերի ժողովածուներից դուրս նետել այդ բանաստեղծութիւնը։ Իսկ Թումանեանի խորհրդահայ կենսագրուները յարմար են դատել բնու յանդրադասել Թումանեանի փաստաբանների մասին։

Նոյնպիսի մտահոգութիւններով խորհրդահայ քննադատները անդրադառնալով Թումանեանի եւ իր Թիֆլիսի ժտերիմների նշանաւոր Վերնատան հաւաքոյթների մասին, յիշում են միայն Ղազարոս Աղայեանի, Ա. Իսահակեանի, Դերենիկ Դեմիրճեանի անունները եւ դիտաւորեալ կերպով դուրս ձգում Նեկոյ Աղբալեանի եւ Լեւոն Շանթի անունները։ Կարծէք նման անուններով մարդէկ

ոչ գոյութիւն են ունեցել եւ ոչ էլ Թումանեանի հետ ծանօթ եղել...

Նոյնպիսի մտահոգութեամբ, Թիֆլիսի Նուարդ Թումանեանը եւ Թիֆլիսի Թումանեանի խորհրդահայ կենսագրիներէ հոյը անդրադառնալով Լուսաբեր դասադրքի հրատարակութեան, գրում են. «1907 թուին Թումանեանը Ստ. Լիսիցեանի հետ նախձեռնում է Լուսաբեր դասադրքի հրատարակութեանը» բայց յարգելի կենսագրիները միայն մտանում են մի ուրիշ հեղինակի, Լեւոն Շանթի անունը որը զժրատարար, է հեճուկս իրականութեան, տպուած է Լուսաբեր դասադրքերի կողքերի վրայ...

Ճ

1912 թուականին, Թիֆլիսում կազմուած է Աղբալեանի Բիւրօ՝ Թրքահայ ժողովրդի քաղաքական պահանջները պաշտպանելու համար։ 1914-ին նոյն Աղբալեանի Բիւրօն, անկուսակցական համազգային մի մարմին, ստանձնում է հայ կամուրջական շարժման խմբի կազմակերպութեան ու ղեկավարութեան դործը։ Յովհաննէս Թումանեան, իբրեւ անշամ Աղբալեանի Բիւրօյի, բերում է իր պործօն մասնակցութիւնը (1)։ Նա սազմաչունջ եւ խանդավառ յողուածներ է հրապարակում Դաշնակցութեան Թիֆլիսի օրգան «Հորիզոնում», համակուած մեծ խանդավառութեամբ, Դաշնակիցների, յատկապէս Ռուսաստանի յաղթանակի հետանկարով։

«Աղբալեան պատերազմը եւ իրենց դիւցազունները» յօդուածի մէջ (2) նա գրում է. «Որովհետեւ ամէն մի ազգի ուժն ու ոգին մարմնացած է ազգային էպոսի մէջ, ամենայն համարձեռութեամբ կարող ենք էպոս ասել, քէ ազգերի պիւցազուները՝ սերբիական

(13) «Վէմ» Թիւ 2, 193:  
(14) «Նոր Ուղի» (1929, Երևան) Թիւ 2-3 էջ 200:

(1) Տես Ս. Վրացեանի վերջերս լոյս տեսած Հին Թիֆլիսի Նոր Պատմութեան համար (Բէյրութ, 1962) էջ 13, 108, 139:  
(2) «Հորիզոն» 1914 թ. Սեպտ. 4:

Մաքիօն, գերմանական Զիգֆրիդը, ֆըրանսիական Ռալանդը, անգլիական Բեռնարդոն ու բուսական Մարտիի Իլիանէն առաջնայինների աշխարհից դուրս են եկել մեր առաջ, ու մենք հանդիսատես ենք էս հսկաների կռուին» *ապա նա իր հաւաստիքն է յայտնում դաշնակից հսկաների եւ նրանց արդէրացու Սասունցի Դաւիթի յաղթանակի հանդէպ, Տանկաստանի մասնատման եւ հայկական հարցի վերաբերման առթիւ.*

Երկու կազմած որ էս հսկաների գարկերի տակ մասնատուելու են եւ Եւրոպայի թիւքիսան՝ Աւստրո-Հունգարիան, եւ Ասիայի թիւքիսան, որոնք մայրիկ էս դիւցազնների շարքում չունեն իրենց ներկայացուցիչը եւ շատ բարիքների ու ազատութիւնների հետ միասին որ հետեւելու են մեծ պատերազմին, վերջնականապէս պէտք է վնասի եւ Տանկաստանի կարգը, կամ եթէ կողմնակի արդէն վնասուած է: Չէ՞ որ Մարտիի հսկայի «ախպէրացուների» քուտմն է եւ մեր Սասունցի Դաւիթը, եթէ միայն Մարտիի թիւքիսան հարից լուս աշխարհի է դուրս եկել»:

*Թումանեանը ուրախութեամբ դիմաւորեց 1914-ի ուսու-թրքական պատերազմը, որովհետեւ դրանից կախում ունէր Տանկաստանի մասնատման արդարութիւնը: Բայց ցանկանալով ուսուական զէնքի յաջողութիւնը նա բնաւ չէր ցանկանում Տանկաստանի մասնատման թրքական լուծից ազատումը եւ «կամաւոր միացումը» Ռուսաստանին, ինչ որ նկատու էր ապացուցանել խորհրդային պատմագրերն ու կենսագիրները, այլ նա հաւատում էր Տանկաստանի մասնատման արդարութիւնը եղբայրութեան մէջ» իր արժանի անդը Պըրսանուն: «Հորիզոնում դրած մի ուրիշ յօդուածում բնութագրելով ուսուական, եւ ուսու-թրքական պատերազմները, նա հետեւեալ կերպով է ներկայացնում մեր ազգային-ազատագրական շարժումը.*

«Առաջինը (1827-28-ին) - հայ ծովորդի մի մասն ազատեց մի անյայտ դը-

ժոխից եւ ազգովին ապրելու յայտնաբերեց: Երկրորդը (1877-78) դրեց ինքնավար Հայաստանի հարցը: Երրորդը բերելու է թիւքիսաներին ազգային ինքնավար կեանք:

«Առաջին պատերազմը մեզ տուեց ի. Արշակունի - Եւլիքի Հայաստանի»: Երկրորդ պատերազմը տուեց Բաթումի, Պատկանեան եւ ազատագրական գրականութիւն: Երրորդը տալու է ընդհանուր ազգային ազատ գրականութիւն:

«Առաջին պատերազմի ժողովրդական հերոսը Ազատիկ էր, պատասխական, մենակ ու խեղճ: Երկրորդինը Վարդանէս էր, խենթը, բէւ գարձալ սանդուղի, բայց իրական կիսմիտ կեանքում, մենակ չէր, եւ մրա կռիւն նկատուած են մի շարք գիտակից հերոսների - Դուրադանի, Փահրապի, Սահրապի, Աւանի, Կարոյի եւ այլոց զէմքերը, որոնք արդէն շարժում էին հայկական կեանքում: Իսկ երրորդ պատերազմի հայ ժողովրդական հերոս - Անդրանիկ՝ արդէն իրական անմուտքութիւն է, շատ ընկերներով, ազատութեան գաղափարն ընդհանուր ու շարժումը համազգային:

«Եւ Էսպէտ, եւ Երրորդ պատերազմը աննդական խորհրդատու երրորդ գարկն է: Երրորդ գարկն է վնաս իրենց: Երրորդ գարկն է հիւսիսի հսկան, Մեծ Ռուսաստանը վնասու է հայ ազգի կիսմ, արիւնտ խեղիքը, ապահովում է նրա ազգային ու առաջնորդում նրան դէպի ազատ ազգերի եղբայրութիւնը» (3):

1915 թ. աշնանը լուս է տեսնում Գիւտ քնն. Աղանեանի «Դիւան Հայոց Պատմութեան» 13-րդ հատորը՝ Տանկաստանի հարստահարութեան վերաբերեալ: Այդ առթիւ Թումանեանը մի յօդուած գրելով է միջի այլոց անդրադառնում է Տանկաստանի մէջ յեղափոխական շարժման ծագման եւ բնութիւնը.

«Դիւանի էս գիրքը՝ յուսանատական

(3) «Հորիզոն» 1914 թ. Հոկտ. 31:

դիմումներով, բարձրացող բաղաձուլ աւելանալու ծրագրերով՝ ցոյց է տարիս քէ տխր էմ բարձր էմ մարդիկ, որոնք կարծում են քէ էս ամէնը կարող էին անցնել առանց ծայրայեղ զժգոհութեան բռնկումի, առանց յեղափոխութեան: Այլ էս սխալ են մտնմք, որոնք կարծում են, քէ յեղափոխութիւնը դրոշմները, աստիճաններն են սկսել ճանկատանում» (4):

Հետաքրքրական է խորհրդահայ պատմագրութեան դերը Քումանեանի կեանքի այդ տարիներին (1912-1917) դործունէութեան եւ հրատարակարական վաստակի հանդէպ, քանի որ Քումանեանը ի յայտ է գալիս իբրեւ դաշնակցական «Հորիզոն»ի աշխատակից, «Իմպրիմալիստական պատերազմի ջատագով» ցարիզմի յայթանակը ցանկացող, հայկական կամաւորական զնդերի գործունէութեանը նպաստող եւ նրանով խանդավառուող, ինչպէս նաեւ «հայ յեղափոխական շարժումը Ռուսահայ բուրժուազիայի եւ ցարիզմի շահերի արդիւնք» չհամարող եւ Տանկահայութեան համար ազատ ազգերի ընկերակցութեան մէջ տեղ պահանջող մի դրականազէտ, գուրդ դասակարգային ըմբռնումներէջ:

Այս ուղղութեամբ իր ժամանակին յայտնի համայնավար Ստ. Շահումեանը Յովհաննէս Քումանեանին համարում էր «մեր շնորհալի բանաստեղծը եւ ասինք փակագծում վատ հրատարակութեան է» (5):

Քումանեանի դուտորը, Նուարդ Քումանեանը, թուելով իր հօր դանադան երաժշտական, ազգագրական, դրամատիկական, պատմական ընկերակցութեանց մէջ ունեցած գործունէութիւնը, չի յիշում իսկ նրա Ազգային Բիւրոյի մէջ ունեցած գործունէութիւնը: Նման

վորժանք են ունեցել Քումանեանի միւս կենսագիրները էս:

Քումանեանի «Հորիզոնում», «Արեւաշի», Աղբալեանի «Նոր Հասնքի», «Գործ»-ի, «Ժողովուրդի Չայտի» մէջ հրատարակած 300 յոդուածներից շատ քիչերը, այն էլ գերազանցապէս գեղարուեստական բնոյթ կրողներն են միայն տեղ դրտել իր նրկերի ժողովածուների մէջ: Հայրենասրտաւ յարմար չի գտաւ միւսների հրատարակումը:

Իսկ դաւով Քումանեանի «Հորիզոն»-ին եւ միւս դաշնակցական թերթերին 9-10 տարի հրատարակարական յոդուածներով աշխատակցելուն, խորհրդահայ գրողները երեւի ուղղութիւն են որդեգրել, եթէ հնարաւոր է բնաւ չխօսել այդ մասին, իսկ եթէ ոչ՝ «Հորիզոն» թերթի տնօնը դնել, սակայն ոչ մէկ ծանօթութիւն դնել այդ թերթի ինչ ուղղութեան պատկանելու մասին, իսկ եթէ այդ էլ անկարելի է, այն ժամանակ դրել է: Ան աշխատակցել է այդ եւ միւս թերթերին ոչ թէ որպէս ղեկավար եւ համակրող այդ թերթի ուղղութեան ու մարդկանց, այլ պարզապէս որպէս «հիւր» — աշխատակից...» (6): Զարմանալի եւ ծիծաղելի մեկնարկութիւն: Եթէ Քումանեանը «հիւր էր, ինչո՞ւ նա հիւր չեղաւ թիֆլիս հրատարակուող սոցիալ-դեմոկրատ հայ թերթերում էս, կամ ինչո՞ւ պէտք է պահանջական Հ. Առաքելեանի «Մշակ»ը յարձակէր Քումանեանի որդեգրած քաղաքական ուղղութեան դէմ:

1915 թուին հայ Ազգային Բիւրոյին կից, Թիֆլիսում կազմուած է մի նոր Գաղթականների Բիւրօ, որը պիտի որդեգրէր նաեւ թէ Անդրկովկասեան հայութիւնը թրքական արշաւանքից ի՞նչ վշտաններ է կրել: Քումանեանը այդ Բիւրոյի նախագահն էր, նա մեծ եռանդով մտնում է տառապող ժողովուրդի մէջ, ամօքելու նրա ցաւերը: Մեկնում է Ալաշ-

(4) Տես «Հորիզոն» 1915 թ. Նոյեմբեր 7:

(5) Ստ. Շահումեան Ա. Դ. «Պայքար» 1916 թ. էջ 39-40, տես իր «Գրականութեան Մասին» (Երևան, 1947) էջ 86:

(6) Ն. Քումանեան «Յովհաննէս Քումանեան» էջ 120:

կերտի հովիտը, Վան, հայ կամաւորներին (որոնց թւում նաեւ իր տղան) իւր-բարխուսելու, Հայաստանի եւ հայ ժողովրդի վիճակին մօտիկից ծանօթանալու: Իր հայ գաղթականներին օգնելու կոչուած Բիւրոյի նախագահի հանգամանքը եւս չեն յիշում խորհրդային Հայաստանի թումանեանազէտները: Նըրանք թէեւ յիշատակում են թումանեանի զաւակներէց, Արաւազդէ (Արտիկ) կորուստը 1917-ին եւ այդ կորուստի առթիւ թումանեանի ապրած ծանր մղձաւանջի ու յուսահատութեան մասին (որին թումանեանը նուիրել է բազմաթիւ քառեակներ) բայց չեն գրում թէ ո՞ւր եւ ի՞նչպէս անհետացաւ Արաւազդը, որովհետեւ այդ պարագային ստիպուած պիտի լինէին երեւան հանելու մի անվնաս իրականութիւն, որ նրա որդին զոհուել է իբրեւ հայ կամաւոր, Վանի վերջին նահանջին... (\*):

Ապրիլեան եղեռնը, իր դաւիկ եւ եղբայրների կորուստը սոսկալի հողեկան տառապանք են առաջացնում թումանեանի հոգում. նա գրում է. «Շատ եմ ջարդուած ու յուզում՝ թէ ֆիզիքապէս ու թէ բարոյապէս: Եւ մի ծանր թախիծ մնում է սիրտը շարունակ: Եստ բան է խորտակուել ինձ համար աշխարհում եւ աշխարհէք շատ ցաւերով է լցուած արդէն»: «...Չմայած եմ անըստապառ լուստեստութեանը եւ բնատրուքեան գուարթութեանը, թախիծը, որ ասում եմ, իրական է ու ասո՛ղ մշտական, անանց» (7):

Մեծ եղեռնի սարսաղեցիկ լուրերի ազաւորութեան տակ նա հիւանդանում է: Ապրիլեան նահատակների յիշատակին նա նուիրում է իր «Հողեհանգիտ», «Դժոխքի հանդէպ» եւ «Հայրենիքի հետ»: Բայց դեռ 1916-ին նա իր հաստաւը չէր կորցրել ու հայկական

դատի լուծման եւ ոչ էլ Տաճկահայաստանի ազատութեան հանդէպ:

Ահա թէ ինչ է գրում նա «Հայրենիքի» հետ՝ բանաստեղծութեան մէջ. —

«Ու պիտի գայ համուր կեանքի արշալոյսը վառ հագած,

Հագար, հագար լուսապայծառ հագինքով նառագած,

Ու երկնադառ քաղաքումքին Արարատի սուրբ լանջին,

Կենսաժպիտ իր շողերը պիտի ժրպտան առաջին

Ու պոէտներ, որ չեն պղծել, իրենց շրթներն անէծքով,

Պիտի գովեն քո մոր կեանքը, մոր երգերով, մոր խօսքով,

Իմ մո՛ր հայրենիք, հօր հայրենիք»:

Այս նոյն բանաստեղծութեան օկիզբը Ապրիլեան Եղեռնը սգացող թումանեանը նաեւ գրել է «Ողբի՛ հայրենիք, որբի՛ հայրենիք»: Արդ, ճարպիկ գրչնանդաւանդ, Յովհ. Ղաղարեանը, Մովսէսայ Գրականութեան Պատմութեան «Ողբի՛ հայրենիք» առդի պատճառով, հարկ է տեսել շարափոխելու բանաստեղծութեան իմաստը եւ ժամանակագրութիւնը. նա գրում է.

«1917-1920 թթ. Հայաստանը գրու-մբում էր տնտեսական եւ քաղաքական չափազանց ծանր կացութեամ մէջ: Դաշնակցական հակայեղափոխական պոքսիան իր կարծանարար եւ աւանտիւրիստական քաղաքականութեամբ երկիրը և ժողովուրդը կանգնեցնում է կարծամամ եզրին: Հայաստանում մուխմուխ են տնտարն ու արվը, ազգամիջեան ընդհարումներն ու կատարածը: Մոխրակոյտերի են վերածուում հայկական գիւղերն ու ավանները երբ ու սրի մատնում աշխատատեղակալ անգէն մատաները: «Ողբի՛ հայրենիք, որբի՛ հայրենիք» — այսպէս է բնութագրում ժամանակաշրջանը ազգային մեծ բանաստեղծ Յովհաննէս թումանեանը:

Վ. Հ.

(\*) Վ. Անարոնեան, «Յովհաննէս թումանեան, Մարդը եւ Բանաստեղծը (1936, Բուտան)» էջ 36:

(7) Ն. թումանեան, «Յովհաննէս թումանեան, էջ 132:



### ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ՄԸ ՈՐ...

### ԳՐԱԽՕՍԱԿԱՆԻ ԿԸ ԿԱՐՑՈՒ

Միլլիա Կապուտիկեան բանաստեղծութեանց գրքով մը յանձնած է Հայ-պետհատին, որ հրատարակութեան տրուած է զայն 1961-ին: «Մտորումներ ճանապարհի կէսին» վերնագրուած 115 էջերէ բաղկացած այս փոքրածաւալ գրքով իր կարունակէ 56 բանաստեղծութիւններ, բաժնուած երեք մասերու՝ «Ատում են լինելը», «Ժամա է արդէն իրիկնացել սիրելիս» եւ «Մտորումներ ճանապարհի կէսին» երկարաշունչ քերթուածը:

Գ. Ս. 136 տող յատկացուցած էր բանաստեղծութեանց այս գրքովին, որոնց 16-ը մէջբերում էին Ս. Կապուտիկեանէն, 16-ն ալ պարզաբանում ըստուածի մը: Մնացեալ 104 տողերուն մէջ Գ. Ս. պարզ ու հասկնալի ձեւով մը տրուած էր իր կարծիքը եւ կը գտնէր, թէ Ս. Կապուտիկեան «հայկականը փառաբանելու» նոր տենդ մը կը յայտնարերէ, թէ ատիկա է իր ճիշդ արժէչափը, թէ Կապուտիկեան երկու նիւթի շուրջ միայն կրնայ գրել՝ հայրենիք եւ սէր, եւ որ այլ նիւթերու մասին գրելը վատնում մըն է միայն, թէ այս հաստորով, Ս. Կապուտիկեան զեղչ մը կատարած է այդ վատնումներուն, մտնումներուն եւ սուրբ քեր վճարելու բաժնին մէջ, թէ այս գրքի մէկ մասով, հեղինակը կը բերէ փշատակին յազումը եւ կառուցման երգը, հայուն գաղտնիքն ու հպարտութիւնը. թէ կարգ մը բանաստեղծութիւններով երեւան կուզայ որպէս աւելի հասուն, աւելի բանաստեղծ. թէ ունի նաեւ շատ մը տկար, ինչպէս նաեւ ուրիշներու

գործը յիշեցնող բանաստեղծութիւններ, թէ Ս. Կապուտիկեան օժտուած բանաստեղծուհի մըն է, եւ այլեւս ժամանակն է, որ տայ մեզի զանտուներ՝ գործ մը, եւ դառնայ ամբողջական գործի մը հեղինակը:

Այս պարզ ու յստակ գրախօսականին հետ, մեր ձեռքը հասաւ Սովետական Հայաստան արտատոհմանի համար հրատարակուող ամսաթիւրի 1961-ի թիւ 12-ը, ուր գրադէտ Գուրգէն Մահարի գրախօսական մը գրած է նոյն գրքովի մասին:

Գուրգէն Մահարի դառնութիւն ճաշակած, Սիպերիան տեսած ու ետ վերադարձած գրադէտ մըն է, Չարենցին ժամանակակից. իր կարծիքը արժէք մը ունի. ուշադրութեամբ կարգացիք իր գրախօսականը: Ստիպուած ենք շեշտել, թէ երեք անգամ, չորս անգամ կարդալու ստիպուեցանք, կարենալ գուշակելու համար թէ Մահարի ի՞նչ ըսել կ'ուզէ. որովհետեւ, սովետական վարչաձեւին «գուրգուրանք» վայելած հեղինակները չեն կրնար պարզօրէն ըսել իրենց ըսելիքը, յստակութեամբ արտայայտուիլ:

Որպէս մեղադրանք չէ որ կ'ըսենք, այլ որպէս հաստատում — բերանը այրած ժարդը մածունն անգամ փշելով կ'ուսէ. սթալինեան Հայածանքները ճաշակած հայ գրադէտը չի կրնար ազատօրէն արտայայտուիլ. գիտէ ան՝ թէ այսօրուայ համեմատական ազատութիւնն ալ վերէն տրուած չսորճ մըն է, եւ ջըսանը չորս ժամուայ մէջ կրնայ ետ առնուիլ, եւ ինք կրնայ մեղադրուիլ նոյն

այդ վերինին կողմէ, վերին տրուած ազատութիւնները «սխալ» հասկցած ըլլալու, «չարաչար» դործածած ըլլալու յանցանքով:

Ազատութեանց ջնջումը՝ սովետական վարչակարգին տակ ապրող գրագէտին ուղեղը վերածած է լաբիւրինթոսի մը, ուր հակասական մղումներ, պահանջներ եւ փափաքներ իրար կը խառնուին: Իրտը կը շէջաբացեն, իրտը կը մթաղեն: Եւ երբ դուրս կուզան հեղինակին գրիչին տակ, կը վերածուին տեսակ մը ծածկազիր գրականութեան, զոր հասկնալու համար մեծ ճիշդ պէտք է: Զարկնց իր պատգամը տալու համար ըստիպուեցաւ անդամտիկոսիմ դիմել: այդ ալ չփրկեց զինք, ա զլուծը վրայ տըլաւ: Զարկնց յանձն առած էր գլուխը վրայ տալ: Զարկնց հասած էր տեղ մը, ուր ապրելու համար անհրաժեշտ էր մեռնիլ, ապրող երդ մը գրելու համար՝ անհրաժեշտ էր «չլուսել իր քնարին»: Զարկնց չղաւեց իր քնարին, մեռաւ, ու ահա կ'ապրի, դարձած է անմահ:

Ուրիշներ: Ի՞նչ կ'ընէին ուրիշներ: Տանք խօսքը նոյն ինքն Ս. Կապուտիկեանին: Նոյն «Մտորումներ ճանապարհի կէտին» գրքի մէջ հրատարակած Գարնանամուտ կտորին մէջ, ան կ'ըսէ՝

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Հայուել է ձիւնը, կարել է ձիւնը, Հողը դարձել է ցեխակալու, Կորցրել ենք մերնակ իր մաքրութիւնը Ու դեռ չի հուզիլ կանաչէ գոքգ: Բնութիւնն ասես փետրափոխել է, Ամէն ինչ այնպէս լերկ է ու գորշ: Ճիպտաների պէս մերկ են ծառերը, Գոյները՝ անդէմ ու անորոշ... Եղեմին է, որ կանաչ է, վառ է, Ուրախ երանգ է փռում չորս կողմ, Միմչել կը ծաղկի ետքից անտառը, Կանաչ կը զատնայ աշխարհ ու հող... Միայն եղեմին... ու չի տառն նա, Թէ ինք ինչն էր տարել լուին:

Շուրջը աշուն էր, մտն ու միւս էր, Շաշում էր հողմը, ելնում մրրիկ: Թեփում, նկում էր անբողջ անտառը, Թափում տերեւը, քոչնում կանաչ: Թէ իմանայիք ինչքան դժուար էր Այս ամէնի մէջ մնալ կանաչ...

Հիմա որ երեւութապէս «տեղած է ձմեռը ու միւսն է», Հայ գրագէտը կը շարունակէ ըլլալ ծայր աստիճան գզոյշ եւ խոհեմ, գիտնալով թէ զարնան կըրնայ յաջողուիլ ձմեռը, կրկին: Ահա թէ ինչու՞ Գ. Մահարիի գրախօսականն անգամ կը կարօտի բազմաթիւ ընթերցանութեանց ու թարգմանութեանց, որպէսզի մենք կարենանք ըմբռնել հեղինակին կարծիքը Ս. Կապուտիկեանի եւ իր գործի մասին:

Մահարիի գրախօսականը 466 տող է, որուն 166-ը մէջբերում է Ս. Կապուտիկեանէն, 130-ը՝ Մահարիի գրքով արձակի վերածուած մէջբերում, մնացեալ 170 տողերը իրենց մէջ թաքնուած կը պահեն Մահարիի կարծիքը բանաստեղծութեան մասին, Սիլվա Կապուտիկեանի մասին, անոր «Մտորումներ ճանապարհի կէտին» հատորի մասին:

Մահարի կը մատնանչէ նախ, թէ Ս. Կապուտիկեան «նոր այս գրքում, բազում թերութիւններէր եւ դերութիւններէր ազատուել է, դարձել է տեւիլ հասուն եւ յստակ»: Թէ որո՞նք էին իր «թերութիւնները» եւ ի՞նչ բաներու «զերի» է հղած Կապուտիկեան անցեալին մէջ, այս մասին ուղղակի ըսուած ոչ մէկ տող: Քիչ մը վարք սակայն, Մահարի մէջբերում մը կ'ընէ Կապուտիկեանի գեո ՉՈՐՍ տարի առաջ գրածներէն (այսինքն 1957-ին):

...Որ հով լինի, հով լինի,  
Նրանց համար գով լինի,  
Տրակտորը ծով լինի,  
Աշխարհի սրտով լինի...

ու տակը կ'աւելցնէ՝ «Թող լինի, բայց մէթէ՞ սա ստեղծագործութիւն է»: Ու

քիչ անդին կը հաստատէ, թէ «...Այս գծով չէ, որ նա դարձել է սիրուած եւ յայտնի, ոչ միայն Միութեան սահմաններէն ներս (ըսել կ'ուզէ Մովսէսական Միութեան) այլ եւ սահմաններից անդին. այս դրքում (այսինքն «Մըտորումներ ճանապարհի կէսին»), նա փութանցիկ եւ խիստ նեղ ապրումները չի առնում թէկուզ ճարտար յանդերի տակ եւ անխարկադրութեան համար հասած խմորից ոտանաւորներ չի թխում չէ՛, հրաժարուել է բանաստեղծուհին իր հոգեկան անամերձ հողամասի վրայ օրօր-չորորալուց»:

Այս անուղղակի ձեւով միայն կըրցած է Մահարի իր կարծիքը արտայայտել բանաստեղծութեանց ընդհանուր ստուգած արժէքի մասին, եւ կապուտիկեանի դեռ երէկ, «տնամերձ հողամասի վրայ օրօր-չորորալուց» մասին:

Վերի տողերուն մէջ, ուժեղ, շեշտուած կարծիքներ կան թէ՛ կապուտիկեանի մասին, թէ՛ դրականութեան մասին՝ «փութանցիկ ապրումներ...», «ակնարկազրութիւն...», «ոտանաւորներ թխել...», որոնք կրնան «սխալ» մեկնաբանութեան ենթարկուել (այսինքն ուղիղ մեկնաբանութեան) եւ Մահարիի գիրքը վտանգել. որով, իսկոյն, առանց սող մը իսկ անցնելու, Մահարի կը ճշտէ, թէ «այս դրքում նոյնպէս բանաստեղծուհին գրում է կրկեր լաւ օրերի, ժողովուրդների եղբայրութեան մասին. բանաստեղծուհին չի նեղացրել իր թեմատիկ պլանը, ո՛չ, բայց այս ամէնը արուած է ներշնչմամբ, խորութեամբ, արուեստով...»: Այսինքն, կապուտիկեան չէ շեղած Պարտիայի ուղղութիւնէն, նեղ ազդեանականութեան դիրկը չէ ինկած, ոչ ալ Մահարին է որ նեղ ազդեանականութիւնը կը գտնէ. այլ միայն, չորս տարի առաջ անարուեստ ձեւով իր գովերգածը, այսօր արուեստով կը գովերգէ:

Այդպէ՛ս է սակայն՝ Ոչ. տարբեր կը ներկայանայ մեզի կապուտիկեան, նոյն

ինքն Մահարիի իսկ մտանունը մէջը բուն մտանունն մէջը եւ բացատրութիւններուն որպէս հետեւանք. այսպէս, վերի տողերը դրելէ ետք, Մահարի կը մէջբերէ Մ. կապուտիկեանի «Ծրք մեր քարերի մասին» կտորը, ուր հեղինակը խօսք չունի «ժողովուրդների եղբայրութեան մասին» եւ եթէ զլաւ օրերի մասին» կը գրէ, յամենայն դէպս հայ ժողովուրդի լաւ օրերու մասին չէ, եւ խաւարի ամբողջական փայտումի մասին է՝

Հաւատում եմ հոգեով բախտին  
 մազվուրդիս,  
 նրա աստղը պիտի պայծառ փայլի  
 այնպէս,  
 Այնքան խորունկ պիտի ճրա  
 խիստ յարգի,  
 Որ դուք ի սպառ ելնէք արեւերես:  
 Որ դուք՝ մեր քարակոփ հայերէնով  
 ամմեռ,  
 Լրիւ մայնով հասունէք յաւերժ մեր  
 կեանքի-  
 Օ, ծիրանի քարեր, օ, վարդագոյն  
 քարեր,  
 Եսամանի քարեր, մեծաղիլի...

Այս բանաստեղծութիւնէն երեք չորս հատուած մէջբերելով, քննադատ Մահարի կը ճշտի ցոյց տալ, թէ «խորքում ենթաստեղծ կայ թաղուած... որ մենք գործ ունենք ոչ թէ անցեալը սղբացող եղբրամօր, այլ նորը հաստատող խօսնակի հետ»:

Համայնավար վարչաձեւին համար ընդունելի չէ դրադէտին՝ ցաւով կամ կարօտով յիշել անցեալը, դարբըրը նոյնիսկ ժողովուրդիկ կեանքէն, քանի որ ասիկա կրնայ արտայայտութիւնը ըլլալ տեսակ մը զգոհութեան՝ ներկայէն, քանի որ ասիկա կրնայ «սենտիմենտալ ազդեանականութիւն» ըլլալ:

Արտօնուած է անցեալը յիշել միմիայն որպէս խաւար, վատ օրերու շարան, որոնք վերջ գտած են «Հոկտեմբերեան ռեւոլուցիայով», որոնց յաջորդած են «Ներկայի պայծառ օրերը»:

Չեն մոռնար անշուշտ գրականութեան ուղղութիւնն ու հրահանգը զրկող զեկամարները, թէ երէկ ալ երէկուայ ներկան կը յայտարարէին պայծաութիւն, իսկ այսօր կը ներկայացնեն իրենց իսկ երէկը որպէս զանհատի պաշտամունքը», «Սթալինեան բռնակալութեան» տրուր ու խաւար օրեր: Սակայն կը հաւատան, թէ կրկնելով, կրկնել տալով, կրնան հաւատացնել միամիտ ամբողջութուն, թէ իրենք միշտ «կառուցելու վերայ են լաւը»:

Ասոր համար է որ Մահարի ճիգ կը թափէ ներկայացնելու Ս. Կապուտիկեանի գրականութեան յաջող կտորները, որպէս «Պարտիայի» ուղղութեան հետ հաշտ ընթացող կտորներ: Եւ որովհետեւ կը գիտակցի ինք նոյն ատեն, թէ այդ կտորներուն իրական արժէքը կու դայ անոնց ազգային երազէն, ազգային յուզումներէն, անցեալի կարօտէն, ապագայի փնտռութէն, կ'իջնայ դարձաբձիկ նախադասութիւններու բաւիղներուն մէջ, եւ կամովին է որ կը դառնայ մըթին՝ իր գրախօսականին մէջ:

Չենք ուզեր շարունակել: Այսպէս իբր կը յաջորդեն գրախօսականին մէջ, մէջբերումներ, ապա անոնց իրական արժէքը ծածկելու, եւ լենինեանին կապելու փորձեր, ապա կրկին յիշեցումներ ընելով, թէ Սիլվա Կապուտիկեան իր արժէքը կը պարտի «նօք իմ որդուն» և նման բանաստեղծութեանց:

Կուտայ հատուածներ «Մտորումներ ճանապարհի կէտին» երկարաշունչ բանաստեղծութիւնէն, որ հայ ժողովուրդի եւ բանաստեղծուհիին իբր պտնելուն կը վերաբերին, սակայն առանց մեկնարանութեան, չեւտելով միայն, վերջաւոր-

ութեան, թէ Ս. Կապուտիկեանի ուղին ալ ինչպէս բոլոր իսկական արուեստագէտների ուղին, եղել է լիցուն ստեղծագործական տառապանքով»:

Մենք կը դռնք այդ տառապանքը նաև գրախօսողին մէջ, երբ իր գրախօսականը վերածուած կը դտնենք «ակնարկազրութեան», ուր հազար ու մէկ դժուարին ձեւեր կը փնտռէ, կը գտնէ, կարենալ ճշմարտութիւն մը հասկնալի դարձնելու համար, առանց երկրորդ անգամ Սիպերիոյ ճամբան բռնելու վտանգը իր վրայ հրաւիրելու: Կ'ըմտնենք որ այդ վտանգը հեռացնելու համար նաև մերժէ մեր այս ըսածները, նոյնիսկ հայհոյէ մեզի:

Այդ բոլորը արգելք չեն կրնար ըլլալ մեզի, ընդգծելու համար մեր խոր ցաւը ի տես հայ գրագիտուհիին, գրագէտին ու գրախօսողին պարտադրուած կաշկանդումներուն, շնորհուած կիսամիջոցներուն, մասնակի եւ ժամանակաւոր ազատութիւններուն, որոնք անկարելի կը դարձնեն արուեստագէտի հոգիին ազատ թռիչքը, քննադատին ազատ ու պայծառ խօսքը:

Հայաստանի մէջ իսկ ապրող գրական քննադատը ի վիճակի չէ պայծառութիւն ըսելու իր խօսքը, ներկայացնելու իր շփանիչներն ու պահանջները, եւ սփիւռքի գրախօսողին վիճակուած է այդ պայծառ խօսքը ըսել, եւ երբեմն ալ ըստիպուիլ գրախօսականին գրախօսականը գրել, հասկնալի դարձնելու համար կաշկանդուած հայ գրագէտին ըսածը...: Ողբերգութիւնը քանի՞ տեսակ կ'ըլլայ:

Մ. Զ.



### Ս Ի Ր Ո Յ Յ Ա Ն Յ Ի Ն Մ Է Ջ

ՔԱՏԵՐԱՍԱՂ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ՄՆԷՔՈՆԵԱՆ

1962, 90 էջ 24 17 սմ.

Սփռուքի ժամանակակից կեանքն առնուած է նիւթը այս թատերախաղին, ինչպէս հեղինակն իսկ կը մատնանշէ գրքի առաջին էջին վրայ: Արդիական կոչուող ձգտումներով Հայ ազնիկ մը, Շաքէ, որ է՛ր կեանքը կ'ուզէ ապրել, է՛ր ժամանակին մէջ, է՛ր պատասխանատուութեամբ...: Կ'աշխատի, նիւթապէս ալ կը Հասնի ասն ծախքերուն, ունի է՛ր բարեկամները, գիշերները ուչ սոււն դասնալները, պտոյտներն ու Փլիրդները: Իր կողքին կան, հայկական բարքերու, բարոյականի եւ ասանդութեանց սէրն ու յարգանքը ունեցող ուսուցչուհի քոյր մը ու մայրը, իրենց խրատներով, գիտողութիւններով ու պահանջներով: Կայ կէս մը օտարացած Հայ երիտասարդը, բոլորովին արդիական մղումներով ու բարբառով՝ Տիգրան, որ սակայն կը սիրահարի Շաքէի քոյր, ուսուցչուհի, Հայ ուսուցչուհի, Հայոց վարժարանի՝ մէջ ուսուցչուհի քոյր՝ Սօսիին: Շաքէի համար անսպասելի այս սէրը, տեսանելի ու ցանկալի է՝ մօրը, տիկ. Արուսեակին համար: Տեսանելի է նաև Սօսիին համար: Սօսի կը մերժէ սակայն, զգալով, որ քոյրը երևութապէս ինքզինքը մակերեսային ապրումներու տէր ցոյց տալով հանդերձ, լըջօրէն սիրահարած է Տիգրանին:

Նիւթը կրնայ ըլլալ թատերական ուժեղ ապրումներու եւ բարումներու

նիւթ. այդ տպաւորութիւնն ալ կը կըրենք թատերախաղի առաջին 6-7 էջերուն ընթերցանութեամբ ու կը սպասենք որ կեանքով ինչ, խորացուած ապրումներով հարուստ թատերախաղ մը կարգանք: Աւա՛ղ սակայն, սպասումը չի վարձատրուիր. Ցրդ էջն անդին, թատերախաղը կը վերածուի ճառախօսութեանց, բարոյագիտական դաստան-պութեան մը, եւ կամ քերու անբնական գասաւորումով մը կը Հասնի կեանքէ գաստարկուած վիճակի մը:

Կայ նաև գրքին մէջ «կոր»ի դործածութեան դարձանալի առատութիւն մը: Կ'ենթագրենք թէ հեղինակը գիտակցաբար դործածած է այդ «կոր»երը, թեթև բնական իօսակցութեան մը տպաւորութիւնը տալու համար, սակայն դժբախտաբար «կոր»ը, այնքան բնական ունկնդրութեան ժամանակ, կը դառնայ անհամաչափութիւն բերող տարր մը՝ ընթերցանութեան պարագային:

Հեղինակին չեն պակսիր ոչ բաւ լեզուն, ոչ ալ ներքին ապրումը: Թատերական թեքնիքի պակաս մը նշմարելի է գրքին մէջ, ինչ որ դործը կը վերածէ, թատերական կամ բնական տեսանկիւնէն, արուեստական կառոյցով գրութեան մը, ուր ապրումը զարգացում եւ հասունացում չունի:

Բ. Փ.

**ԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀ**

**ԳՈՂԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ**

Առաջին անգամն էր, որ կու դար Պէյրութ, պէյրութականութեան այցի: Ու Մայիս 17-ին, հազարաւոր սրտեր, քաղցր տրոփումով, սպասեցին իր սգանաւի էջերն, հազարաւոր ձեռքեր կարօտահար ծափողջոյններով դիմաւորեցին զինք: Ոչ անոր համար անշուշտ, որ երջանիկ պատեհութիւնը պիտի ունենային լսելու իր բացառիկ ձայնը: Երգապետկները հասած էին, կը հասնէին տարիներէ ի վեր: Համբաւը կանխած էր իր պալուատը: Բայց տարազիր հայութիւնը կրկնակ յոյս մը կապած էր քանքարաւոր արուեստագիտուհիի ժամանումին, — վայելիլ երաժշտական բացառիկ պահերու քաղցրութիւնը եւ կազդուրուիլ հոգեպէս հայրենաբոյր շունչին կենսատու նեկտարով: Եւ Գոհար Գասպարեանն էր, անցաւ ակնկալութեան բոլոր սահմանները:

Սովետական Հայաստանի օփերային մենակատարուհին, Քափիթոլի թէ Յովակիմեան—Մանուկեան սրահներու բեմէն գործադրած իր յայտագրով ոչ միայն հմայեց ամէնէն կիրթ ականջները, գոհացուց ամէնէն խստապահանջ ճաշակները, այլեւ վկայեց որ իր արիւնը կը տրոփէր հայութեան բազկերակին կըշտոյթովը: Անշահ պիտի ըլլար կրկնել Եւրոպայէն մինչեւ Մայրաքոյն Արեւելքի ոստաններուն մէջ զնահատուած ջութութութեայի ձայնին հմայքները: Ինչ իրերանգութիւն ամէնէն ցած ու ամէնէն բարձր խաղերու այնքան ճշգրիտ ու հեղատահ արտաբերումներուն մէջ: Ինչ անսայթաք ոտոտումով շորս, հինգ ձայնի ելեւէջներուն վրայ: Թեքնիք մը, որ հասած է իր բարձրագոյն առափնանին, եւ երգելու դիրութիւն մը, որ յատուկ է նիւթն ու երգելու ոճը հարազատորէն ներդաշնակելու ատակ առաջնակարգ երգիչներուն միայն:



Բայց «Հայաստանի Սոխակ»ին բացառիկ արժէքը կը կայանայ այն իրօնութեան մէջ, որ միջուկային արուեստագիտուհի մը դառնալուն առնթիւ՝ կը մնայ խորապէս հայ իր ոգիով: Ոչ միայն կ'երգէ օտար երգերը հարազատ մեկնաբանը դառնալով անոնց, հնչելով բառերը մաքուր ու անվթար, այլեւ կը թափանցէ հայերէն երգերու ամենախոր դպացումներու դազանիքին եւ նոր փայլ մը կու տայ անոնց արտայայտչականութեան:

«Մայր Արաքսին», երգարաններու մէջ զալկացած այդ հնարոյր երգը՝ վերածաղկեցաւ Գոհար Գասպարեանի շրթներուն վրայ, կարծեաւ այսօր յոր-

նուած քլար և այսօրուան մեր զգացումներուն արձագանգը Հանդիսանար: Վիլիլիան», «Միծեռնակ»ը, «Վոունկ»ը, «Երեւան»ը այնքան Հարազատ թարգմանները Հանդիսացան մերօրեայ արտամներուն, զգացումներուն, նպատակադրումներուն, հաւասարապէս Հայութեան ըստը Հասուածներուն համար:

Բայ աստի՛ այս անդուզական սոփրանոս գիտէ կտարել իւրաքանչիւր բուսի, իւրաքանչիւր խաղի կախարելը և զուրտ Հանել յանդգնութեամբ՝ Հոն պարփակուած իսկական իմաստը: Այսպէս է որ ցայտուն կերպով վեր կը Հանէ երգիւրուն ներքին տրամը, և relief կը ստանան զայն բողկացնող իւրաքանչիւր դիժն ու դոյնը: Երբ կ'երգէ Վարմիր վարդը՝ վարդի շափրակը կը դառնայ իսկական շափրակ, իսկ փուշը՝ սիրտ մղկտացնող ցաւ:

Լրիւ արուեստագիտուհի մըն է

նաև: Դերասանական շնորհը զոր կը ցուցարբէ բեմին վրայ՝ աչք ծակող բնապրօսիկութիւն մը չէ, այլ երգին Հարազատ ներդաշնակումը, անոր պայծառութիւնը շեշտաւորող բնական ու լրացուցիչ շուքը:

Յայտագիրներուն այնքան յաջող գործադրման մէջ անկասկած իր բաժինը ունեցաւ դաշնակահարուհին՝ Էլէնոնորա Ոսկանեանը, ինքն ալ Գոհարին պէտ ներգաղթած մը (Թարգովէն), որ Հինգ տարիէ ի վեր կ'ընկերանայ անոր, ցոյց տալով ըմբռնողութիւն և բերելով ներդաշնակ նուազ:

Միծեռնակի թեւերով եկու ու անցաւ այս երկնակամարէն, թողիլ ձայնին կախարդական արձագանգը ձգելով Հոյիներուն մէջ, որոնք անգամ մը եւս Հոյարտացան իրենց Հայութեամբ, անգամ մը եւս ամուր կապով մը կապուեցան Հայ երգին և Հայութեան:

« ԿՈՄԻՏԱՍ ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌԵԱԿ »

Մերձաւոր Արեւելքի մեր երաժշտական կեանքին մէջ առանձին տեղ ու արժէք ունի Վոմիասայի անուան լարային քառեակը, որուն կազմակերպումը և ղեկավարումը կը պարտինք ջութակի ծանօթ դասատու և երաժշտագէտ Օնիկ Միւրմէլիանին:

Երբ Հիմնուեցաւ 1950-ին՝ եռեակ

մըն էր (Յրիօ): Քառեակի վերածուեցաւ 1955-ին: Եւ այդ թուականէն սկսեալ, այս քառեակը, բազմաթիւ նուազահանդէսներ տուած է Ամերիկեան և Յրանսական Համալսարաններու Հանդիսարաններուն մէջ՝ Հոս, Պէյրութ, իսկ անցեալ ամառ մեկնած է Սան-Փաուլօ և Պուէնոս-Այրէս, ու այդ



քաղաքներու բեմերէն ալ ներկայացած՝ երաժշտասէր հասարակութեան:

Վոմիտոս Լարային Գառեակը կազմելով՝ Օննիկ Սիրմէլեան նպատակադրած է հայ երաժշտութիւնը ծանօթացնել օտարներուն եւ հայերուն: Եւ անհրաժեշտ պարտականութիւն մը կատարողի գիտակցութեամբ, բացի իր անանձին կոյճիներէն, քառեակը ընդառաջած է հրաւիրներու եւ իր մասնակցութիւնը բերած զանազան հանդէսներու եւ տօնակատարութեանց՝ հայկական խօսիչու քաղցրահունչ թրթուածներով հայրենի մթնոլորտի սանդղման մասնաւոր գոյն մը տալով:

Այս տարի, առաջին անգամն ըլլալով, եւ շրջապիտակ ընդլայնած, քառեակը Երաժշտական ունկնդրութեան երեկոյ մը կազմակերպեց Ամերիկեան Համալսարանի Ուէսթ Հոլին մէջ, յայտադէրը ամբողջութեամբ նուիրած հայ դասական ու ժողովրդական երաժշտութեան, եւ մասնակից ունենալով վիրթիոզ դաշնակահարուհի Ոսկի Յովհաննէսեանը, եւ սիրուած ու շնորհալի երգչուհի Արփինէ Փեհլիվանեանը:

Առաւելորար նուազուեցան Կոմիտասի երգերը, որոնց քառեակի համար մշակումը կատարուած է Սովետական Հայաստանի մէջ: Ա. Փեհլիվանեանի երգածներէն Ա. Յարութիւնեանի «Երգիր ինձ համարձի եւ Ա. Պաշտաւորեանի «Ոննճոյքի երգձի մշակումը քառեակի համար կը պատկանէր երիտասարդ երաժշտագէտ եւ յորինող Պօղոս Ճէլալեանի:

Քառեակը, իր ընդհանուր դիժներուն մէջ, ներդաշնակ էր եւ ցոյց առաւ ըմբռնողութիւն եւ հայ երաժշտութեան նրբազգացութիւնը արտաբերելու թեքնիք: Կատարումներուն լուազոյնները հանդիսացան Կոմիտասի «Ձիւնար ետը», «Էլմիածնի պար»ը, «Գարունան» եւ «Կաքաւէկ»ը:

Հետաքրքրութիւն ստեղծեց Ջրբաշեանի լարային քառեակի համար յօրինած Գեմքէթը (Ա. մաս), որուն կատարման իր մասնակցութիւնը բերաւ դաշնակով՝ Ոսկի Յովհաննէսեան:

Ոսկի Յովհաննէսեան, Արփինէ Փեհլիվանեան եւ Պօղոս Ճէլալեան՝ երիտասարդ ու կարող ուժեր են, որոնց մասին առիթ կ'ունենանք առանձին անդրադառնալու: Անցողակի նշնք միայն, որ Ոսկի Յովհաննէսեան բացառիկ փայլով եւ ոգիի հարազատութեամբ նուազեց Ա. Պաշտաւորեանի քոնքաքսն, որ կը համարուի իր սեռին մէջ աշխարհի դժուարագոյն կտորներէն մին:

Ունկնդիր հասարակութիւնը զոհ մնաց երաժշտական այս երեկոյթէն, ապրելով պահ մը իր հայրենի աշխարհին մէջ:

Յաջորդներուն՝ մաղթելի է որ քառեակը աւելի եւս ծանօթացնէ զործերը Սովետական Հայաստանի այն երաժշտագէտներուն, որոնք անուրանալի արժէքներ ըլլալով հանդերձ՝ համբաւով կը մնան տեղափակ, մինչդեռ հոգիները կրնան տանիլ երաժշտական ամէնէն բարձր վայելքի մթնոլորտին:

### Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ի ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԳԷՍ-ՄՐՅՈՒՄԸ

«Համազգային» Մշակութային Միութեան Պէյրութի մասնաճիւղը, զանազան ձեռնարկներու կտրիկն, չորս տարիէ ի վեր, կը կազմակերպէ նաեւ արուեստի ցուցահանդէսներ, որոնցմէ վերջինը, այս տարուանը, ամբողջովին յատկացուած էր լուսանկարչական արուեստին:

Ինչպէս միշտ՝ այս անգամ ալ ցուցահանդէսը բացուեցաւ Փայլանճեան ձեռնարանի նոր շէնքի սրահին մէջ, արուեստի վայելք մը ընծայելով բազմազար այցելուներուն:

Ճուշահանդէսը կազմակերպուած էր՝ կեանքն ու աշխարհը նկարահան մե-





քննային աչքով դիտող եւ դատող արուեստի սիրահարները՝ ամաթօտները քաղաքներու եւ գնահատելու նպատակադրումով: Այսուհանդերձ, ցուցահանդէսին զոնները բաց պահուած էին նաև ասպարէզով արուեստազէտ-լուսանկարիչներուն առջև, մասնաւոր փայլ մը տալու համար ձեռնարկին:

Նիւթի (սիւժէ) պարտազանք չկար: Երկու կարգէն ալ մասնակցողներուն թիւը գտաւ ջսանը, եւ իւրաքանչիւրը ցուցադրեց երկուքէն աւելի գործեր, զանազան չափերու վրայ, սեւ ու ճերմակի կողքին նաև գունաւորներ: Վերջին տեսակները նկատի պիտի չառնուէին մրցանակին համար:

Գնահատումի աշխատանքը վստահուած էր երիտասարդ արուեստազէտ-արուեստագիտուհիներու խումբի մը (Օր. Էլթ Տէր Մելքոնեան՝ զարգարուեստ, պր. պր. Կէօվէրչիեան նկարիչ, Ջ. Խըտըչեան՝ քանդակագործ, Ջաւէն Տէր Պապեան) որ Ժիւրիի իր հանգամանքով եւ խղճամիտ խորհրդակցութենէ մը յետոյ՝ հետեւեալ ձեւով բանաձեւեց ցուցահանդէսին տարողութիւնը եւ մասնակցողներուն արժէտրումը:

Քաղաքիս կարգ մը յայտնի արուեստազէտ-լուսանկարիչներն ալ եթէ բերէին իրենց մասնակցութիւնը՝ անշուշտ որ աւելի փայլ ու հմայք կը ստանար ցուցահանդէսը: Կը յուսանք, այլ առիթով, անոնք ալ կը դիւրացնեն կազմակերպողներուն աշխատանքը եւ քաղաքի կը հանդիսանան ձեռնարկին:

Ասպարէզով լուսանկարիչներէն (Փրոֆէսորներ) մասնակցեցան՝

Փօթօ Ազատ, որ վերջերս սուած իր յաջող ցուցահանդէսներով յայտնութիւն մը եղաւ: Նկարելու ոճը ինքնուրոյն է: Սև-ճերմակ լուսանկարներուն մէջ կայ նիւթերու այլազանութիւն, յորինումի (ֆոնիտաճիւն) եւ համադրումի մտեցում, եւ նիւթը դասաւորելու մասնաւոր, յատուկ ճաշակ: Գունաւորները, որոնք նախընտրուած չեն ինքի կողմէն, կարելի է ըսել որ թիւլիւթիք: Փօթօ կրաֆիլ նոր արուեստի ճիւղին կը հետեւին եւ այդ նկատումով դասաւորուած են: Նկատելի է մասնաւոր խնամք՝ զորնի, դիժի եւ դաշնաւորումի:

Իր լուսանկարներէն մէկը, որ Ժիւրիին ուշադրութիւնը գրաւեց՝ վերացական (ապսքրիւ) գործ մըն է, լուսանկարով արտայայտուած, եւ նորութիւն մը:

Վարուժան Սէթեան. Առաջին տըպաւորութեամբ՝ անկեղծ եւ ինքնուրոյն գիպապաշտ մըն է (լուսանկարիչ), որ տըլուած է նիւթը ընտրութեամբ: Վարուժան լուսանկարած է կեանքը, փողոցը, յաճախ թշուառութիւնը, այս քիչ մը տը-



խուր պատկերներուն հակադրելով ըլ-  
 նութենէն առնուած արտասովոր դոյնե-  
 րով եւ բխբեղացած գիծերով ծաղիկներ  
 եւ ենթանիւթեր (մաքիւր)։ Իր մէջ նըշ-  
 տարելի են քեֆնիֆի եւ նիւքի փնաըն-  
 ասուքներ, որոնք լուսագոյնս ի յայտ կու  
 գան խոռոչաւոր քարերու լուսանկարնե-  
 րուն մէջ, որոնց նիւթը թէեւ պարզ է,  
 բայց խոր ու զորաւոր տպաւորութիւն  
 կը թողուն։

**Փօքօ Օսֆար**․․․ Լուսանկարները ընդ-  
 Հանրապէս կը ներկայացնեն տեսարան-  
 ներ, որոնց մէջ զգալի է լափազանցեալ  
 վիզուալիտութիւն մը, որ աւելի նկարե-  
 լու մեփն մէջն է քան թէ նիւթին։ Ունի  
 տոնանին թեքիթ մը, սակայն իր մօտ  
 կը պոկուի բազմակցման (ֆաւփոգիսիսմ)  
 կարողութիւնը։ Լուսագոյն գործը Պիպ-  
 լոսի գլխակին ներքնամասի տեսարան-  
 ներէն մէկն է։

**Փօքօ Տալիս**․․․ Ունի Հետաքրքրա-  
 կան նկարներ։ Նիւթերը այլազան են։  
 Ատրիաններուն վրայ ինկած կինը կու  
 սայ դերիբարպալա գլորոցի տպաւորու-  
 թիւնը։ Սակայն՝ «Հնդկահաւը» կը Հան-  
 դիսանայ անկասկած լուսագոյն կտորնե-  
 րէն մէկը։

**Փօքօ Սիքի**․․․ Ծարտարգիտութեան  
 լուսանկարիչ՝ զիչ մը կալոժը է, ինչպէս  
 նաեւ քաշուած անկիւններն ու լոյսի խա-  
 ղերը տկար են։

**Էտօ Ան**․․․ Ցուցադրած է դիմանկար-  
 ներ, որոնց ամէնէն տպաւորիչը մօրու-  
 քաւոր ծերունին է։

Իննց **Փօքօի** ներկայացուցած շունե-  
 րու լուսանկարները ցուցահանդէսին փո-  
 փոխութիւն մը բերին իրենց նիւթին  
 ընտրութեամբ։

**Փօքօ Վարդամ (Ազճեան)**ի դիմանը-  
 կարներէն շէկ երիտասարդուհին՝ ցու-  
 ցահանդէսին ամէնէն աչքատու դիմանը-  
 կարներէն մէկն էր, պարզ եւ եթերա-  
 յին։

Մինի **Փօքօ** մասնագէտ լուսանկա-  
 րիչն է Մանուկներու, անոնց դանազան  
 արտայայտութիւններուն, ինչ որ յաջո-

ղագէտ ներկայացուցած էր ցուցահան-  
 ղէսին։

Սարգիս Գաղայնեանի գունաւոր լու-  
 սանկարները ընդհանրապէս յաջող էին։

Մանուել Քիրէնեան լոյսի եւ մութի  
 զորաւոր Հակադրութեան լուսանկարի-  
 չը։ Լուսագոյն գործը որ մասնաւոր ու-  
 շադրութեան արժանացաւ ցուցահանդէ-  
 սին մէջ՝ իր պատուանան էր անկաս-  
 կած, որուն անձրեւի կաթիլներուն ետե-  
 ւէն կ'ուրուագծուի դիմանկար մը։ Հա-  
 կառակ նիւթին պարզութեան՝ լուսանը-  
 կարին նիւթը, ֆաւփոգիսիսմ, մաքիւր,  
 շատ յաջող են։

Մկրտիչ Քէլիշեանի նկարներէն կը  
 պոկուին լոյս եւ լայնատարրութիւն  
 (ամփոփ)։

**Միրոզ (Ամթէտ)** լուսանկարիչնե-  
 րէն՝

Հայկ Մարրիսեան կը շահի Ա. մրցա-  
 նակը։ Լուսանկարներուն բոլորն ալ յա-  
 ջող են եւ իր մէջ ընդհանրապէս է շար-  
 ժումին սէրը եւ քիբարքը շնորհ։  
 Մեր կնոջ դիմանկարը զոր կ'արժանանայ  
 Ա. մրցանակին՝ շատ ինքնատիւ է։ Յա-  
 ջողած է լուսանկարել ծերութիւնը։

Յովսէփ Մանուշակեան կ'արժանա-  
 նայ Բ. մրցանակին․ իր մօտ դնահասե-  
 լի է ներկայացնելու ինամըը։ Իր ծա-  
 ղիկները (որոնց համար կը պարզեա-  
 տըրուի արդէն), կարծես զարգանկար-  
 շութիւն մը ըլլան, տրուած են այնքան  
 ներութեամբ։

Այս շարքին յիշատակելի են նաեւ  
 տնունները Աւետիս Աւետիքեանի, Տօքթ.  
 Յ. Գազանճեանի, Զաւէն Խըրաշեանի,  
 Զաւէն Տէր Պապեանի եւ Գ. Պուտաղ-  
 եանի, որոնք արժանի են մասնաւոր քա-  
 շախրանքի։

Համազգայինի մեծնարկներուն կար-  
 դին իւրայատուկ տեղն ունին արուեստի  
 տարեկան ցուցահանդէսները, որպէս  
 խթանիչ ուժ նոր արուեստագէտներուն։  
 Կ'արժէ որ շարունակուին իրենց լուրջ  
 ու հանդիսաւոր տարադրով։

նրաք: Իր մասաններուն մէջ ունի մօտաւորապէս հարիւրհակ մը բանտարկեալներ: Անոնցմէ մին, նախկին ծովային սպայ մըն է, մահուան դատապարտուած, վճիռը ապա փոխուած տասը տարուայ բանտարկութեան, ընդժողիայի մը անպիտակցարար հասցուցած վնասին համար: Բանտարկեալներուն մէջ են նաեւ տասնեակ մը ճարտարարուեստի բանուարներ, որոնք դորձէն ուշացած ըլլալու յանցանքը դորձած են: Բանտարկեալներէն մին կը ծրագրէ զանգուածային փախուստ մը, քերեւ նորվեկիա: Գերմանական յարձակման լուրին վրայ, տրամադրութիւնները կը փոխուին, բանտարկեալները պատրաստ են աշխատանքի անցնելու, զէնքերը պարպելու նաւէն, եւ օդնելու իրենց հայրենիքը պաշտպանութեան դորձին:

Յստիօրէն դժուած է նաւապետին, Քափթէն Սիրոնովի դիմագիծը՝ դեռ հաւատացող, բայց արդէն իսկ կասկածներով լի: «Ան չէր ըմբռնած դաշնակցութիւնը նացի Գերմանիոյ հետ, որ կրնար անհրաժեշտ ըլլալ գերագոյն հաշիւներու պատճառով, որը սակայն, ըստ իրեն, վնաս միայն պիտի բերէր: Դեռ կը հաւատար Սթալինի հանճարին, ամոր անմեղութեան, հեռաւորութեան, եւ եր-

կիրը առաջնորդելու կորոզութեան: Կասկած չկայ, որ գործուած փախիւնը - եթէ կարելի է սխալ կռիւ 1937ին պատահածները - գործուած էին, որովհետեւ ճշմարտութիւնը գաղտնի պահուած էր Սթալինէն: Երբ ծանօթանայ ճշմարտութեան, յանցարարները խստօրէն պիտի պատժուին եւ անմեղները պիտի վերադառնան: Սակայն ինչպէ՞ս կրնար շտեմել Սթալին, թէ ինչքան վատ էր դրութիւնը:

«Միրոնով գիտէր, որ եթէ իր մըստէն անցնող մտածումները գիտցուէին, պիտի ձերբակալուէր եւ բանտարկուէր քերեւ իր իսկ զնկալարած նաւում մէջ: Ասիկա պիտի պատահէր հուանարար, եթէ իր վտանգաւոր մտածումները ծանօթ ըլլային, ըսնմք, իր սեփական գաւկին»:

Վիպասան Վ. Քալըրին նորեկ մը չէ: Ստոյակալի առջին շրջանին, աշխատակիցն էր ոչ ուղղափառ Մոսկուայի «Այմանային»: 1957-ին, երբ Խրուշչեւ խորանեց յամառօրէն տարակարծիք մընացող դրագէտները, Պր. Քալըրին լուռ մնաց - կամ լռութեան դատապարտուեցաւ - ասեմ մը: Իր վերերեւումը դրական բեմին վրայ՝ ուշադրաւ դէպք մըն է, երեւոյթ մը:



տարիս կը մնամ ընկերվարութեամ այն ըրբնուսմին, որ ջանացած եմ քանակելի բազմաթիւ յողումծներու մէջ: Ու Հ. Յ. Դաշնակցութեան, որում մէկ գիւնտըրը կը մնամ, գրպանս անդամտետը՝ ըլլայ կամ ոչ:

Հր. Գրիգորեան մինչեւ 1932 թուականը կը բերէ Շուշանեանի խոտորումները, ազգայնամոլ ճղճիմ ու նեխուած իրականութեան անսր յարումը, մինչդեռ ինքը՝ Շուշանեան, 1939-ին, այդ ճազայնամոլ ճղճիմ ու նեխուած իրականութեան՝ մէկ գիւնտըրը կը յայտարարէր ինքզինք, անհուն հաւատարմութեամբ մը:

Ձենք ուզեր ասկէ անդին գրադիլ յողումծագրին անմիտ կարծիքներով: Բայց չենք կրնար շքնդգծել Շուշանեանի հաւատարմութիւնը, Հաւատարմութիւնը իր հողիին, իր էութեան, իր հողիին ու էութեան մաս կաղճող սկզբունքներուն: Իր սկզբունքներուն չկարենալ դաւաճանելու. այս փաստն էր, այս ամբութիւնը, որ արժանաւոր ընծայից իր անձը, կէտն տուաւ ըստերուն, գրականութեան, իր ամբողջութեան: Իր մեծագոյն ուժը այդ կեցուածքէն կ'առնէ, իր առաւելագոյն հմայքը իր այդ անդաւաճան շաղախէն կու գայ: Շուշանեանի հաւատարմութիւնը, Շուշանեանի մեծագոյն առաքինութիւնն է:



## ՎԻՊԱՍԱՆՆԵՐՈՒՆ ՄՐՄՈՒՆՁՆԵՐԸ

### ՍՈՎԵՏ. ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Վից տարիներ անցած են այն օրէն ասդին, երբ Խրուչչե հրատարակ եկաւ «գաղտնի» ամբաստանագրով մը, Սթալինի ղէմ: Անցած են բաւական ամիսներ, Սթալինի մարմինն իննիսի դամբարանէն դուրս հանուելէն ասդին: Սովետ վիպասանը, սակայն, սակաւին չէ կըցած հաւաքել իր քաջութիւնը, ցոյց տալու համար թէ ինչքան ախեղծ էր կեանքը, Սթալինի տիրապետութեան օրով: Գրաւզէտները կը շարունակեն դեռեւս դառնալ հարցին շորս կողմերը, կիսկատար ըստած խօսքերով միայն:

«Նովի Միր» մակագիւր յողումծ մը հրատարակած է, որ կ'ողբկոչէ քաղաքացիական պատերազմի հերոսներէն անոնք, որոնք Սթալինի հրամանով զնդակահարուեցան: Վիպասանները սակայն, աւելի զգոյշ են: Այսպէս, Տիւրէ է որ Շու-

տիտովի վերջին վէպին նկարագրած ժամանակաշրջանը համայնացման շրջանն է, սակայն չի նկարագրեր կոպիտ իրականութիւնը սովին, արեան բաղնիքներուն, զանգուածային աքորներուն, ղէպի Սիպերիտ: Սթալինեան ժամանակաշրջանը նիւթ ըրած ծանօթ հեղինակներէն Պապանքի կը գրէ այնպիսի մեւտով մը, որ կարծես ճշգրտամունքը բընաւ գոյութիւն ունեցած չըլլար: Բոչեղով կը սահի հարցին վրայէն: Ուրիշներ կը նախընտրեն բնաւ չգրել այդ մասին:

Վ. Բալլըրին կը կազմէ ուշագրաւ բացառութիւն մը, «Նովի Միր» վերջին թիւերէն մէկուն մէջ իր հրատարակած երկար պատմուածքով: Պատմուածքը կը սկսի 1941-ի գերմանական յարձակման նախօրեակին: Ձէնքերով բեռնաւոր նաւ մը կը յառաջանայ ղէպի Մուրմա-

Ամերիկայի «Հայրենիք»-ն է լուրը: Երեսնի մէջ բարեփոխած են ուղղագրութիւնը, վերահաստատած են գրեթէ բոլոր ձայնաորներուն նախկին արժէքները:

Հայոց լեզու, որքան կը սիրել ինք: Ոչ մէկ ազդիկ երկրի վրայ կրնայ պարծենալ թէ այդքան խանդաղատանք, այդքան գորով, այդքան ազապատանք ստացած է ինձմէ:

*Այս զանցումին համար, ի հարկէ, մեղադրանք չունինք յօղուածագրին: Յիշատակուած ամէն գրութիւն մէջըրեւիլ օրէնք չէ ու չի կրնար դառնալ: Յետոյ՝ մեր լեզուին Հանդէպ Շուշանեանի սէրը Հաստատելու համար՝ յօղուածագրին կատարած մէջըրումը լիուրի կը բաւէ: Միայն թէ, եղբարբարխտ գրադէտին ժահուան առիթով «Յերանսիայի փաշիստական օկուպացման» տարիները չմոռցող մարդը, չէ՞ր կրնար արդեօք կողմակի ձեռով մը յիշել անոր ստեղծագործ պոթկումին առիթ տուող «Երեսնի մէջ կատարուած բարեփոխումները»:*

*Բայց շարունակենք քաղուածքը.—*

Մինչև 1932 թուականը վազգէմ Շուշանեանը ունեցաւ խոտորումներ, յարեց ազգայնամուլ ճղճիմ ու նեխուած իրականութեանը: Սակայն ազատագրուելով երիտասարդական իր մոլորութիւններէց՝ նա խորապէս բնագատեց ու մերկացրեց Դաշնակցականների արատուար ու կարծամիչ էութիւնը: Նա աստիճանաբար կայրողացաւ հոսանի կոմունիստական ուղու ճշմարտացիութեան գիտակցութեանը:

*Թէ՛ մինչև 1932 թուականը Շուշանեան շարքային դաշնակցական էր, ամէն մարդ գիտէ:*

*Այդ թուականին Դաշնակցութեան գէ՛մ իր տարած պայքարը, ծանօթ է ամէնուն:*

*1932-էն ետք շարքերէն դուրս մնալու իրողութեան անտեղեկ մարդ չկայ:*

*Բայց թէ Շուշանեան ե՞րբ հասաւ «կոմունիստական ուղու ճշմարտացիութեան գիտակցութեանը» առիկա հաւանաբար ծանօթ է Շուշանեանի գրականութեան քիչ ծանօթ այլ երեւակայութեամբ հարուստ անձերուն միայն:*

*«Մինչև 1932 թուականը վազգէմ Շուշանեանը ունեցաւ խոտորումներ, յարեց»... եւայլն:*

*Մինչև 1932 թուականը միայն:*

*Ըստ երեւոյթին Հր. Գրիգորեան «Նայիրի» կը կարգայ:*

*1956-ին ու անկէ ետք, աւելի՛ զօրաւոր պատճառներ ունեցաւ «Նայիրի» կարգալու:*

*Ու կարգաց տնչուշա յիշել թերթին բացառիկը (1956, Յունուար): Ու բացառիկին մէջ զետեղուած Շուշանեանի մէկ օրագրութեան հետեւեալ հատուածը.—՝*

Ռուսն, 1 — Մարտ — 1939

Խորապէս հաւատացած եմ, թէ գրի առնելով այս տողերը՝ հուա-



### ՃՇԳՈՒՄ ՄԸ

*«Սովետական Հայաստան» ամսաթերթի Սեպտեմբերի (1961) Համարին մէջ, Հր. Գրիգորեան, «Սփիւռփայ մշակոյթի գործիչներ» ընդհանուր խորագրի մը տակ, մէկ ու կէս էջոց յօդուածով մը փորձած է ներկայացնել Վազգէն Շուշանեանը:*

Քսան տարի առաջ - կը գրէ յօդուածագիրը - 1941 թուականին, Ֆրանսիայի օկուպացման տարիներին, հեռուոր Փարիզի հիւանդանոցներից մէկում, ամենփց մտազուած ու լքուած, իր մահկանացուն կնքեց յետեղեանի սփիւռփայ տաղանդաւոր գրագետներից՝ Վազգէն Շուշանեանը:

*Շուշանեանի օրագրերէն եւ պատմուածքներէն Հանուած մէջբերումներու օգտագործումով՝ վերի մուտքին վրայ կենսագրական եւ գրական քանի մը բնորոշ կողմեր աւելցնելէ ետք, Գրիգորեան կը գրէ՝*

Վազգէն Շուշանեան մեծ հայրենասէր էր, անսահմանօրէն մտքառու իր հայրենիքին, ժողովուրդին, նրա մշակոյթին, գրականութեանը, լեզուին. «Հայոց լեզու որքան կը սիրեմ քեզ, գրում էր մա: ... Հաւատարմութիւնը, որ կը զգամ քեզի հանդէպ աւելի գորաւոր է քան մեր այս երկրի կեանքը: Կուզեմ քեզ տրվիլ, մինչեւ վերջին վայրկեանը, - քու յետին շնչոներդ ու քու յետին բառերդ: Քու ներքին երածշտութիւնդ ու քու գծած ձեւերդ՝ պատմութեան մէջ: Դուք որ մեր ազօրքն ես ու մեր հանոյքը, - հայոց լեզու, կը սիրեմ քեզ»:

*Շուշանեանէն մէջբերուած այս դիպեցիկ պոռթկումը, որ առաջին անգամ լոյս ածուաւ «Նայիրի» շաբաթաթերթին (Գ. Տարի, Թիւ 8) մէջ, ոչ նուազ շահեկան ծննդոց մը օւնի: Եւ որովհետեւ ստեղծագործութեան մը վայելքը, Հասկացողութիւնը, որով նաեւ արժէքը ամբողջական դարձրենքու Համար նոյնքան կարեւոր են անոր կապուած ժամանակն ու պարագան, մեր ընթերցողներուն Համար կ'արտագրենք Գրիգորեանի կողմէ յապաւուած մասը...*

4 Փետրուար 1940, Փարիզ

Պատիկ լուր մը, որ մեծ համոյք մը կը պատճառէ ինձ: Զուարթութեամբ տուն կը վերադառնամ: Երբեմն, ցատկելով ու խնդալով ինքս ինձ վրայ, երջանկանալով:

ԼԵԶՈՒԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

**Թ Ի Ի Ր Ն Ո Ւ Թ Ե Ր Ի Ն**

Ուղղագրական ֆառսի մը վերածուելու վրայ է հայերէնը, Հայաստանի թէ Արտասահմանի մէջ: Եթէ հոն, Երկրին մէջ, բըն-նութեան իրաւակարգն է, որ դասական ուղղագրութեան դէմ պաշ-տօնական հերձուածով մը ուղիղ գրել չի տար հայերէնը, հոս, Սփիւռքի մէջ, սանձարձակ ազատութիւնն է այս անգամ, որ տու-նը կը ֆանդէ մեր լեզուին, ուղղագրական տեսակետով: Այսպէս, բունութեան եւ ազատութեան միջեւ տարօրինակ զինակցութիւն մը կնճռած ըլլայ կարծես, տասնամեակներէ ի վեր, ընդդէմ ՄԵԾԱՍ-ՔԱՆՁԻՆ:

Այս խորապէս մտանգիչ երեւոյթին առջեւ, ԲԱԳԻՆ, որ Սփիւռքի մեր պարբերական մամուլին ամէնէն տարածուն հրատա-րակութիւնն է այսօր եւ ընթերցողներու կարեւոր թիւ մը ունի ա-մէն գաղութի մէջ, ի պաշտպանութիւն Մեծառեանչին, իր ներկայ թիւէն սկսեալ լեզուական բաժին մը կը հաստատէ:

ԲԱԳԻՆ այդ բաժինը կը բանայ Բ. Թաշեանի մէկ կարգ գը-րութեամբ՝ Թ Ի Ի Ր Ն Ո Ւ Թ Ե Ր Ի Ն խորագրին տակ:

*Անուշաւան վրդ. Չղջանեան սառն-մին հատորով ալ հրատարակեր է իր ըն-դարձակ մենագրութիւնը՝ ի մասին Հը-րաչեայ Աճառեանի «Լիակատար Գերա-կանութիւն» գործին:*

*Վարդապետը քեր կամ դէմ կարծիք-ներ յայտնած չէ, ո՛չ ալ դիտական վեր-լուծման ենթարկած է գրուած հարցե-րը: Իր ըրածը պարզապէս վերաբող մըն է, ամփոփում մը, «կարճ ի կարճոյ» ներկայացնել նիւթը: Ատիկա կրնայ օգ-տակար ըլլալ միայն անոնց, որոնք չեն կրցած կարդալ հանդուցեալ ակադեմի-կանին կոթողական գործը, արդիւնք՝*

*բազմամեայ աքնաջան աշխատանքի եւ համբերատար պրպտումներու:*

*Չիս անմիջօրէն հետաքրքրողը Չղջ-ջանեան վրդ.ի դրբին այն մասն է, ուր մեղանչումներ կան մեր լեզուին հիմ-նական կանոններուն դէմ: Այսպէս՝ Հոգչ. վարդապետը «վերջ» կը դրածածէ միշտ, փոխանակ «ետք»ի: Կը գրէ, օրէ-նակ, աւարտելէ վերջ, աշակերտելէ վերջ, տեղ մըն ալ՝ որոշելէն յետոյ: Այս երեք մակբայները, - վերջ, ետք, յետոյ, - թէեւ երեւութապէս համահիշ եւ նոյնիմաստ, բայց իրարու տեղ չեն կրնար դրածածուիլ: Ձեռք կրնար ըսել*

կարգալէ վերջ կամ կարգալէ յետոյ պէտք է ըսել ու գրել կարգալէ ետք:

Տեղ մը (էջ Թ.) Ձղջանեան վրդ. կը գրէ. «1898-ին կը մասնակցի Փարիզի մէջ դումարուող Արեւելագէտներու 11րդ համագումարին»: Երկու սխալ՝ երկու տողի մէջ: «Գումարուող» ներկայ ժամանակ է, իսկ 1898-ը անցեալ է, եթէ չեմ սխալիր: Զիշտ պիտի ըլլար գըրել «1898-ին ...գումարուած» եւ ո՛չ թէ «գումարուող»: Ասկէ զատ՝ ինչո՞ւ պէտք է գրել «Արեւելագէտ», զլխագրով: Յատուկ անո՞ւն է «արեւելագէտ»: Յատուկ անո՞ւն պէտք է նկատել ուրեմն լեզուագէտ, հայագէտ, հայերէնագէտ, մասնագէտ, չափագէտ, գրագէտ եւ նըման բառերը: Իսկ եթէ ուզենք հասարական իմաստ մը տալ ինդորոյ առարկայ բառին, այն ատեն պարտուոր ենք գրել «Արեւելագէտներու փԱ. Համագումար»:

Կարդանք սա՛ տողն ալ (էջ Թ.) «Կիսամեայ մը աշակերտելի վերջ Հիւպըլմանին»: Հոս երեք սխալ՝ հինգ բառի մէջ: Նախ՝ անականը գործածուած է իբրեւ գոյական: «Կիսամեայն» անական է, գոյականը «կիսամեակ» է: Ներելի է գրել «կիսամեայ հանդէս», «կիսամեայ շրջան», բայց ներելի չէ գրել «կիսամեայ մը աշակերտել»: Երկրորդ, ինչպէս ըսինք արդէն, վերջը եւ ետքը իբրբու տեղ չեն կրնար գործածուիլ եւ զիբար չեն կրնար փոխարինել, որքան ալ նոյնիմաստ թուին այս երկու բառերը: Երրորդ՝ կարելի չէ ըսել «Հիւպըլմանին»՝ պէտք է ըսել Հիւպըլմանի, առանց նու. յօդին:

Ուրիշ ընդհանրացած սխալ մըն է գրել «ամենուրեք»: Ձղջանեան վրդ. կը գրէ. «...ամենուրեք արծարծելով հայագիտութեան սէրը» (էջ Թ.): Ըստ կանոնի՝ պէտք է գրել ամենուրեք, էով, իւ ո՛չ թէ ամենուրեք, եւով: Երբ ամենով բարդուելիք բառը ձայնաւոր գիրով մը սկսի, ամենը կը մնայ անփոփոխ: Օրինակ՝ ամէնրիսի, ամէնօրհ-

նեալ, ամէնուոյց, ամէնիմաստ. մնացած բոլոր «արագաներուն» ամէնին էն էլի կը փոխուի, ինչպէս՝ ամենակալ, ամենագէտ, ամենատես եւայլն: Վարդապետը ուրիշ տեղ մըն ալ գրած է «ամենօրեայ», փոխանակ գրելու «ամէնօրեայ»:

Ձղջանեան վրդ. կը գրէ գարձեալ. «...մատաղ Հոգիներէն ներս» (էջ Թ.): Այս բարբարոսութիւնը՝ Յերս տունտեղ եղած է մեր լեզուին մէջ (քիչ մնաց, որ ես ալ գրէի լեզուէն ներս): Ուրիշներ ալ կը գրեն կեանքէն ներս, գրականութենէն ներս, յիշատակներէն ներս, արուեստէն ներս: Վերջ տուէք այս բարբարոսութեան, վեղարաւոր եւ անվեղար զպիբներ, եթէ կ'ուզէք, որ Օլականի Սուրբը խաղաղութեամբ ննջէ իր գամբարանէն ...ներս:

Հոգնոր վարդապետը կը գրէ. «...Անտան լեզուարանի յատուկ նոյն խղճարութեամբ...» (էջ Ժ.): Ի՞նչ խղճարութեան մասին է խօսքը. սո՛րբ մը գործուած է. ո՛չ: Ինչո՞ւ ուրեմն լեզուարանը ...խղճարութիւն պիտի ըզգայ: Պարզ է, որ «խղճարութիւն» բառը սխալ է, եթէ տպագրական վրէպակ չէ անշուշտ: Զիշտ պիտի ըլլար գըրել «լեզուարանի յատուկ նոյն խղճմըտութեամբ» կամ բարեխղճութեամբ:

Դարձեալ Ձղջանեան վարդապետն է գրողը. «...մանրազնին ջննութեան կ'ենթարկէ» (էջ Ժ.): Մեզ հետաքրքրողը ջննութեան ենթարկուած հարցը չէ, այլ «մանրազնին» բառն է, որ սըխալ է իր այս ձեւին մէջ: Ձննել բայը երկու նուով կը գրուի, այո՛, բայց մանրազնինը կը գրուի մէկ նուով: Նոյնն է պարագայն նաեւ ջննել բային համարարմատը ջնին է, ինչպէս զննելին արմատը զնին է, ուստի՝ արմատը պէտք է նկատի առնել բարդումի ատեն եւ գրել մանրազնին, մանրաջնին, մէկ նուով:

Նոյն էջին վրայ կը կարդանք. «Նոյնըան անծանօթ որեւէ մէկ լեզու մը...»: Այստեղ գործածուած երեք «ա-



նորոշութիւններէն երկուքը աւելորդ են եւ անտեղի: Կրնայինք ըսել - եւ պէտք է ըսէինք - որեւէ չեզու. Մէկը եւ մըն ո՛չ օսաստկացուցիչ են, ո՛չ ալ որոշիչ. ուստի՝ աւելորդ են, սխալ են:

Նման սխալ մը կայ նաեւ օտ նախադասութեան մէջ. «Մէկ անձի մը հաստքի եւ մեղուաջան աշխատանքի արդիւնքը եզոզ...» (էջ ԺԳ.): Ճիշդ պիտի ըլլար գրել «անձի մը հաստքին (նուով) եւ մեղուաջան աշխատանքին (նուով) արդիւնքը»: Եզոզն ալ թրջարանութիւն է:

Ուրիշ տեղ մը (էջ 17) վարդապետը կը գրէ. «Կը տառապի լրջութենէ»: Ի՞նչ ըսիք: Մարդ կրնայ տառապիլ յոռի բանէ մը կամ հիւանդութենէ մը, իսկ լըրջութիւնը ո՛չ յոռի բան մըն է, ո՛չ ալ մանաւանդ հիւանդութիւն է, որպէսզի

սկսինք նաեւ... լրջութենէ տառապիլ: Այո՛, արդարեւ, ես չեմ ճանչնար մէկը, որ լրջութենէ տառապի, բայց կը ճանչնամ շատեր, որոնք կը տառապին լըրջութեան պակասէ: Եթէ վարդապետը իրապէս լրջութենէ կը տառապի (եւ ո՛չ թէ լրջութեան պակասէ), մեղքը՝ վիպը...:

Սխալ մըն ալ կայ յաջորդ էջին վըրայ. «Պէտք չէր չարաչար գործածուեր»: Կրնանք գրել «չէր գործածուեր», բայց չենք կրնար գրել «պէտք չէր գործածուեր»: Ճիշդը՝ «պէտք չէր (որ) չարաչար գործածուէր»:

Ուզողը կրնայ քերականութեան դասարիք մը առնել եւ սորվիլ կանոնը: Ինձի կը մնայ վերջակէտ մը գնել հոս եւ փակել այս թիւրմ ու թերիմ:

Բ. Թ.

ՄԵՐ ԳՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐՅՈՒՆՆԵՐԹԵՐԸ

« Ծ Ի Լ Ե Ր »

Առաջին թիւը 1961-62 դպրոցական տարեշրջանին, խմորատիպ, մեծածաւալ 36 էջերով: Ապա երկու թիւեր, տպագրւած, մէկը 36 էջով, միւսը 52 էջոց. որոնց վրայ, գոթախտաբար շկայ ոչ թիւ, ոչ թուական:

Ուշագրաւ՝ բոլոր թիւերն ալ, հոն երեւցող սղիով, հայերէնի պապակով, յարգանքով, սէրով եւ դուրսդուրանքովը հայեցիին, հայուն մշակութային հարստութեանց վրայ:

Ուշագրաւ նաեւ՝ երբեմն, դիտելու սուր կարողութիւններով, զբաղական դեղեցիկ սողերով, արտայայտութիւններով: Հ. Գոնապապեանի «Մահու ապրանք»ը շատ աւելի հատուցութիւն կը պարունակէ քան ժա. դասարանի ուղեկրահն, կամ աշակերտուհիէն կտրելի է սպասել: Ու նաեւ ճշգրիտ դիտողութիւններ՝ սպրուածի վերարտադրումի տպաւորութիւնը ձգող սողերով հարուստ:

Կամ այլ թիւի մը մէջ, Մովսէս Պապեանի «Ես կուլայի, մայրս կը խնդար»ը՝ մանկական սպրուաներու այնքան հարազատ վերարտադրութեամբ. կամ Երուանդ Աւագեանի «Լեղի ժպիտ»ը, արգիական սպրուաներու արդիական ազուր արտայայտութեամբ կտորը. կամ Աւետիս Զարիկեանի «Համեմատութիւն»ը, իմաստով գրուած, սպրուած էջերը:

Բոլորն ալ կը յաջողին դուրս դալ շարագրութեան սահմաններէն ու սպրուած պահ մը, դէպք մը, երեւոյթ մը բռնել եւ ներկայացնել կենդանութեամբ, բնականութեամբ:

Պատիկ ու անցողակի ճիշտ են արդեօք միայն, թէ ոչ յարատուամը պիտի դայ հասունցնելու գիրքնք, խորացնելու, լայնցնելու իրենց հորիզոնը, մղելու որ պեզեն անձը ու լոյս աշխարհ բերեն աւելի մնայուն արժէքներ:

Կեանքը, արիները ցոյց պիտի տան ասիկա: Կատարուածը ուրախութիւն մըն է արդէն, թէ՛ իրենց համար, թէ՛ ընթերցողին:

« ԱՆԱՀԻՏ » ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ



Արախուսեամբ կ'իմամանք թէ 1961 տարեշրջանի ԱՆԱՀԻՏ գրական մրցումակը տրուած է մեր ամսագրին աշխատակից բանաստեղծ: Ար. Երկաթին, ի գնահատութիւն իր «Քերթուածներ» անունով հատորին:

## **ՅԱԶՈՐԿ ԹԻՒՈՎ**

Քացի ՎԱՐԴԱՆ ԳԷՈՐԳԻԱՆԻ (*=Վ. Գ.*) «Հայ Գրական Աժուհ, Վեր-  
ջին Քառասամեակին» եւ միւս շարունակելի գրութիւններէն, պիտի տանք  
նաեւ, մեր խմբագիրներէն՝ Պ. Սնայանի ապրումով հարուստ ուղեւորա-  
կան մէկ գրութիւնը՝ - ԲԱՂԱՔԸ:

## **ՄԷԿ ՏԱՐՈՒԱՆ «ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

Պրն. Գառնիկ Գազանեան, Պէյրութէն,  
*Պրն. Տիգրան Արապեանի, Պէյրութ:*

Շնորհակալութեամբ ստացանք 5 տուարի նուէր մը Պրն. Վարդան  
Կառարեանէ (Մ. Նահանգներ):

## **ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԴ**

● Մեր յարգելի բաժանորդներուն կը տեղեկացնենք, որ «Բագին»ի  
Պէյրութի շրջանի գամմիչն է Պր. ՊԵՏՐՈՍ ՊԱՍՏԸՐՄԱՃԵԱՆ, իսկ Անդր-  
տաիրի շրջանին՝ Պր. ՅԱԿՈՒ ՄԻՆԱՍԵԱՆ:

Կը խնդրուի նկատի ունենալ եւ փութացնել վճարումները:

● Հալէպի մեր բնդհանուր գործակալն է Պր. Զուէն Սապունեան:  
Սուրբոյ մէջ, «Բագին»ի բաժնեգինն է 22 Ս. Ոսկի, որ պէտք է վճարուի  
մեր գործակալին:

## **ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ**

**ED. BOYADJIAN**  
**B. P. 1153**

Հեռագրակի թիւ 256078

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ  
ՀԱՏԱՎԱՅՈՒ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.—

**DIKRAN KOUYOUMDJIAN**

**P. B. 587, Beyrouth - Liban**